ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**75**-րդ տարի) **Թիվ-1** (1647) — *Հունվար 2021*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Պարտության գաղափարախոսության ժամանակավոր հաղթանակը (էջ 1-2)

2- Հարցազրույց

Հարցազրույց ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանի հետ

Պիտի գայ պահը վերականգնելու Արցախի իրաւունքներն ու ամբողջական սահմանները (էջ 3-7)

3- Քաղաքական

Արա Նռանյան

Սպանել ստրուկին (էջ 8-10)

4- Տարածաշրջանային

Վարդան Հակոբյան

Հարավային Կովկասը բարձր լարման տակ (էջ 11-14)

5- Աշխարհաքաղաքական

Արմեն Պետրոսյան

Թուրքիան, որպես անվերահսկելի սպառնալիք, միջազգային անվտանգությանն ու խաղաղությանը (էջ 15-21)

6- Հասարակություն

Գևորգ Ղուկասյան

Արդիականացումը որպես քաղաքական ճգնաժամի հաղթահարման գրավական: Դաշնակցության դերը (էջ 22-23)

7- Տնտեսական

Սուրեն Պարսյան

Թուրքական ապրանքների փոխարինման այլընտրանքային հնարավորությունները (էջ 24-25)

8- Պատմության լուսարձակ

Արմեն Ասրյան

Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի կերպարը ներկա պահի հրամայական պահանջ (մահվան 102-րդ տարելիցի առիթով) (էջ 26-29)

Անի Մելքոնյան

Արամ և Ռոստոմ (էջ 30-33)

Դերենիկ Մելիքեան

ՀՅ Դաշնակցութիւնը եւ Պարսկաստանի Սահմանադրական շարժումը (2-րդ եւ վերջին մաս) (էջ 34-39)

9- ՀՅԴ ծննդյան 130 և հայրենիքում վերընձյուղման 30-ամյակներ

Կարօ Վ. Մանճիկեան

130-ամեայ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը (էջ 40-42)

10- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն

Եթէ պիտի ըլլանք արժանի... (էջ 43-44)

Պարտության գաղափարախոսության ժամանակավոր հաղթանակը

2021 թվականի հունվարի 11-ին Մոսկվայում տեղի ունեցած Պուտին-Փաշինյան-Ալիև հանդիպման ժամանակ օրակարգի՝ առաջնային լուծում պահանջող հարցը պետք է ունենար հումանիտար բնույթ և վերաբերեր, առաջին հերթին, գերիների վերադարձին: Բանակցությունների նախօրյակին Հայաստանի վարչապետը նշեց, որ հենց այս հարցը լուծելու համար է մեկնում Մոսկվա, սակայն չկարողացավ կատարել իր առջև դրված խնդիրը: Սրանով հանդերձ՝ առանց առարկության ստորագրեց մի փաստաթուղթ, որը բխում էր մյուս երկու կողմերի շահերից և, ըստ էության, կազմվել էր Մոսկվայի ու Բաքվի փոխպայմանավորվածությունների հիման վրա: Ալիևը, օրինակ, ինչպես պատերազմի օրերին, այնպես էլ դրանից հետո դրսևորում է ինքնուրույն կեցվածք՝ յուրաքանչյուր առաջարկի հարցում պաշտպանելով և առաջ մղելով իր սեփական շահերը: Ի դեպ, այս դեպքում էլ ակնհայտորեն կեղծելով իրականությունը, նա հայ գերիներին ներկայացնում է որպես դիվերսանտների և, բարդացնելով հարցի լուծումը, ցանկանում է նրանց վերադարձնելու դիմաց հայկական կողմին պարտադրել նորանոր զիջումներ: Պատերազմից հետո քաղաքական խրտվիլակի կարգավիճակում հայտնված Հայաստանի վարչապետը, ամեն օր հակառակորդ կողմից ծաղրանքի ու արհամարհանքի արժանանալով, ըստ էության, նրա համար է միայն բանակցությունների մասնակցում, որպեսզի գլուխը կախ ստորագրի այն, ինչ կդնեն իր առջև: Ինչպես գիտենք, նույն կամակատարությամբ և, այսպես կոչված, բանավոր պայմանավորվածությունների շրջանակում սեփականելով պետական մի քանի ինստիտուտների լիազորությունները, նույն պատասխանատու անձը Հայաստանից տարածքներ է հանձնում Ադրբեջանին:

Արտաքին աշխարհի համար լինելով վարկաբեկված ու արժեզրկված առաջնորդ, համընդհանուր մերժման դատապարտվելով իր երկրի ներսում և փաստացի կորցնելով քաղաքական հեռանկարը, անգամ հանրության հետ շփվելու բարոյական ու ֆիզիկական հնարավորությունը՝ հեղինակազրկված ղեկավարը մնում է կառչած աթոռից: Նա խոսում է ապագայի ծրագրերից՝ պատրանք ստեղծելով, թե ամուր կանգնած է իր տեղում և տիրապետում է իրավիճակին, ինչպես և փորձում է օրակարգեր թելադրելով քաղաքական-պետական համակարգերի քթից բռնած երկիրն ուղղորդել ըստ իր սցենարների: Ինչպես անցած գրեթե երեք տարվա ընթացքում, այնպես էլ այս ողբերգական ժամանակահատվածում նրան բացարձակապես չեն հուզում ոչ հասարակական տրամադրությունները, ոչ երկրի առջև ծառացած ճակատագրական հիմնահարցերը. նրա թիվ մեկ խնդիրը եղել և մնում է իշխանությունը պահպանելու հարցը:

Մակերեսային ընկալմամբ հանրությանը թվում է, թե Նիկոլ Փաշինյանի դիրքերն այնքան ամուր են, որ վերջինիս հրաժարականի պահանջը ներկայացրած ազգային, պետական, հոգևոր, քաղաքական, մտավորական, մշակութային, գիտական և այլ շրջանակներ, ինչպես և այդ պահանջին հետամուտ հանրությունը ի զորու չեն հասնելու իրենց պահանջի կատարմանը: Իրականում իր պատմության դժնդակ ժամանակներն ապրող Հայաստանում բարոյալքումը, պարտվողականության քաղաքականությունն ու դավաճանության դրսևորումներն ունեն համակարգային բնույթ: Երկիրը ծնկի բերած և նրա անկման ընթացքն առաջնորդող ղեկավարի հետ են ապազգային խորհրդարանը, կառավարությունը, վարկաբեկված, անկարող ղեկավարին պաշտպանելով նրա հետագա ազգակործան գործունեությունն ապահովող ուժային կառույցների ղեկավարները: Տևական ժամանակ տարբեր գործիչների դեմ հարուցվող մեղադրանքները և դրանց հիմնավորվածությունը մերժող դատական վճիռները փաստում են, որ երկրի դատախազական ինստիտուտը ևս դարձել է քաղաքական մրցակիցներին ռեպրեսիաների ճանապարհով չեզոքացնելու, հավասարակշռությունը կորցրած վարչապետի պատվերները կատարող կույր գործիք: Կասկածից վեր է, որ մոտ ապագայում իրենց պաշտպանյալի կողքին ու թիկունքին կանգնածները պարտավորված են լինելու ապացուցել, թե արդյոք իրենց հանցակցությունը դավաճանական հիմքեր չունի՞, սակայն սրա մեջ մխիթարական քիչ բան կա, որովհետև նրանց կոնկրետ գործունեության հետևանքով Հայաստանն ամեն օր չափաբաժին է կորցնում իր անկախությունից, Արցախի ներկան ու ապագան դառնում են դժվարշտկելի, և երկիրը գնում է դեպի թուրք-ադրբեջանական լրջագույն կախվածության:

Ակնհայտ է, որ իշխանության պահպանումը Փաշինյանի հիմնական հնարավորությունն է՝ խույս

տալու անխուսափելի պատասխանատվությունից, սակայն սեփական ժամանակի երկարաձգումը ունի ոչ պակաս կարևոր նպատակներ, որոնց կատարման պահանջը հավանաբար դրված է նրա առջև: Ինչպես ականատեսն ու վկան եղանք, պատերազմական շրջանում և դրանից հետո կոնկրետ ուժեր այս հակամարտության մեջ հետապնդում էին իրենց սեփական որոշակի շահերը: Այդ շահերը շատ են, բայց եթե հիմնական մի քանիսին անդրադառնանք, ապա գլխավոր խնդիրների թվում են Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելը, ինչպես և իրանական սահմանին իշխելը: Երկրորդ նպատակն իրագործված է, իսկ առաջինը թեև չի հաջողվել, սակայն հետապնդվում է նույն փաշինյանական հակառուսական ուժի և հակառուսական համախոհ շրջանակների միջոցով: Եթե հաջողվի Փաշինյանին իր աթոռին պահել այնքան ժամանակ, որ նա հասցնի, այսպես կոչված, բարեկամության ու համագործակցության պայմանագրեր կնքել թուրքերի ու ադրբեջանցիների հետ՝ շրջանցելով ռուսական գործոնը, ապա Ռուսաստանը կարող է դուրս մղվել կովկասյան գործերից և տարածաշրջանից: Պատահական չէ, ի դեպ, որ Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո նրա թիմին մաս կազմող, ինչպես և համախոհ շրջանակների կողմից սկսեց արծարծվել ռուսական զինված ուժերը Հայաստանից դուրս բերելու հարցը, և ձեռնարկվեցին գործնական քայլեր ռուսական ազդեցությունը Հայաստանում նվազեցնելու ուղղությամբ՝ այդ թվում ուժային կառույցներում: Հենց այս ծրագիրն էլ նկատի ուներ 2018 թվականի հոկտեմբերին Հայաստան այցելած ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնը, ով նոր իշխանություններին խորհուրդ էր տալիս հրաժարվելու պրոռուսական և պրոիրանական քաղաքական նախասիրություններից և կողմնորոշումը փոխելու դեպի Ադրբեջան ու Թուրքիա: Ավելի քան պարզ է նաև, որ որպեսզի Թուրքիան և Ադրբեջանը համաձայնեին «բարեկամանալ» Հայաստանի հետ, անհրաժեշտ էր լինելու կատարել նրանց մի շարք պայմաններ և, առաջին հերթին, հրաժարվել Արցախից: Ինչպես կասեր Լևոն Տեր-Պետրոսյանը, ով նախանիկոլական քսան տարիներին աղաղակում էր թաթար-մոնղոլական ներխուժման մասին, իսկ այս «յուրահատուկ» ժամանակներում համեստ լռություն է պահպանում, պետք է «ամեն գնով հասնել խաղաղության»: Թեև նրա փոխարեն Նիկոլին կրծքով պաշտպանում է վերջինիս գաղափարական մյուս ուսուցիչը՝ Ժիրայր Լիպարիտյանը:

Մենք՝ ցավով, իսկ նրանք ուրախությամբ կարող են արձանագրել, որ բոլշևիկներից հարյուր տարի անց Հայաստանում կրկին հաղթանակեց ազգային մտածողության պարտության և թուրք-ադրբեջանական տարրի հետ եղբայրության ջատագով քաղաքական հոսանքը: Այժմ հայկական կողմը կատարել է թշնամու գլխավոր պահանջը, այլ պահանջների կատարման համար հիմքեր են նախապատրաստվում ազգային-հոգևոր ինստիտուտների և գործիչների մեկուսացման, կրթական գիտական ծրագրերի վերանայման և այլ ճանապարհներով: Եվ ինչ, մեր ոխերիմ հարևանները գրկաբաց մե՞զ են սպասում, թե՞ արցախյան ցեղասպանությունից գրգռված երախով այժմ էլ ագրեսիվ հավակնություններ են դրսևորում Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Հիշենք, որ պարտության նույն գաղափարական հոսանքը երկու տասնամյակ առաջ դարասկզբի ազգային-ազատագրական պայքարի ուժին էր մեղադրում ինքնապաշտպանական գործունեության պատճառով ցեղասպանությունը հրահրելու մեջ: Նիկոլ Փաշինյանն ու իր նեոբոլշևիկ թիմը պարտության և թուրք-ադրբեջանական կողմնորոշման նույն գաղափարախոսության կրողներն են, և, ինչպես չար լեզուներն են հիմնավոր կասկածներ ներկայացնում, նրանց հաջողվել է զուգորդել ցանկալին ու շահավետը՝ երկիրը ծախել և կոնկրետ օգուտներ ստանալ: Սա, իհարկե, դեռևս կասկած է, որը հիմնավորվում է մի շարք աղաղակող փաստերով՝ սկսած ազգակործան պատերազմի մեջ ներքաշվելուց մինչև խայտառակ պարտությունը և դրանց հետևած զանազան բացահայտում-մեղադրանքները, որոնք այդպես էլ չեն հերքվում: Անհասկանալի են մնում պատերազմին հետևած անտրամաբանական զիջումները, Մեղրիով թշնամուն ճանապարհ տալը, անարձագանք թողնելը զանազան պահանջներն ու հայհոյանքները, որոնք սովորաբար բնորոշ են ստորացնողի և ստորացվածի հարաբերություններին: Եթե ոչ հիմա, ապա գարնանը կսկսվի քաղաքական ջրհեղեղը, որից հետո ջրի երես դուրս կգան բոլոր հարցերի պատասխանները: ■

Պիտի գայ պահը վերականգնելու Արցախի իրաւունքներն ու ամբողջական սահմանները

Հարցազրոյց ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանի հետ

-Ընկեր Յակոբ, այս հարցազրոյցով պիտի ուզէինք կատարել անցնող տարուայ ընդհանուր ամփոփումը, սակայն մեր երկրին ու ժողովրդին պատուհասած ողբերգութիւնը, ցաւոք, թելադրում է կենտրոնանալու որոշակի իրադարձութիւնների վրայ: 2020 թուական մուտք գործեցինք, երբ Միջին Արևելեան մեր համայնքները կ'անցնէին բազում ցնցումներից և հայութեան կողմից շարունակւում էր այդ բեռը ինչ որ չափով թեթևացնելու ջանքը: Աւելի մեծ հոգսեր ու անելիքներ պարտադրեց թագաւարակը: Իսկ արդէն աշնանը գլխներիս պայթեց թուրք-ադրբեջանական տանդէմի հրահրած պատերազմը: Բնականաբար լարուած ճիգ ու ջանքի տարի եղաւ կուսակցութեան համար: Անշուշտ ողջ արուածը ներկայացնելու համար ասելիքը շատ ծաւալուն կարող է ստացուել, այնուամենայնիւ, եթէ հնարաւոր է ընդհանուր գծերով ներկայացրէք ՀՅԴ նախաձեռնած և իրականացրած աշխատանքները:

ՅԱԿՈԲ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.- Այո, 2020ը եղաւ պատուհասներու տարի: Այս տարին մուտք գործեցինք լիբանանեան տնտեսական զարգացող տագնապին և Սուրիոյ մէջ յամեցող պատերազմի հետևանքներու առթած վնասը դիմակայելու և այդ երկու երկիրներու մեր կարևոր համայնքներու բեռը թեթևցնելու վճռակամութեամբ: Վրայ հասաւ թագաժահրի համաճարակը, որ ցնցեց միջազգային տնտեսութիւնը և մեծապէս խանգարեց մարդկութեան առօրեան: Օգոստոսին պատահեցաւ Պէյրութի նաւահանգիստի պայթումը, որ կրկին ցնցեց լիբանանահայութիւնը: Եւ տարին փակեցինք մեր նորագոյն պատմութեան մեծագոյն պարտութեամբ, երբ կորսնցուցինք Արցախի Հանրապետութեան մեծ մասը և համայն հայութիւնը մատնուեցաւ սուգի, յուսահատութեան և զայրոյթի: Հողային մեծագոյն կորուստներու կողքին մեր սրտերուն վրայ կը ճնշէր նաև հազարաւոր թանկագին նահատակներու և վիրաւորներու պարագան, որ ոչ պակաս չափով ողբերգութիւն էր մեր ժողովուրդին համար:

Մեր ազգային կեանքն ու առօրեան պատուհասած այս անակնկալ պատերազմէն անդին, 2020 թուականը մեզի և մեր հաւաքական կեանքի համար խիտ ծրագրումներու և լարուած աշխատանքի տարի էր: Տեղի ունեցած իրադարձություններէն մի քանին յիշելով՝

2020ի գարնան տեղի ունեցան Արցախի խորհրդարանական և նախագահական ընտրությունները և հայոց երկրորդ հանրապետութեան մեջ ձևաւորուեցաւ նոր իշխանութիւն. ՀՅԴն ունեցաւ ԱԺի մէջ պատգամաւորական նոր խումբ և հակառակ յաղթող կողմի գործադրած խախտումներուն և պետական միջոցներու շահագործման բազմաթիւ պարագաներուն, որոշեցինք ընդունիլ արդիւնքը

Արցախի կայունութեան և անվտանգութեան հրամայականները նկատի առնելով,

- որպէս երկարատև ու հետևողական աշխատանքի արդիւնք, Ցեղասպանութեան 105րդ տարելիցը յատկանշուեցաւ ԱՄՆ Քոնկրէսի 2 պալատներու կողմէ Ցեղասպանութեան ճանաչումով: Նոյնպիսի ջանքերու շնորհիւ Ցեղասպանութիւնը ճանչցաւ նաև Սուրիոյ խորհրդարանը,

- անընդհատ թափով շարունակուեցան աշխատանքները Արցախի անկախութեան ճանաչման, ինչպէս նաև Հայաստանին ու Արցախին յատկացուող օգնութիւններու մեծացման ուղղութեամբ. անանխընթաց յաջողութիւն էր Ֆրանսայի Ազգային ժողովի և Ծերակոյտի Արցախի անկախութեան ճանաչումի անհրաժեշտութեան մասին ընդունած բանաձևերը,

- բազմաբնոյթ աշխատանքներու ծիրէն ներս, զգալի տեղ յատկացուեցաւ համավարակի յարուցած ընկերային-տնտեսական վատթար իրավիճակը մեղմելուն ուղղուած քայլերուն: Ծաւալուն այդ աշխատանքներուն մէջ կը տեղաւորուէր Հայաստանի կարիքաւոր ընտանիքներուն բաշխուող օժանդակութեան «Օգնիր հայրենակցիդ» ծրագիրը: Այս ծրագիրը գործադրուեցաւ ՀՅԴ համաշխարհային երիտասարդական կառոյցներու ջանքերով, և Հայաստանի ՀՅԴ ՆԱՌԻՄի և ՀԵՄի անմիջական գործադրութեամբ,

- Նոյն համավարակի, տնտեսական տագնապներու և Պէյրութի պայթումի աղէտին ենթարկուած Լիբանանի և Սուրիոյ հայութիւնն ալ հանդիսացաւ մեր ուշադրութեան կիզակէտը: Սուրիոյ պարագային անհրաժեշտ էր նաև շարունակել աշխատանքները պատերազմի պատճառած վնասները յաղթահարելու նպատակով: Կուսակցութեան կողքին, մեր երիտասարդական և ուղեկից միութիւնները, նամանաւանդ ՀՕՄն, անցան ժրաջան աշխատանքի՝ հասնելու տարաբնոյթ ցնցումներէ տուժած լիբանանահայութեան և սուրիահայութեան անմիջական կարիքներուն. խիստ գնահատելի էր նաև այն համահայկական զօրաշարժը, որ տեղի ունեցաւ հայրենի պետութենից, հայ եկեղեցւոյ

ու յարանուանութեանց և սփիւռքակեդրոն բոլոր համահայկական կառոյցներու կողմէ, որ կարողացան միլիոնաւոր տոլարներու օժանդակութիւն հասցնել լիբանանահայութեան,

- մշակուեցաւ յատուկ ծրագիր հայկական բանակին օժանդակելու վերաբերեալ և ի գործ դրուեցաւ յուլիսեան պատերազմէն ետք: Այդ ծրագիրը ընդարձակուեցաւ աշնան, Արցախեան պատերազմի ընթացքին,

- աշխատանքային ծրագիր ալ կազմուած էր Մոսկուայի և Կարսի պայմանագրերու 100րդ տարելիցին ընդառաջ. աշխատանք մը, որ կը շարունակուի այսօր ևս,

- Արցախի հարցի հետապնդման գծով նախատեսուած Հայ Դատի առցանց խորհրդաժողովը տեղի ունեցաւ 2020ի Դեկտեմբերին, քննարկելու համար պատերազմէն ետք Արցախի հարցի քաղաքական աշխատանքներու նոր ծիրը,

Միաժամանակ նշենք, որ նախատեսուած տարաբնոյթ աշխատանքներու մէկ բաժինը հնարաւոր չեղաւ իրականացնել թագաժահրի առթած սահմանափակումներու պատճառով, կամ ալ իրագործուեցաւ այլ ձևաչափով: Անոնցնէ գլխաւորներուն առանձին կ'անդրադառնանք:

ԴՐՕՇԱԿ.- Սոյն թուականի սեպտեմբերի 27-ին Արցախի դէմ լայնամասշտաբ յարձակումից ժամեր անց ՀՅԴ-ն յայտարարեց, որ կոչ է անում մէկ կողմ դնել ներքաղաքական տարակարծութիւնները և համազգային միասնութեամբ լծուել հայրենիքի պաշտպանութեան գործին: Հէնց ժամեր անց էլ Դաշնակցութեան առաջին վաշտը ճանապարհուեց մարտադաշտ, իսկ որոշ ժամանակ անց վերջինիս միանպատ էին կուսակցութեան միւս վաշտերը: ՀՅԴ-ի ներգրաւուածութիւնը չսահմանափակուեց այս, առանց այն էլ ծանրակշիռ դերակատարութեամբ: Ակտիւ աշխատանքներ են ձեռնարկուել զանազան բնոյթի օժանդակութիւնների կազմակերպման ու դրանց խրախուսման, զանգուածային միջոցառումների կազմակերպման, քաղաքական-դիւանագիտական և այլ ուղղութիւններով: Մի փոքր ներկայացրէք նաև այս աշխատանքը:

ՅՏԽ.- Պատերազմի բռնկումէն անմիջապէս ետք, ՀՅԴն, իր ուղեկից միութիւններով ու համակիրներով, ծաւալեց հայրենիքի օժանդակութեան լայն տարողութեամբ աշխատանք հետևեալ չորս ուղղութիւններով՝

ա.- **Մարդուժի տրամադրում.** 2016ի ընդհարումներուն արդէն յայտնի էր դարձած կամաւորական ջոկատներու կազմակերպման անհրաժեշտութիւնը. ուստի, մենք նախաձեռնեցինք պահեստազօր ստեղծելու գործին, որպէսզի մարզուած մարդուժ տրամադրենք հայոց բանակին երբ վտանգուին Հայաստանի ու Արցախի սահմանները: Այդ նախաձեռնութիւնը ապա ստացաւ «Կամաւորական Շարժում» հասարակական կազմակերպութեան հանգամանք և ՀՀ պաշտպանութեան նախարարութեան գործակցութեամբ թափ առաւ աշխատանքը: Սեպտեմբերի 27ին, թուրք-ազրպէյճան-վարձկաններ հրոսախումբի յարձակումէն անմիջապէս ետք, մեր վաշտերու պատրաստուած տղաքը՝ տարբեր խումբերով, մեկնեցան Արցախի ռազմաճակատ և բոլորին վկայութեամբ՝ այդ կամաւորները ունեցան պատուաբեր և խիստ կարևոր ներդրում Արցախի սահմաններու պաշտպանութեան մէջ: Տուինք բազմաթիւ զոհեր, որոնց յիշատակին առջև ակնածանքով կը խոնարհինք, և ունեցանք բազմաթիւ վիրաւորներ, որոնց բժշկական և ընկերատնտեսական կարիքները պարտինք կարգաւորել համակուսակցական ճիգով: Հրադադարէն ետքն ալ մեր տղաքը լծուեցան Սիւնիքի պաշտպանութեան գործին: Պահեստազօրի աշխատանքը կը շարունակուի այսօր ալ, որպէսզի միշտ ունենանք պատրաստ մարդուժ ի հարկին աջակցելու համար հայոց բանակին, մանաւանդ այս վերակազմաւորման շրջանին ընթացքին:

բ.- **Քաղաքական աշխատանք**. Մեծ թափ առին մեր մարմիններու, Հայ Դատի յանձնախումբերու և գրասենեակներու ճամբով տարուող քաղաքական շփումները և իրազեկման արշաւը: Արցախի ինքնորոշման իրաւունքի, անկախութեան ճանաչման արշաւը արձանագրեց լուրջ յառաջխաղացք մանաւանդ Եւրոպայի մէջ. աշխարհով մէկ բարձրացաւ բողոք՝ թուրք-ատրպէյճան-վարձկաններ հրոսախումբի պատերազմական ոճիրներուն, ցեղապաշտական հայատեաց դրսևորումներուն, փան-թրքական և նոր-Օսմանեան նկրտումներուն և միջազգային օրէնքներու ոտնահարումներուն դէմ. շարք մը երկիրներու մէջ նախաձեռնեցինք օրէնքներու կամ կառավարական որոշումներու նախագծեր կասեցնելու համար զինամթերքի հոսքը դէպի Ատրպէյճան. յատուկ յարաբերութիւններ մշակեցինք Մինսկի համանախագահող երկիրներու, ինչպէս նաև Իրանի և Եւրոպական միութեան՝ օրէնսդիր օղակի, գործադիր իշխանութեան և դեսպանութիւններու հետ. դատապարտեցինք Ատրպէյճանի և յատկապէս Թուրքիոյ դերը հայութեան դէմ սանձազերծուած հայատեաց ցեղապաշտական արշաւին և նոր-Օսմանեան ծրագիրներ առաջ քաշելուն մէջ. և վերջապէս՝ միջազգային քաղաքական շրջանակներուն բացատրեցինք Թուրքիոյ հարաւային Կովկասէն ներս թափանցելու ճիգերը և Արցախեան բանակցութիւնները կասեցնելու կործանարար դերը:

գ.- **Քարոզչական և ցուցական գործունէութիւն.** Ատրպէյճան և Թուրքիա աշխարհով մէկ կազմակերպեցին քարոզչական ապատեղեկատուական գրոհ, արդարացնելու համար իրենց յարձակողապաշտ միտումները. պատերազմի ամբողջ տևողութեան, և մինչև այսօր, կազմակերպուած սուտերով ողողեցին և կ'ողողեն միջազգային մամուլը, հեռատեսիլը, ձայնասփիւռի ալիքները, կայքէջերը և ընկերային ցանցերը ծաւալելով արհեստավարժ, համադրուած և մեծածախս քարոզչութիւն: Այդ գրոհին հակադարձելու և հայկական տեսակէտները ներկայացնելու համար, մեր բոլոր հնարաւորութիւններով կազմակերպեցինք բազմաշերտ արշաւ: Առաւել՝ շղթայազերծեցինք ցուցական արարքներ համաշխարհային մայրաքաղաքներու մէջ՝ Թուրքիոյ և Ատրպէյճանի դիւանագիտական ներկայացուցչութիւններու դիմաց:

Անհրաժեշտ էր մեր թշնամիներուն ցոյց տալ, թէ միակամ է աշխարհասփիւռ հայութիւնը և հաստատակամ՝ իր հայրենիքի պաշտպանութեան մտադրութեան մէջ բոլոր ճակատներու վրայ: Եւ հայութիւնը կարողացաւ իսկապէս բռնցքուիլ՝ մէկդի դնելով բոլոր ներքին տարակարծութիւնները որպէսզի նպաստէ պատերազմին յաջող ելքին:

դ.- **Հանգանակութիւններ**. Համահայկական հանգանակութիւնները մեծ յաջողութեամբ ընթացան ու աւելի փոքր տարողութեամբ դրամահաւաքներ այսօր ալ կը շարունակուին: Աշխարհասփիւռ հայութիւնը անմիջապէս արձագանգեց նիւթական ապահովելու Հայաստանի և Արցախի կոչին և տրամադրեց աւելի քան 170 միլիոն ԱՄՆ տոլարի գումար Հայաստան համահայկական հիմնադրամին: Հանգանակութեան նպատակը հասնիլն էր Արցախեան պատերազմի հետևանքով խնդիրներ դիմագրաւած զինուորականներու և կամաւոր ազատամարտիկներու բժշկական-ընկերային-տնտեսական-բնակարանային, ինչպէս նաև՝ անապաստան և անօթևան ընտանիքներու ապրուստի էական կարիքներուն: Անթոյլատրելի է անշուշտ, որ այդ գումարները յատկացուին այլ նպատակներու, պարզապէս ֆինանսաւորելու համար պետութիւնը: ՀՅԴն ժողովուրդին կոչ ուղղեց անվերապահ մասնակցելու այդ հանգանակութեան: Ուրախութեամբ նկատեցինք, որ աշխարհասփիւռ մեր մարմինները, միաւորները, ուղեկից միութիւնները (մանաւանդ ՀՕՄը), հաստատութիւններն ու համակիրները անվերապահօրէն կատարեցին իրենց «պարտք»ը և լայն բացին իրենց քսակները:

Այս բոլորը կատարուեցաւ հակառակ այն իրողութեան, որ Սեպտեմբերեան պատերազմին նախորդող մէկ տարուան ընթացքին այլ հանգանակային նպատակներու համար շարունակաբար դիմած էինք մեր ժողովուրդին՝ հասնելու համար Միջին Արևելքի, և մասնաւորաբար Լիբանանի ու Սուրիոյ տագնապահար հայութեան բազմաթիւ կարիքներուն:

Ինչպէս արդէն անդրադարձայ, այսօր ալ կը շարունակուին հանգանակութեամբ գումարներ ապահովելու աշխատանքները: Բնականաբար հիմա պիտի կեդրոնանանք Արցախի վերաբնակեցման ծրագիրներուն և Հայաստանի մէջ ապաստանած, թէ Արցախ վերադարձած անօթևան ժողովուրդին ընկերատնտեսական կարիքներուն վրայ:

ԴՐՕՇԱԿ.- Յայտնի է, որ պատերազմական օրերին, գործակցութեան նպատակով, շփումներ են եղել նաև Հայաստանի վարչապետի հետ: Միւս կողմից այսօր Դաշնակցութիւնը պահանջում է Նիկոլ Փաշինեանի հրաժարականը: Եթէ կարելի է անդրադարձէք և այս հարցերին:

ՅՏԽ.- Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը միշտ ձգտած է կապ պահել երկրի բարձրագոյն ղեկավարին հետ, որպէսզի կարծիքներու ուղղակի փոխանակում ունենայ, կարողանայ առաջին աղբիւրէն տեղեկութիւններ ստանալ և միաժամանակ փոխանցել իր տեսակէտներն ու կեցուածքները: Վարչապետի հետ երկար ժամանակէ ի վեր այդ հաղորդակցական կապը չկար, բայց պատերազմական օրերուն և անոր ճիշդ նախորդող շրջանին, մենք ունեցանք մի քանի հանդիպումներ, հիմնականին մէջ փոխանցելու համար մեր մտահոգութիւնները և լսելու պատերազմական զարգացումներու պաշտօնական վերլուծումը: Պատերազմի ընթացքին փոխանցած էինք նաև, որ հակառակ մեր ունեցած հիմնական տարակարծութիւններուն, մենք պատրաստ ենք այլ հարցերը մէկ կողմ դնել և կեդրոնանալ հայ պետականութեան և բանակի օժանդակութեան խնդրին վրայ, Արցախի պատերազմին ապահովելու համար հայութեան յաղթանակը: Վարչապետ Նիկոլ Փաշինեան մեր առաջին համդիպումներուն փոխանցած էր իր գնահատանքը, որ Դաշնակցութիւնը առաջին օրէն մարդուժով մասնակցած էր պատերազմին և նաև համահայկական-համաշխարհային առումով քաղաքական, քարոզչական և հանգանակային աշխատանք կը տանէր, որպէսզի հայանպաստ ելք ունենայ պատերազմը: Դժբախտաբար սակայն, այդ հանդիպումներու ընթացքին և անկէ դուրս՝ անկեղծ և ճշգրիտ տեղեկութիւններու փոխանցում չեղաւ իշխանութեան ներկայացուցիչներուն կողմէ, նոյնիսկ երբ այդ ներկայացուցիչները կ'ընդունէին, թէ իրավիճակը շատ աւելի վատ էր քան հրապարակային պաշտօնական տուեալները:

Մենք ալ, անդրադառնալով հանդերձ որ պաշտօնական տեղեկութիւնները չէին համապատասխաներ իրական կացութեան, ընդունելով նաև որ պատերազմական իրավիճակ էր և ռազմական դրութիւն գոյութիւն ունէր և պարտաւոր էինք չհակասելու պետական-պաշտօնական տեղեկատուութեանց, մնացինք զուսպ. անշուշտ շատ ծանր կը կշռէր մեր խըղճին վրայ այն հանգամանքը, որ հայկական կողմը ունէր բազմաթիւ զոհեր, մեծ թիւով վիրաւորներ և պատերազմի հայանպաստ ելք չէր ուրուագծուեր: Բան մը, որ կը ժխտուէր իշխանութեան կողմէ և կ'ըսուէր, որ մենք այլընտրանք չունինք՝ բացի պայքարելէ մինչև վերջ:

Պատերազմի ընթացքին ի յայտ եկան մեծ դժուարութիւններ՝ անկազմակերպ վիճակ, զօրակոչի անկանոն յայտարարութիւններ, քաղաքական անտեղի միջամտութիւններ և ռազմաճակատի վրայ լուրջ ձախողութիւններ: Մեզի համար անընդունելի էր այն իրողութիւնը, որ ունէինք բարձրաստիճան փոքրաքանակ սպաներ, որոնք որքան ալ տարակարծիք ըլլային այս իշխանութեան կեցուածքներուն նկատմամբ, իրենց պատրաստակամութիւնը յայտնած էին օժանդակելու պատերազմի գործողութիւններուն և իրենց ունեցած հեղինակութիւնն ու կարողութիւնը տրամադրելու հայ բանակին: Պատասխանը միշտ եղած էր նոյնը՝ կտրուկ մերժում: Ամենայնդէպս, արդիւնքը արդէն յստակ է, տակաւին պատերազմի ընթացքի մասին շատ մութ կէտեր կան, որոնց ակնարկած էր նոյնիսկ ԱՀ նախագահը իր ուղերձին մէջ և որոնք վստահաբար պիտի բացայայտուին:

Այս բոլորը ստեղծեց ներազգային շատ վատ մթնոլորտ: Պատերազմի աւարտէն ետք, երբ յստա-

կացաւ ազգային աղէտին տարողութիւնը, մեզի համար բացայայտ դարձաւ, որ որևէ ելք չկայ այս կացութենէն՝ բացի հող յանձնած և ծանր պարտութեան առաջնորդած Նիկոլ Փաշինեանի հրաժարականէն և այս իշխանութեան հեռացումէն: Պարզ է, որ պարտուած ու պարպուած վարչապետը, ամէն ինչ յանձնելու տրամադրութեան մէջ գտնուող անձը, ազգը սուտերով ապաղկոմնորոշած ղեկավարը չի կրնար որևէ հայանպաստ կեցուածք ապահովել միջազգային ուժերէն, կամ իսկապէս դիմադրել մեր թշնամիներուն՝ Թուրքիոյ, Ատրպէյճանի բոլոր նկրտումներուն. էական է վայրկեան առաջ փոխարինել զինք, որպէսզի ազգային գաղափարախօսութեան հիմքերով ամուր վարչապետ մը՝ շրջապատուած փորձառու և կարող ուժերով, ստեղծէ ատակ, ազգանուէր դէմքերով կառավարութիւն, ստանձնէ սանձը այս երկրին, կարողանայ յոյսը վերադարձնել մեր ժողովուրդին և ձեռք բերէ հայանպաստ արդիւնքներ չարաբաստիկ Յայտարարութեան անորոշ կէտերուն վերաբերեալ և ապագայ բանակցութիւններու ընթացքին:

ԴՐՕՇԱԿ.- Ստեղծուած ծանր կացութեան մէջ ինչ առաջնահերթ անելիքներ եք տեսնում Հայաստանի իշխանութիւնների, քաղաքական ուժերի եւ ընդհանրապէս մեր ժողովրդի համար:

ՅՏԽ.- Անմիջականօրէն՝ Հայաստանի քաղաքական որևէ իշխանութեան հիմնական անելիքը ստորագրուած Յայտարարութեան անորոշ բաժիններու առաւելագոյն հայանպաստ լուծումներ ապահովելու խնդիրն է. բան մը, որ դժբախտաբար կարելի չէ իրագործել այս իշխանութեան օրոք: Քաղաքական ուժերը և մտաւորականութիւնը, որոնք համախմբուած են ՀՅԴի շուրջ, արդէն իսկ բացայայտած են իրենց կեցուածքը՝ ստեղծել Հայրենիքի փրկութեան ժամանակաւոր կառավարութիւն, որպէսզի ժողովուրդին մօտ վերազարթնի յոյսը, վերադառնայ ազգային գաղափարախօսութիւնը և պարտուողական, ընկճուած հոգեբանութենէն դուրս գայ ամբողջ ժողովուրդը: Ապա՝ որոշ կայունութիւն և համերաշխութիւն հաստատուելէ ետք, դիմուի ժողովուրդին, որպէսզի իր կամքը արտայայտէ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու միջոցաւ:

Մինչև այդ ընտրութիւնները, անհրաժեշտ է որ Հայրենիքի փրկութեան կառավարութիւնը աշխատի Հայաստանի տնտեսական անկումի կասեցման ուղղութեամբ, բնականոն պայմաններ ստեղծէ որպէսզի հնարաւորինս կասեցնէ հաւանական արտագաղթի հոսքը և իր կարևոր նպաստը բերէ Արցախի վերականգնումին: Իսկ այս նպատակներն անիրագործելի կը մնան, եթէ ներկայ իշխանութիւնը, իր վարչապետով, չհեռանայ իշխանութենէն:

ԴՐՕՇԱԿ.- Յայտնի փորձութիւնների, մասնաւորապէս համավարակի առիթով ձեռնարկուած սահմանափակումների պարտադրանքով, ՀՅԴ Բիւրոն ստիպուած եղաւ հրաժարուել նախապէս ծրագրուած մի շարք միջոցառումներից կամ՝ փոփոխութիւններ մտցրեց դրանց իրականացման ժամկէտների ու ձևի մէջ: Կարելի՞ է ասել որ անգամ այս պայմաններում հնարաւոր եղաւ ծրագրուած շատ բաներ իրականացնել և կուսակցական աշխատանքները պահել իրենց հագեցած օրակարգի մէջ:

ՅՏԽ.- 2020 տարին սկսանք լաւատեսութեամբ, որովհետև մեծ ամեակներու տարի էր և Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոն կազմակերպած էր նախաձեռնութիւններ հայրենիքին մէջ և սփիւռքի տարածքին: 2020թ. Փետրուարի 24-28-ին Երեւանի եւ Ստեփանակերտի մէջ կազմակերպուած ՀՅԴ Հայ դատի յանձնախումբերու և գրասենեակներու խորհրդաժողովը իրագործուեցաւ առանց խանգարումի, բայց մարտ ամիսէն սկսեալ մեր բոլոր միջոցառումները կա'մ յետաձգուեցան, կա'մ ալ վերածուեցան առցանց ձեռնարկներու:

Այս տարուան ընթացքին ունէինք հետևեալ գլխաւոր ձեռնարկները՝

- ՀՅԴ, ուղեկից միութիւններու՝ Համազգային Մշակութային Միութեան, ՀՄԸՄի և ՀՕՄի ինչպէս նաև Հայ Դատի կառոյցներու միացեալ խորհրդաժողովը, որ ծրագրած էինք Ապրիլին իրականացնելու Հայաստանի մէջ՝ յետաձգուեցաւ 2021ին:
- ՀՅԴ հիմնադիրներէն՝ Քրիստափոր Միքայէլեանի նահատակութեան 115 ամեակին առիթով Պուլկարիոյ մէջ կազմակերպուելիք ուխտագնացութիւնը, շիրիմին այցելութիւնն ու նոր կիսանդրիի զետեղումը և խորհրդաժողովը յետաձգուեցան 2021ին, սակայն նախատեսուած հրատարակութիւնները լոյս տեսան:
- Սփիւռքի հարցերու 2020ի խորհրդաժողովը, որ կը ծրագրուէր իրականացնել Լիբանանի մէջ ամրան ընթացքին, յետաձգուեցաւ և կը միտինք զայն կազմակերպել 2021ին: Մեր փափաքն էր, որ այս խորհրդաժողովը կայանայ մեր կաթողիկոսներու և յարանուանութեանց հոգևոր պետերու հովանաւորութեամբ, համահայկական կառոյց ունեցող հայ կազմակերպութիւններու գործակցութեամբ և ՀՀ ու ԱՀ պետական ներկայացուցիչներու մասնակցութեամբ:
- Այս տարուան ՀՅԴ երիտասարդական և ուսանողական միութիւններու համահայկական ամառնային բանակումներն ալ յետաձգուեցան 2021ին:
- Սևրի 100ամեակի, ինչպէս նաև նախագահ Ուիլսընի իրաւարար վճռի նշումը մեծ շուքով պիտի տօնակատարուէին մեր նախաձեռնութեամբ Հայաստանի, Ֆրանսայի և ԱՄՆի մէջ: Հանրային միջոցառումները փոխարինուեցան առցանց յիշատակումներով. պատրաստուեցաւ վաւերագրական ֆիլմ մը, որ համաշխարհային սփռում ունեցաւ. հրատարակուեցաւ ՀՅԴ «Վէմ»ի մատենաշարի Սևրի 100ամեակին նուիրուած հատորը:- Թէ՛ համաճարակին, թէ՛ ալ Արցախեան պատերազմին պատճառաւ չեղեալ համարուեցան կամ նուազագոյն տարողութեամբ տեղի ունեցան ՀՅԴ 130 ամեակի նշումները:

Բնականաբար այս նախաձեռնութիւններու

ճակատագրին վրայ ազդեց նաև Արցախեան պատերազմը, որ կլանեց աշխարհասփիւռ ողջ հայութեան ուշադրութիւնն ու ուժերը 27 սեպտեմբերէն սկսեալ: Հրադադարէն ետք էական դարձան Հայաստանին և Արցախին բազմաշերտ օժանդակութիւններ տրամադրելու հարցը և ժողովուրդին մէջ յոյսը վերականգնելու աշխատանքները, որոնք երկրորդ պլան մղեցին այլ նախաձեռնութիւնները:

ԴՐՕՇԱԿ.- Նոր տարին դիմաւորեցինք տագնապալի սպասումներով և անորոշութիւններով: Անհոգ օրեր չեն սպասում մեզ: Առաջին հերթին յիշենք արցախցիների առջև ծառացած հոգսերի ու մարտահրաւէրների մասին: Այնուամենայնիւ ամեն նոր տարուա հետ միշտ կապւում են լաւատեսական յոյսեր ու ակնկալիքներ: Ինչ կը մաղթէիք մեր հայրենիքին, մեր ժողովրդին և մեր ընկերներին:

ՅՏԽ.- 2020ը աղէտալի տարի էր. շարունակական հարուածներու և տագնապներու տարի: Կրկին յիշենք Լիբանանի մէջ հոկտեմբեր 2019էն սկսած անկումը, Սուրիոյ մէջ պատերազմական, տնտեսական և առողջապահական տագնապը, համաճարակի համաշխարհային աղէտը, Լիբանանի մէջ Պէյրութի նաւահանգիստին պայթիւնը և վերջ ի վերջոյ վերանկախացեալ մեր հայրենիքի նոր պատմութեան Արցախեան երկրորդ պատերազմի պարտութեան մեծագոյն աղէտը: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն ալ, շատերու նման, ստիպուեցաւ վերանայիլ իր ծրագիրները, վերարժևորել անոնցմէ մէկ քանիին առաջնահերթութիւնները և կեդրոնանալ այդ այլազան տագնապներու և աղէտներու բերումով հայ ժողովուրդին կրած վնասներուն և հայրենիքին ու հայութեան տրամադրելի օժանդակութեանց վրայ: Միաժամանակ անշուշտ, չենք մոռնար այս յուսահատական մթնոլորտէն մեր ժողովուրդը դուրս բերելու անհրաժեշտութիւնը, որպէսզի անոր վերադառնայ իր առասպելական արիութեան ոգին:

Ուրեմն մեր հայրենիքին ու ժողովուրդին կը մաղթենք վճռակամութիւն՝ վանելու համար համատարած ընկճուածութիւնն ու պարտուողական հոգեբանութիւնը. իսկ մեր ընկերներէն կ'ակնկալենք, որ մնան պինդ՝ վերանորոգ կորովով և անսակարկ նուիրումով կեդրոնանալու 2021ի հետևեալ առաջնահերթութիւններուն վրան.

1. Հայաստանի և Արցախի մէջ քաղաքական բեկումնային փոփոխութիւն.

Փաշինեանի և իր վարչախումբի հեռացումը առաջին էական քայլն է: Ազգային փրկութեան կառավարութեան հաստատումէն ետք պարտինք համախմբել հայրենի ու համահայկական ուժերը, միասնաբար դիմագրաւելու հայրենի մարտահրաւէրները՝ հաստատելու համերաշխութիւն և քաղաքական բնականոն գործընթացներ, վերադարձնելու ազգային գաղափարախօսութիւնը որպէս հիմնարար սկզբունք, ամրապնդելու ժողովրդավարութիւնը և օրէնքի գերակայութիւնը, կասեցնելու տնտեսական գահավիժումը, ապահովելու բոլոր հայ գերիներու վերադարձը, յաւերժացնելու Արցախի պատերազմի նահատակներուն յիշատակը և հասնելու անոնց ու վիրաւոր զինուորներու և կամաւոր ազատամարտիկներու ընտանիքներու կարիքներուն, հզօրացնելու հայոց բանակը, վերահաստատելու Արցախի կարգավիճակի շուրջ բանակցութիւնները, բարելաւելու Հայաստան-Ռուսիա և Հայաստան-Իրան յարաբերութիւնները և վերադարձնելու բանականութիւնը քաղաքական փոխյարաբերութեանց մէջ:

2. Արցախի վերականգնում.

Դաշնակցութեան համար Արցախի նորօրեայ կորուստները մնայուն չեն. հրադադար հաստատուած է, բայց պատերազմը չէ աւարտած. պիտի գայ պահը վերականգնելու Արցախի իրաւունքներն ու ամբողջական սահմանները: Մինչ այդ՝ անհրաժեշտ է հրադադարի պայմանները բարելաւել, վերակառուցել քաղաքներն ու գիւղերը, Արցախահայութեան համար ապահովել ԱՀ վերադարձի բարենպաստ պայմաններ, հասնիլ անօթևան ընտանիքներու կարիքներուն, զարգացնել տնտեսութիւնը, իսկ համաշխարհային մակարդակի վրայ շեշտել Արցախի բացարձակ ինքնորոշման իրաւունքը և աշխատիլ վերականգնելու Մինսկի խումբի համանախագահութեան ներքոյ բանակցային գործընթացը:

3. Սփիւռքի վերաշխուժացում.

Սփիւռքն ալ պարտինք դուրս բերել Արցախեան կորուստի յարուցած ահաւոր ցնցումէն: Եւ անոր վերադարձնել հաւատը հայրենիքի և հայութեան պայծառ ապագային նկատմամբ: Կը յուսամ որ կը կարողանանք 2021ին իրականացնել նաև Սփիւռքի հարցերու խորհրդաժողովը՝ արտերկրի հայութեան նոր աւիշ հայթայթելու և համահայկական առաջնահերթութիւնները ճշդելու համար:

Մենք բոլորս, որպէս մէկ ու ամբողջական հայութիւն, պէտք է սթափօրէն գնահատենք, թէ կը գտնուինք միանգամայն նոր կացութեան առաջ: Այդ կը պահանջէ նոր ծրագրումներ և, ի հարկէ, բազմապատկուած ջանքեր՝ տասնամեակներու փոթորկալի ճամբայ կտրած, սակայն մեծ ալեկոծութեան պատճառաւ ետ շպրտուած մեր ազգային նաւուն ընթացքը կրկին ուղղորդելու համար դէպի ազգային մեծ նպատակներու հասցնող հանգրուաններ: Արդ՝ բոլորս պարտինք աշխատիլ վերահաստատելու հայութեան միասնականութիւնը, վերականգնելու այն հաւատն ու ոգին, որոնք երկար դարերու և փորձութիւններու ընդմէջէն ապահոված են ազգային մեր դժուար երթը: Մենք պարտաւոր ենք կատարելու հետևութիւններ մեր ոչ հեռաւոր անցեալի սխալներէն ու բացթողումներէն և մեջքերնիս շտկած, միտքերնիս պարզած առաջ շարժելու, կողմնորոշուելով միայն մեր ազգային գերագոյն շահերով ու ազգային իդէալներով: ■

Սպանել ստրուկին

Արա Նոռանյան

Երկու Հայաստանների պայքարը

Հայաստանում գործադրված ինքնառնչացման մեխանիզմն օրեցօր թափ է առնում: Բավական է նայել գործընթացի վեկտորին և տեղի ունեցող իրադարձությունների արագացմանը, որպեսզի հասկանանք, թե ուր է այս ամենը տանում: Հատկապես պատերազմը սրեց այն բոլոր խնդիրները, որոնց բազմիցս անդրադարձել ենք՝ սկսած պետական կառավարումից, արտաքին ու ներքին քաղաքականությունից մինչև վերնախավերի և իշխանության ձևավորում:

Ժամանակակից հայ հասարակությունը **չունի միասնական ընկալում**, որը թույլ կտար լուծել այդ խնդիրները. այն բաժանված է երկու մասի, ինչի հետևանքով **ունենք երկու Հայաստան:** Գիտակից ու արժանապատիվ քաղաքացիները հասկանում են, որ հասել ենք պետականության ոչնչացման այն կետին, որից հետո հայ ազգի ինքնության կորուստն է: Այդ մարդիկ ունեն մեղքի զգացում, եթե նույնիսկ ուղղակիորեն մեղավոր չեն, ունեն պատասխանատվության զգացում երկրի և սերունդների առջև, թեև չեն զբաղեցնում որևէ պետական պաշտոն: Բայց նրանք պատրաստ են հասկանալու սխալները և փորձելու շտկել դրանք:

Ժողովրդի մյուս հատվածը կարծես ապրում է բոլորովին այլ հարթությունում և ընդհանրապես չի պատկերացնում իրեն սպասվող ոչ հեռու ապագան: Ինչո՞ւ:

«Իմաստուն» ժողովրդի առասպելը

«Ժողովուրդն իմաստուն է». պարբերաբար կրկնվող այս միտքն ամենամեծ կեղծիքներից է, որը տեղ է գտել մեր հասարակության մեջ: Թե՛ իշխանությունը, թե՛ ընդդիմությունը ժողովրդին կրթելու, առաջադիմական ու պետականամետ դարձնելու փոխարեն քծնում էին: Իր կյանքի ընթացքում հազարավոր գրքեր կարդացած մտավորականը ոչ տառաճանաչին անվանում էր իմաստուն, որպեսզի արժանանա կիսագրագետ զանգվածի սիրուն և մեծարանքին:

Բայց ժողովուրդը նույնպես սիրում է քծնել ինքն իրեն՝ մեծարելով ու գովաբանելով սեփական ունակությունները և ինքն իրեն օժտելով գերբնական ու առասպելական հատկություններով: Դրան գումարվեցին «հպարտություն»-ն ու «դուխով»-ը՝ խախտելով հասարակական բոլոր սահմանները, քանդելով ավանդական դաստիարակության ու արժեքային համակարգի հենասյուները, վարկաբեկելով պետությունը և պետական ինստիտուտները, մտցնելով ներսոցիալական ագրեսիվություն և անհանդուրժողականություն:

Եվ այժմ չպետք է զարմանալ այն ողբերգության վրա, որի ականատեսը լինելու դժբախտությունն ունենք բոլորս: «Ժողովուրդն իմաստուն է» կամ «Ժողովուրդը

չի սխալվում» կեղծիքը հասարակության մեջ ձևավորել է անպատասխանատու, անսկզբունքային, ամբարտավան, սեփական թերացումներն ընդունելու անընդունակ, ինքնասիրահարված մի բազմություն, որը ճնշում է հայ ազգի էությունն ու առողջ քննադատական միտքը:

Որպես հավաքականություն, թույլ են տրվում բազմաթիվ սխալներ, գործվում են մեղքեր, նույնիսկ հանցագործություններ, սակայն **դրանք խոստովանելու մշակույթն այդպես էլ չի ձևավորվում:** Յուրաքանչյուրի համար մեղավոր են բոլորը, հաճախ՝ կոնկրետ անձինք, սակայն ոչ ինքը:

Եվ ի՞նչն էր, ի վերջո, ժողովրդի «իմաստության» արդյունքը կամ «հպարտության» առիթը՝ անբարոյական անգրագետների և «պատահական» անձանց իշխանության բերելը, հազարավոր երիտասարդների սպանդը՝ հանուն կապիտուլյացիան հասարակությանը սահուն կերպով հրամցնելու, թե՛ հայրենիքի տարածքների հանձնումը թշնամուն:

Յանկացած մարդ ունի սխալվելու իրավունք, սակայն սխալը չընդունելն ու չշտկելը դարձնում է նրան աղետի համահեղինակ ու մեղավոր:

Կարծիք ունենալու իրավունքը և պատմության դատը

Այս քծնանքի ու կեղծ մեծարանքի հետևանքն է, որ անաստված անբարոյականը իրեն իրավունք է վերապահում կարծիք հայտնելու Վեհափառի, ծույլ անգրագետը՝ կրթված ու փորձառու մարդու, թրքասերը՝ հայ գեներալի, անհայրենիք ապազգայինը՝ Դաշնակցության, պետությանը որևէ օգուտ չտվածը՝ հայրենիքին ազնվորեն ծառայողի, սուտասան ավազակը՝ արժանավոր քաղաքացու մասին:

Կարծիք ունենալու իրավունք ունեն բոլորը, բայց կարծիք արտահայտելու իրավունքը հարկավոր է վաստակել:

Ձևավորվել է խայտառակ աղմկոտ միջավայր, որտեղ կորչում են բանական խոսքն ու ճշմարտությունը:

Նման հասարակության ձևավորումը պատահական չէր. դա Հայաստանի ոչնչացման ծրագրի բաղկացուցիչ մասն էր: Քանի որ պետությունը քանդելու ամենաարդյունավետ ձևը ինքնաոչնչացումն է, Հայաստանի կազմաքանդումն իրականացվեց ներսից: Եվ եթե այսօր շատերին թվում է, թե իրենց կեղծիքն է մնալու պատմության մեջ, ապա մոլորության մեջ են:

Մեկ դար հետո սերունդները չեն հիշելու այն հիմարությունները, որոնցով մինչ օրս սնվում են ժամանակակիցները: Պատմությունը գրվում է այլ չափանիշներով, որի էջերում կարձանագրվի մոտավորապես հետևյալը. *«1988թ. Արցախյան շարժումը, փախստականների առկայության, երկրաշարժի, շրջափակման, բազմաթիվ զրկանքների ու սոսկալի ճգնաժամի միջով անցնելով, կերտեց 1994 թվականի հաղթանակը, և ստորագրվեց եռակողմ զինադադարը: ՀՀ առաջին նախագահի օրոք ազատագրվեց Արցախը, երկրորդ և երրորդ նախագահների օրոք պահպանվեցին խաղաղությունը, կայունությունը և Հայաստանի ու Արցախի տարածքային ամբողջականությունը, իսկ չորրորդ իշխանության օրոք հաղթանակած պետությունը պարտվեց, ստորագրվեց կապիտուլյացիա, իսկ ՀՀ-ն ու ԼՂՀ-ն կորցրին իրենց տարածքները»:*

Այսինքն՝ 1988 թվականի սերունդը ոտքի կանգնեց և դարեր անց ազատագրեց հայրենիքի մի հատվածը, իսկ 2018 թվականի սերունդը ոտքի կանգնեց ու ընդամենը 2.5 տարի անց Հայաստանի համար ստեղծեց ավելի ծանր վիճակ, քան 1988 թվականին էր՝ հարցականի տակ դնելով ոչ միայն Արցախի, այլ նաև Հայաստանի անվտանգությունն ու ապագան:

Հայաստանն այժմ ավելի խոցելի է, քան երբևէ: Մեր բնակչության անվտանգությունը անկախության շրջանի ամենացածր մակարդակի վրա է, և մեծագույն ջանքեր են անհրաժեշտ՝ երեք միլիոն բնակչության խաղաղ զարգացումն ու հեռանկարն ապահովելու համար:

Սա է իրականությունը, և **յուրաքանչյուր ոք պետք է պատասխանատվություն ստանձնի այս ամենի համար:**

Պետք է հրաժարվել ինքնասիրահարված, դատարկ ու մեծամիտ կեցվածքից և անսխալականության բարդույթից, հակառակ դեպքում սա իսկապես կլինի մեր հայրենիքի մայրամուտը:

Պայքար հանուն հայրենիք ունենալու

Իսկ ո՞րն է այս երկու Հայաստանների հակադրության առարկան: Այս երկու տեսակի Հայաստանների միջև ընթացող պայքարը կոիվ է Հայաստան ունենալու ու հայ մնալու և ստրկանալու ու թրքահպատակ դառնալու միջև: **Այս երկու հատվածների միջև փոխզիջում լինել չի կարող:** Պատահական չէ, որ բազմաթիվ մարդիկ իրենց անվանում են նախկինում ստրկացած: Եթե այդպես է, ապա տեղին է հիշել, որ Հին Հունաստանում ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկված էին նաև նախկին ստրուկները. հոգու ազատությունն ու արժանապատվությունը պայմանավորված չեն նյութական կամ ֆիզիկական հանգամանքներով:

Իսկ սպասվող հեռանկարը հստակ է: Եթե շարունակվի իրադարձությունների այսպիսի ընթացքը, ապա առաջիկայում Հայաստանը փաստացի դառնալու է թուրք զբոսաշրջիկների հաճույքները բավարարելու համար մի տարածք, որտեղ մարդիկ կարող են **մոռանալ կրթության, գիտության, մշակույթի կամ արժանապատիվ աշխատանքի մասին,** և նրանց միակ խնդիրը լինելու է թուրքին ծառայելը: Սեփական կյանքը փրկելու համար նրանք հրաժարվելու են ազգի պատմությունից, կրոնից, պահանջատիրությունից, արժանապատվությունից և նույնիսկ ազգանունից: Ոմանք կդառնան ենիչերիներ և մի քանի հազար դրամ ավել աշխատավարձի դիմաց ավելի «համոզիչ» կերպով կճնշեն բողոքի ձայները: Իսկ նոր դասագրքերից կպարզվի, որ մի բուռ հայերն են կոտորել հարյուր միլիոնանոց թյուրք էթնոսին...

Բազմաթիվ քաղաքացիներ լքելու են հայրենիքը՝ դառնալով հավերժ քոչվոր և անհայրենիք փախստական, մնացածներն ապրելու են վախի մթնոլորտում, ինչպես հայերը՝ Կոստանդնուպոլսում: Սփյուռքում հայերը քայլելու են գլխիկոր, վիրավորված, ստորացված ու արհամարհված, և նրանց հետևից քմծիծաղելու են օտարազգիները: Իսկ երկրի տարածքից մնալու է այնքան, որքան թույլ կտա թշնամին: Եվ այս ամենը չափազանցություն չէ: Տարբեր առիթներով այս վտանգի մասին ակնարկել ենք, բայց ժամանակն է ավելի բաց խոսելու: Շատ կարճ ժամանակում կարծես մոռանալով ցեղասպանության 100-րդ տարելիցի հռչակագիրը, «Ճանաչում և հատուցում»-ը, արցախյան պահանջատիրությունը, հայ երիտասարդ սպայի կացնահարումը, հայ զինվորների խոշտանգումները, թուրքերի կողմից էթնիկ զտումները և հայոց հայրենիքի զավթումը՝ ոմանք անցել են թուրքերի հետ միասին դասագրքերի կազմմանը և հաշտեցմանը, օտարի հողում տներ կառուցելու մասին զառանցելուն, թուրքերի (և ադրբեջանցիների) հետ համերաշխ ապրելու, թուրքերին ծառայելու պատրաստակամությանը և թրքահաճո այլ թեզերի: Իսկ **հայրենիքի կորստին, հազարավոր զոհերին, վտանգված սահմաններին և օտարների կողմից մեր տարածքների նկատմամբ հավակնություններին շատ հեշտ սովորեցինք, կարծես այդպես էլ պետք է լիներ:** Պատերազմից ու թուրքական ապրանքների ներմուծման արգելքից շատ կարճ ժամանակ անց հասանք սահմանները բացելու և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ առևտրատնտեսական և նույնիսկ դիվանագիտական հարաբերություններ

հաստատելու տրամադրվածությանը: Ապշել կարելի է, թե ոմանք որքան հեշտ հաշտվեցին պարտության հետ:

Տարածաշրջանում **պետք է լիներ կամ փոխզիջում և փոխադարձաբար միմյանց շահերը հարգելով, համբերատար քայլերով խաղաղության հաստատում, կամ մեկի ջախջախում և մյուսի թելադրանքով տարածաշրջանի վերաձևում:** Ուժերի հավասարակշռության խախտման պայմաններում պետք է գործեր երկրորդ սցենարը: Դա ոչ միայն տեղի ունեցավ, այլև Հայաստանում ոմանց կողմից ընդունվեց որպես օրինաչափ լուծում:

Մենք իրավունք չունենք լռելու և չխոսելու առաջիկա ողբերգական հեռանկարի մասին, դեպի ուր գնում է Հայաստանը:

Այսօր պայքարը հասարակության երկու տեսակների միջև է: **Հասարակության արժանապատիվ հատվածը պետք է հաղթի մյուս հատվածի մեջ նստած ստրուկին՝** հանուն թե՛ ամբողջ պետության, թե՛ հենց այդ ստրկամիտ ու էությամբ ապազգային հատվածի երեխաների ապագայի:

Առողջացում՝ ճշմարտությունն ասելու միջոցով

Քաղաքական և հասարակական գործիչներն ու մտավորականները պետք է ասեն ցավալի ճշմարտությունը: Առողջացումն անցնում է բացառապես ախտորոշում կատարելու, անցյալի դասերը քաղելու և ճշմարտությունն ասելու միջոցով:

Ապագա Հայաստանը պետք է մերժի կեղծիքն ու քծնանքը: Այն պետք է հիմնված լինի ճշմարտության, արդար ու շիտակ խոսքի վրա: Իսկ դրան հասնելու համար ճշմարտությունը պետք է ասել արդեն այսօր: Այն կարող է լինել տհաճ, նույնիսկ դաժան, բայց դա միակ ճանապարհն է մեր հասարակության ներքին առողջացման համար:

2018 թ. գարնանը Հանրապետության հրապարակը կամ հոկտեմբերին Ազգային ժողովը պաշարողները նույնպես կրում են 2020 թ. ողբերգության պատասխանատվությունը: Սա պետք է հստակ ասվի և գիտակցվի: Այս պատմական մեղքից կա միայն մեկ ելք՝ ապաշխարել, ընդունել սխալները և գործել դրանք շտկելու ուղղությամբ:

Իրենց հերթին մեղքի սեփական բաժինը պետք է ընդունեն նաև նրանք, որոնց պատճառով հնարավոր եղավ 2018 թվականը: Մեծագույն հանցանք կլինի համարել, որ բավական է միայն հեռացնել այս պահին իշխանության պաշտոնները զբաղեցնողներին, իսկ մինչև 2018 թ. գարունը ամեն ինչ նորմալ էր: **Ո՛չ, նորմալ չէր:**

Երեք անհրաժեշտ պայմանները

Հայաստանին այսօր միաժամանակ անհրաժեշտ է երեք պայման.

1. Գրագետ կառավարություն, որը, աշխատելով ոսկերչական ճշգրտությամբ, քաղաքական հասունությամբ և բարձր պրոֆեսիոնալիզմով, ունակ կլինի կառուցելու նոր մոդելի իրական պետություն:

2. Տասը տարվա խաղաղ ժամանակահատված՝ պետական շինարարության համար:

3. Ջուսպ, օրինապաշտ, համեստ և համբերատար հասարակություն:

Երեքն էլ չունենք: Բայց այլընտրանք էլ չունենք: Պետք է ամեն ինչ արվի ունենալու համար, հակառակ դեպքում իսկապես կթերթենք մեր պատմության վերջին էջը:

Հայաստան պետության հզորացման այլընտրանքը միայն մեկն է՝ մեր տներում, մեր քաղաքներում ապրելու են թուրքերը...

Հայաստանը պետք է կառուցի նոր պետություն՝ քաղաքական ու իրավական նոր համակարգերով, նոր պետական կառավարմամբ, նոր գաղափարախոսությամբ ու մտածելակերպով, նոր հասարակական հարաբերություններով ու արժեքային համակարգով, նորովի կառուցի հարաբերություններն այլ երկրների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև Սփյուռքի հետ, մշակի և կենսագործի սոցիալ-տնտեսական զարգացման նոր ռազմավարություն, կազմավորի նոր տիպի զինված ուժեր ու իրավապահ համակարգ և այլն: Այս ամենը առջևում է: Նոր տիպի պետություն կառուցելու մասին շատ ենք խոսել և դեռ կխոսենք:

Իսկ առայժմ անհրաժեշտ է սպանել մարդկանց մեջ նստած՝ ստամոքսի ռեֆլեքսով ապրող ստրուկին: Ամեն գնով: Նժարին հայոց պետականությունն է և ազգի գոյությունը: Այս գործընթացում, արդեն ներկայացված պատճառներով, չպետք է ակնկալել ողջ հանրության մասնակցությունը: **Կեղծիքի մեջ ապրող հասարակությունը անառողջ քաղաքական համակարգի պայմաններում չի կարող կատարել հասուն ընտրություն:**

Հասարակության պատասխանատու հատվածը պետք է ստանձնի առաջիկա տարիների զարգացման և պետականաշինության առաքելությունը՝ հանրությանը ներկայացնելով ամբողջական ու հստակ ընկալելի ծրագիր և հետևողական լինելով այն իրագործելու հարցում:

Եթե կորցնենք մեր մեծ հայրենիքից մնացած այս փոքր պետականությունը, ապա հնարավոր է այլևս երբեք չկարողանանք ունենալ անկախ պետություն: Նույնիսկ հազար տարի հետո:

Ժամանակ դեռ ունենք: Քիչ, բայց ունենք: ■

Հարավային Կովկասը բարձր լարման տակ

Վարդան Հակոբյան

Արդեն սովորական են դարձել որոշ քաղաքական վերլուծաբանների դատողություններն այն մասին, որ աշխարհը գնում է դեպի մեծ պատերազմ: Դրանք անհիմն չեն թվում, եթե համադրում ես այս կամ այն պետության կամ դրանց միությունների ղեկավարությունների դատողություններն ու քաղաքական վարքագիծը, երբ պատմական զուգահեռներ ես անցկացնում ու համեմատում նախկինում եղած նման իրադարձություններն ու իրավիճակները, դրանց պատճառներն ու հետևանքները:

Սիրիայում ծավալված իրադարձությունները, Ադրբեջանի պատերազմը Հայաստանի դեմ և Թուրքիայի ու Ռուսաստանի ռազմական ակտիվությունը Հարավային Կովկասում տեղիք են տալիս մտածելու, որ վերը նշած դատողություններն այդքան էլ հեռու չեն իրականությունից:

Տպավորություն է ստեղծվում, որ Մերձավոր Արևելքում, ահաբեկչության, անջատողականության, բռնապետության դեմ պայքարի քողի տակ, հիմնական խաղացողները իրականում ռազմական, քաղաքական և դիվանագիտական դիրքեր են ստեղծում և «խրամատավորվում» դրանցում՝ միմյանց դեմ վճռական բախումից առաջ: Ընդորում, այդ դիրքերը դասավորված չեն ճակատային գծի այս կամ այն կողմում, դրանց դասավորվածությունը խառն է, հաճախ՝ մեկը մյուսի թիկունքում: Օրինակ՝ Իրանը «խրամատավորվել է» թե՛ Լիբանանում, թե՛ Սիրիայում և թե՛ Յեմենում, իսկ Իսրայելը խրամատներ ունի թե՛ Ադրբեջանում և թե՛ Վրաստանում: Հիշեցնենք, որ խոսքը ոչ միայն ռազմական, այլ նաև քաղաքական, դիվանագիտական և հետախուզական դիրքերին է վերաբերվում:

Առավել ցայտուն նշվածը վերաբերվում է ռուս-թուրքական հարաբերություններին: Այս երկու երկրները հաջողությամբ համագործակցում են տնտեսության տարբեր բնագավառներում, իրականացնում են համատեղ էներգետիկ, տրանսպորտային նախագծեր, ապրանքաշրջանառության ծավալը հասել է 30 մլրդ դոլարի, համատեղ մասնակցում են միջազգային քաղաքական հարցերի կարգավորմանը, հրապարակավ հայտարարում են փոխադարձ վստահության մասին և այլն: Սակայն, չնայած այս ամենին, դժվար է հավատալ նրանց անկեղծ բարեկամությանը: Չեն հավատում դրան, նախևառաջ, Պուտինն ու Էրդողանը: Մեծ է գայթակղությունը Ռուսաստանի Դաշնության և Թուրքիայի միջև հարաբերությունները համեմատելու ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև 1930-թվականների 2-րդ կեսին եղած հարաբերությունների հետ: Չնայած առևտրատնտեսական հարաբերությունների բուռն զարգացմանը և 1939թ. աշնանը ստորագրված

սովետագերմանական պայմանագրերին («չհարձակման մասին» 23.08., որը հանգեցրեց Լեհաստանի հերթական՝ 5-րդ բաժանմանը և «բարեկամության ու սահմանների մասին» 26.09)՝ Ա. Հիտլերը և Ի. Ստալինը վստահ էին, որ մահացու ընդհարումն անխուսափելի է և ընդամենը ժամանակի հարց է: Ստորագրելուց հետո Ստալինը բաժակ է բարձրացնում Հիտլերի՝ գերմանացիների սիրելի առաջնորդի առողջության համար, իսկ ավելի ուշ, խոսելով Մոլոտով-Ռիբենտրոպ պակտի մասին, նշում է.«Ոչ մի խաղաղասեր պետություն չի կարող հրաժարվել խաղաղության պայմանագրից հարևան տերության հետ, եթե նույնիսկ այդ տերության ղեկավարները Հիտլերի և Ռիբենտրոպի նման ճիվաղներ և մարդակերներ են: Իհարկե, այն պայմանով, որ այդ պայմանագիրը ոչ մի կերպ չի դիպչում պետության տարածքային ամբողջությանը, անկախությանը և պատվին»: Վ. Մոլոտովն իր ստորագրած փաստաթուղթը գնահատում էր որպես հնարավորություն՝ ուժերի կուտակման, աճի և միջազգային դիրքերի ամրապնդման համար: Իհարկե, այս, ինչպես և ցանկացած այլ համեմատություն չափազանց մոտավոր է: Ինչպես ասում են՝ այնքանով, որքանով: Ոչ Թուրքիան է Գերմանիա, ոչ էլ Ռուսաստանն է ԽՍՀՄ, Էրդողանը Հիտլեր չէ և, առավելևս, Պուտինը՝ Ստալին, բայց միջազգային թատերաբեմում նրանց, որպես քաղաքական դերակատարների, ամպլուաները նման են:

Ինչևէ, Պուտինի և Էրդողանի ոխերիմ եղբայրությունը հերթական անգամ դրսևորվեց Հարավային Կովկասում Հայաստանի բաժանումով (թվով արդեն 5-րդ) Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Սա ներկայացվեց որպես մարդասիրական քայլ՝ ուղղված տարածաշրջանում խաղաղության հաստատմանը

և դրա զարգացմանն ու ծաղկմանը, կամ, ինչպես ձևակերպեց դա «իմքայլական» անմեղսունակ մի պատգամավորուհի, Հարավային Կովկասը կդառնա «մարդկային դեմքով տարածաշրջան»,(սակայն չնշեց այդ դեմքի էթնիկական տիպը): Ճիշտ 100 տարի առաջ, Հայաստանի 4-րդ բաժանումից հետո, հայաստանցի բոլշևիկներն, իրենց դավաճանությունն արդարացնելով, կարևորում էին համաշխարհային հեղափոխությունը (այսօր դա կոչվում է «Գլոբալիստական հեղափոխություն») և սահմաններով չբաժանված եղբայրացած ժողովուրդների երջանիկ կյանքը: Սակայն, արդար լինելու համար, նշենք, որ հայ բոլշևիկների մեջ էր նաև Ա. Մյասնիկյան, որը փորձեց կոմունիստական գաղափարախոսությունը ծառայեցնել իր ժողովրդին, այլ ոչ թե՝ հակառակը: Իսկ գլոբալիստական փորձարարական լաբորատորիաներում աճեցված «իմքայլականների» խումբը ձգտում է մեր ժողովրդին ծառայեցնել նեոլիբերալիստական գաղափարներին և պատրաստ է նույնիսկ հանուն այդ հեղափոխության զոհել հայրենիքը (ինչպես ասաց մեկ այլ անմեղսունակ պատգամավոր. «Հեղափոխությունը Ղարաբաղից կարևոր է»):

Ի տարբերություն «իմքայլական» մանկուրտների՝ ազերիները հիշում են, որ 1921թ. Նժդեհին հաջողվեց ետ վերադարձնել Զանգեզուրը, և նրանք լրջորեն մտահոգված են, որ, չնայած Ն. Փաշինյանի և նրա կողմնակիցների խոստումներին. անվերապահորեն կատարել կապիտուլյացիայի պահանջները, հայերի մեջ կարող են դեռ գտնվել մարդիկ, որոնք չեն հաշտվի կատարվածի հետ: Իզուր չէ, որ հունվարի 11-ին, մոսկովյան եռակողմ հանդիպմանը Ի. Ալիևը, հիշեցնելով Ադրբեջանի տարած հաղթանակի մասին, «ներողամտորեն» անվանելով այն իրավիճակի լուծում, հատուկ նշեց, որ համոզված է, թե «հայկական կողմից նոյեմբերի 9-ի հայտարարության վերանայման փորձեր չեն լինի, ակնկալելով, որ 2 ժողովուրդները գտել են իրենց մեջ կամք և իմաստնություն՝ հաշտեցման մասին մտածելու համար»: Եվ, իսկապես, ինչպես տեսնում ենք, «իմքայլականներն» իրենց մեջ գտել են կամք ու իմաստնություն. հաշտվել են և մարդկային դեմքով տարածաշրջան կառուցելու ծրագրեր են նախագծում:

Սակայն վերադառնանք տարածաշրջանային քաղաքականությանը:

Ի՞նչ դիրքեր է ձեռք բերել Էրդողանը Հարավային Կովկասում: Եթե վերցնենք տարածաշրջանի քաղաքական քարտեզը և դարչնագույն մատիտով նշենք նրա ձեռքբերածը, ապա կտեսնենք, որ Թուրքիայի հյուսիս-արևելքից այդ գույնով ներկված սլաքը մտնում է Աջարիա, հետո, Թբիլիսիի վրայով անցնելով Վրաստանի հարավ-արևելյան ադրբեջանաբնակ գոտիով, դուրս է գալիս «Գյանջա» և հասնում է Բաքու: Մյուս սլաքը հարավ-արևելքից մտնում է Նախիջևան և Արաքսի հովտով, կտրելով Մեղրին, անցնելով Շուշին ու Աղդամն, ուղղվում է դեպի Բաքու: Մի՞թե այս քարտեզը չի հիշեցնում 1918-1920 թթ. թուրքական զորքերի տեղաշարժերը: Բայց այսօրվա տեսանկյունից այն մեկը-մեկին կրկնում է դեռ 1990թթ. նախագծված և մասամբ կառուցված նավթատարների ու գազատարների, տրանսպորտային և այլ կոմունիկացիաների քարտեզները: Օգտվելով իր համար քաղաքական մի շարք բարենպաստ պայմաններից (մասնավորապես 2008թ. Ռուս-վրացական պատերազմը, 2014թ. Ղրիմի վերամիավորումը և դրանց հետևանքով Արևմուտքի հետ Ռուսաստանի փոխհարաբերությունների սրումը և միջազգային դիրքերի թուլացումը)՝ Էրդողանը կարողացավ ոչ միայն խորացնել իր տնտեսական ազդեցությունը Վրաստանի և Ադրբեջանի վրա, այլև աստիճանաբար դարձրեց այն քաղաքական, իսկ վերջինիս դեպքում՝ նաև ռազմական: Առավել ցայտուն դա երևում է թուրք-վրացական փոխհարաբերությունների օրինակի վրա: Վերջին 10-ը տարիների ընթացքում ֆինանսատնտեսական էքսպանսիայի միջոցով ու վրացիների հակառուսական տրամադրությունները շահարկելով՝ Թուրքիան անաղմուկ «օկուպացրեց» Վրաստանը, իսկ Աջարիան, ինչպես իրենք վրացիներն են ասում՝«թուրքացրեց»: Այսինքն՝ Վրաստանն այն աստիճան կախվածության մեջ է հայտնվել, որ Թուրքիան կարող է տնօրինել նրա տարածքը և հաղորդակցական ուղիներն այնպես, ինչպես կուզենա և թելադրել վրացական կառավարությանն՝ ինչ-որ կուզենա: Դեռ անցած տարվա հուլիսին խոսելով հայ-ադրբեջանական հնարավոր պատերազմի մասին, Վրաստանի ԶՈՒ գլխավոր շտաբի նախկին պետ գեներալ-մայոր Գ. Իուկուրիձեն որպես սպառնալիք իր երկրի համար նշեց, որ Թուրքիան եղբայրական Ադրբեջանին օգնելու համար, առանց որևէ թույլտվության և պայմանավորվածության, կարող է օգտագործել իրենց տարածքը որպես ռազմական բազա և պլացդարմ: Անկարան, նրա կարծիքով, հաշվի չի առնում միջազգային նորմերը և ռազմական նպատակներով ցանկացած պահի կարող է հատել Վրաստանի սահմանները: Ելնելով այս հաստատումներից՝ կարող ենք ասել, որ Թուրքիան հիմնավոր է դիրքավորվել Վրաստանում:

Ինչ վերաբերվում է հարավային ուղղությանը, ապա վերջին 3 տարվա ընթացքում Թուրքիան այնքան խորն է խրամատավորվել Նախիջևանում, որ կարելի է, փաստորեն, խոսել ռազմական բազայի ստեղծման մասին: Եվ դա մի տարածքում, որի սահմաններին կանգնած են ռուսները՝ այսինքն՝ ռուս սահմանապահների թիկունքում: Այդ դիրքերն ապահովելու և արդյունավետ օգտագործելու համար Էրդողանին անհրաժեշտ է կառուցել Թուրքիա-Նախիջևան-Բաքու ռազմավարական նշանակության ճանապարհ՝ իր զինված ուժերի և ռազմական տեխնիկայի արագ տեղափոխություններն իրականացնելու համար: Իսկ հարկ եղած դեպքում նաև ՆԱՏՕ-ի

զորքերի տեղափոխությունն ապահովելու համար: Էրդողանին քիչ է հետաքրքրում նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջհաղորդակցական և ճանապարհների վերագործարկման մասին պայմանավորվածությունը, ինչը վերաբերվում է միայն հարավկովկասյան 3 հանրապետությունների, Ռուսաստանի և Իրանի միջև հաղորդակցությանը: Իրեն հատուկ խարդախությամբ նա, Ալիևի, փորձելու է խցկվել այդ պայմանավորվածությունների մեջ, օգտագործել դրանք ճանապարհային իր նախագիծը իրականացնելու համար: Լինելով հմուտ քաղաքական շանտաժիստ, իր նպատակին հասնելու համար նա կարող է պահանջել Ռուսաստանից, ղարաբաղում իր զորախմբի հետ օդային և ցամաքային կապը իրականացնելու դիմաց, չխոչնդոտել, նման հնարավորություն տալ նախիջևանյան իր զորախմբի հետ կապվելու համար, լավ իմանալով, որ դա անընդունելի է: Սակայն դրանք Թուրքիայի հետագա ռազմավարական քայլերն են լինելու: Այս փուլում նա կարող է բավարարվել հունվարի 11-ին մոսկովյան հանդիպմանն Ալիևի ձեռք բերած համաձայնություններով՝ Նախիջևանը Բաքվին կապող օդային, ցամաքային և երկաթուղային ճանապարհների ապաշրջափակման և դրանց անվտանգության ապահովման երաշխիքների վերաբերյալ: Ն. Փաշինյանը կարծես ստատիստի դերում էր, ճանապարհների ապաշրջափակման վերաբերյալ ոչինչ չուներ ասելու և միայն գլխով էր անում, երբ Պուտինը կամ Ալիևը խրատում և հորդորում էին պահպանել եռակողմ համաձայնությունները և օգտվել դրանց ընձեռած հնարավորություններից:

Այսպիսով՝ Թուրքիան այս պատերազմի հետևանքով տիրացավ կոմունիկացիոն և ռազմական այնպիսի դիրքերի, որոնց շնորհիվ.

-մշտական ճնշման տակ կպահի Հայաստանը, սպառնալով ցանկացած պահի ենթարկել ամբողջական շրջափակման, դարձնել այն անկլավ թուրք-ադրբեջանական տարածքում,

-ամբողջական վերահսկողության տակ կառնի Ադրբեջանը, աստիճանաբար դուրս բերելով այն ռուսական ազդեցությունից, հեռանկարում փորձելով իսլամացնել այն և դարձնել պլացդարմ՝ դեպի Կենտրոնական Ասիա իր ազդեցությունը խորացնելու համար,

-հնարավորություն ստացավ վերահսկելու արևելք-արևմուտք և հյուսիս-հարավ կոմունիկացիոն հանգույցը՝ թուլացնելով Ռուսաստան-Իրան կապի կովկասյան հատվածը,

-դիրքավորվելով Ադրբեջանում՝ Թուրքիան զգալիորեն նեղացնում է Իրանի շահերի դաշտը, կաշկանդում է նրա արտաքին քաղաքական գործունեությունը ոչ միայն հարավկովկասյան, այլև ողջ կասպյան տարածաշրջանում՝օգտագործելով այդտեղ իր ազդեցությունը եղբայրական թուրքական ժողովուրդների վրա:

Ռուսաստանը տեղյակ էր Թուրքիայի կողմից ծրագրված և նախապատրաստված ադրբեջանական հարձակման մասին Արցախի դեմ և դեռ պատերազմից առաջ հորդորում էր քայլեր ձեռնարկել դրանից խուսափելու համար: Սակայն տեսնելով ՀՀ ղեկավարության՝ իրավիճակին անհամապատասխան դիվանագիտական, քաղաքական և ռազմական քայլերն ու գործողությունները, և արդեն պատերազմը սկսվելուց հետո հասկանալով, որ չմիջամտելու դեպքում նրանք կհանձնեն ոչ միայն Ղարաբաղը այլև Սյունիքը, Ռուսաստանը մեծ ջանքերի շնորհիվ զինադադար պարտադրեց կողմերին և խաղաղապահ զորքեր տեղակայեց կրակի գծի երկայնքով: Արդեն հայտնի է, որ դեռ հոկտեմբերի 19-ին Վ. Պուտինը համոզել էր Ի. Ալիևին հրադադար հաստատել, սակայն մերժում էր ստացել Ն. Փաշինյանից: Այդ պահի դրությամբ զինադադարի հաստատումը և խաղաղապահների տեղակայումը ռուսների համար նշանակում էր հսկողության տակ վերցնել գրեթե ողջ նախկին ԼՂԻՄ-ի տարածքը, Քելբաջարը և Սյունիքի հետ սահմանակից տարածքի զգալի մի շերտ: Բայց միայն նոյեմբերի 9-ին զինադադար հաստատվեց, և ռուսական հսկողության տակ անցավ Արցախի մի փոքր մասը՝ Լաչինի միջանցքով կույր աղիքի նման կապված Հայաստանին:

Ռուսաստանի միակ ձեռքբերումն այս պատերազմի արդյունքում եղավ ռազմական ներկայությունը Ադրբեջանի տարածքում ԽՍՀՄ փլուզումից հետո, և, ամենայն հավանականությամբ, օգտագործելով նաև Ստեփանակերտի օդանավակայանը, խաղաղապահ զորքերի հիման վրա կկազմավորի ռազմական բազա: Այսպիսով՝ Հարավային Կովկասում, բացի Գյումրիի ռազմաբազայից, Ռուսաստանի Դաշնությունը կունենա ևս մեկը Ստեփանակերտում և որոշ զարգացումների դեպքում չի բացառվում՝ նաև Սյունիքում: Իհարկե, դա բավական զորեղ ռազմական ներկայություն է, բայց չմոռանանք, որ այդ դիրքերն ամբողջությամբ, ինչպես վերը նշեցինք, շրջապատված են թուրք-ադրբեջանական դիրքերով, և վերջիններս հնարավորություն ունեն, պետք եղած դեպքում, խոչընդոտել նրանց գործունեությանը կամ խզել տրանսպորտային կապը Ռուսաստանի Դաշնության հետ: Այդ պատճառով էլ մոսկովյան վերջին հանդիպմանը Վ. Պուտինը շեշտադրում էր

տրանսպորտային կապի ապահովության հարցը:

Վերջին հաշվով՝ Ռուսաստանը չի կարող բավարարված լինել Հարավային Կովկասում ստեղծված իրադրությամբ: Հավասարապես դրանով չի կարող բավարարված լինել Թուրքիան, որքան էլ երկուստեք փորձեն քողարկել դա: Երկու կողմերն էլ մշտապես դիմելու են միմյանց դեմ ուղղված տարաբնույթ քայլերի: Թուրքիան հորդորելու է Ադրբեջանին մի քանի արևելաեվրոպական երկրների և արևմտյան կազմակերպությունների օգնությամբ տարբեր հարթակներում բարձրացնել, պարտադրել ռուսական զորքերի դուրսբերման հարցն անկախ պետության տարածքից, իսկ ռուսներն, իրենց հերթին, շահարկելով Ղարաբաղի անվտանգության ու կարգավիճակի խնդիրը, ակնկալելով դրանում նույնպես շահագրգռված ՄԽ համանախագահ մյուս երկրների օժանդակությունը, պետք է փորձեն սահմանափակել թուրքերի ծավալապաշտական ծրագրերը տարածաշրջանում:

Ռուս-թուրքական համագործակցության «քողարկված լարվածությունը» Սիրիայից տարածվեց և Հայ-ադրբեջանական պատերազմից հետո հաստատվեց նաև Հարավային Կովկասում: Դա նշանակում է, որ այստեղ ցանկացած քաղաքական հարց կարող է քննարկվել և լուծվել միայն այս 2 տերությունների հարաբերությունների դաշտում և միայն նրանց քաղաքական դիրքորոշումների շառավղի մեջ: Ի դեպ, նշենք, որ Արցախի դեմ հարձակման ժամանակն ընտրված էր... Թե՛ ռուսները և թե՛ թուրքերը շտապում էին դիրքավորվել Ադրբեջանում մինչև ԱՄՆ-ն զբաղված էր Թրամպ-Բայդեն մրցակցությամբ: Ադրբեջանը, որի տարածքում տեղակայվել են 2 օտար, իրարամերժ աշխարհաքաղաքական նպատակներ հետապնդող պետությունների զինվորականները, չի կարողանալու ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարել: Ի. Ալիևն ստիպված է լինելու մի կողմից՝ անկասելիորեն հետևել Թուրքիայի ուղղորդումներին, իսկ մյուս կողմից՝ ինքնուրույնություն խաղալով, դիմակայելու է Ռուսաստանին: Նման վարքագիծը նրան հատուկ է լինելու նաև այն ժամանակ, երբ երկարատև դադարից հետո տարածաշրջանում իրենց գործունեությունը

կակտիվացնեն ԱՄՆ-ը և Եվրամիությունն՝ ի դեմս Ֆրանսիայի:

Ինչ վերաբերվում է կապիտուլյացիա ստորագրած Հայաստանին, ապա, քանի դեռ երկիրը կառավարվում է պարտությունը կազմակերպողի և իրականացնողի կողմից, հնարավոր չէ որևէ կերպ ձևակերպել, ներկայացնել ու պաշտպանել պետության շահերը: Այլընտրանքը ցանկացած թելադրանքի ու ճնշման ենթարկվելն է: Հաշվի առնելով նաև, որ Վրաստանն էլ զուրկ է քաղաքական ինքնուրույնությունից, պետք է եզրակացնենք հետևյալը.

- Հարավային Կովկասը վերածվել է Ռուսաստանի և Թուրքիայի միջև դիմակայության դաշտի,
- չնայած տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման մասին այդ պետությունների կողմից արված հայտարարություններին, բոլորը հասկանում են, որ Ռուսաստանի ու Թուրքիայի համատեղ ռազմաքաղաքական ներկայությունը տարածաշրջանում անհնարին է, և նրանցից մեկը պետք է հեռանա,
- այս դիմակայությունից ձգտելու են օգտվել ԱՄՆ-ը և ԵՄ-ը՝ փորձելով ուղղել Թուրքիային Ռուսաստանի Դաշնության դեմ, ինչպես 1930-ականներին հիտլերյան Գերմանիային ուղղորդում էին ԽՍՀՄ-ի դեմ, և միաժամանակ անելու են հնարավոր ամեն ինչ, որպեսզի թույլ չտան ոչ մեկին, ոչ մյուսին հիմնավորապես հաստատվելու Հարավային Կովկասում,
- ոչ միայն Ռուսաստանի Դաշնության կամ Թուրքիայի, այլև որևիցե այլ պետության ազդեցության միանձնյա հաստատումը Հարավային Կովկասում ձեռնտու չէ նաև Իրանին:

Վերն ասվածից հետևում է, որ հարավկովկասյան տարածաշրջանում հաստատվել է հրադադար, այլ ոչ թե՝ խաղաղություն: Ուշքի գալով ներքաղաքական ցնցումներից և վերանորոգելով արտաքին քաղաքական դիրքորոշումներն ու հարաբերությունները դաշնակիցների հետ՝ ԱՄՆ նորընտիր դեմոկրատական ղեկավարությունը շատ շուտով մտնելու է խաղի մեջ և թելադրելու է կարգավորման իր պայմանները: Այսինքն՝ ստեղծվելու է նոր իրավիճակ, բանակցային նոր գործընթաց դեռևս դժվար կանխատեսելի հետևանքներով: Առավել դժվար է կանխատեսել դրանց հետևանքները Հայաստանի ապագայի տեսանկյունից, որն այս պահին չունի հստակ պատկերացում իր քաղաքական շահերի վերաբերյալ: Իսկ եթե նորից դիմենք պատմական համեմատության, ապա այսօրվա մեր վիճակը կհիշեցնի ճիշտ 100 տարի առաջվա իրողությունը, երբ 1920 թ. նոյեմբերին, 11-րդ Կարմիր բանակի անվան տակ, Իջևանից ներխուժած թուրք-մահմեդական խուժանի օգնությամբ իշխանության եկած հայ բոլշևիկները քանդեցին պետությունը և տարածքները դավաճանաբար հանձնեցին թուրքերին:

Թուրքիան, որպես անվերահսկելի սպառնալիք, միջազգային անվտանգությանն ու խաղաղությանը

Արմեն Պետրոսյան
Արևելագետ, տարածաշրջանային հարցերով փորձագետ

2016 թ. հուլիսի 15-ը՝ հեղաշրջման փորձի ձախողված օրը, կարելի է համարել Թուրքիայի նորագույն պատմության հերթական շրջափուլի պայմանական մեկնակետ, որը որակական փոփոխությունների առիթ և պատճառ դարձավ այդ երկրի ներքին և արտաքին քաղաքական ուղեգծերի համար՝ Անկարային դարձնելով մերօրյա աշխարհի ամենախնդրահարույց և վտանգավոր դերակատարներից մեկը: Առանց չափազանցության՝ Թուրքիային կարելի է դիտարկել որպես անցյալ 4 տարիներին միջազգային գործող իրավակարգը, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներն ու նորմերն ամենից հաճախ կոպտագույնս ոտնահարած երկիրը:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի դեմ կազմակերպված հեղաշրջման փորձի տապալման իրողությունը թուրքական իշխանությունները բավականաչափ հմտորեն օգտագործեցին երկրի ներսում քաղաքական ընդդիմությանը ճնշելու, այլախոհությանը պատժելու, մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու նպատակով՝ առավել ամրապնդելով Ռ.Թ. Էրդողանի միահեծան դիրքերը երկրի կառավարման համակարգում: Այս միտումն ամրագրվեց նաև իրավական առումով՝ 2017 թ. ապրիլի 16-ին տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեի արդյունքում կառավարման ձևի փոփոխությամբ՝ խորհրդարանականից նախագահականի անցմամբ: Նման բարենպաստ իրավիճակում Էրդողանի վարչակարգը հակաահաբեկչական պայքարի քողի ներքո զանգվածային «որս» սկսեց տարատեսակ հակառակորդների դեմ միաժամանակ մի քանի ուղղություններով՝ նախկին գաղափարակից կրոնական գործիչ Ֆեթուլլահ Գյուլենի ձևավորած ցանցի՝ Գյուլենական համայնքի (հեղաշրջման փորձից հետո իշխանական քարոզչությամբ սկսեցին անվանել «Ֆեթուլլահական ահաբեկչական կազմակերպություն»՝ FETÖ), ուժային կառույցների, քրդական կազմակերպությունների ներկայացուցիչների դեմ: Անհաջող հեղաշրջման փորձին հաջորդած շրջանում ձերբալալվել, ազատազրկվել են հազարավոր զինծառայողներ, քաղաքական գործիչներ, այլախոհներ, լրագրողներ, փակվել են տարաբնույթ կազմակերպություններ, լրատվամիջոցներ և այլն: Նաև երկրի ներսում իրականացվող թիրախային կոշտ պայքարի, դրան զուգահեռ՝ տնտեսական լրջագույն խնդիրների հարցում մշտական դժգոհություններից սեփական հանրությանը շեղելու նպատակով Էրդողանի վարչակարգը սկսեց վարել ավելի հավակնոտ, ագրեսիվ և ապակայունացնող քաղաքականություն հարակից գրեթե բոլոր տարածաշրջաններում՝ Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում, Արևելյան

Միջերկրածովյան տարածաշրջանում: Որպես դրա գաղափարական հենք ընդունվեցին հետևյալ երեք սկզբունքները՝ նեոօսմանիզմը, պանթյուրքիզմը, պանիսլամիզմը:

Անկարայի նման քաղաքականության իրականացման համար բարենպաստ միջավայր էր ստեղծում նաև միջազգային իրավիճակը: Մի կողմից՝ ԱՄՆ-ում Դոնալդ Թրամփի գլխավորած վարչակազմի մերձավորարևելյան քաղաքականության առաջնահերթություններն էին, որոնց հիմքում դաշնակիցների հետ հարաբերություններն առնվազն չվնասելու միջոցով սեփական տնտեսական շահերի հետապնդումն էր, ինչպես նաև՝ Իսրայել պետության անվտանգության առավել ամրապնդումը: Ընդ որում, Վաշինգտոնի **նման** քաղաքականությունը և նրա առանձին դրսևորումները (օրինակ՝ Իրանի միջուկային համաձայնագրից միակողմանի դուրս գալը, Իրաքի, Սիրիայի քրդերի խնդիրները, ամբողջական Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ-ի դեսպանատունն այնտեղ տեղափոխելու, Գոլանի բարձունքների նկատմամբ Իսրայելի գերիշխանության ճանաչման վերաբերյալ որոշումները) սկզբունքային տարաձայնություններ էին առաջացրել ԱՄՆ-ԵՄ հարաբերություններում՝ պատճառ դառնալով տարածաշրջանային կարևոր գործընթացների վերաբերյալ Արևմուտքի միասնական դիրքորոշման բացակայության համար: Մյուս կողմից՝ Թուրքիա-Արևմուտք (բայց ոչ՝ Էրդողան-Թրամփ) հարաբերություններում ծագած լարվածությունից փորձում էր հնարավորինս օգտվել Ռուսաստանը՝ ինչպես երկկողմ օրակարգի մի շարք հարցերում խորացնելով հարաբերությունները, այնպես էլ հակամարտությունների տարբեր գոտիներում, Անկարայի հետ համագործակցությամբ, հասնելով որոշակի ստատուս քվոյի՝ փոխադարձ շահերի ճանաչմամբ: Նպատակը Թուրքիային «Արևմուտքից կամ ՆԱՏՕ-ից կտրելն» էր:

Վերոնշյալի համատեքստում սեփական երկրի դերը

լավագույնս գնահատում էր Էրդողանի վարչակարգը՝ շատ հաճախ սեփական խաղը խաղալով, սեփական շահերն առաջ մղելով և ինչպես դաշնակիցներին ու գործընկերներին, այնպես էլ հակառակորդներին կատարված փաստի առջև կանգնեցնելով («Մի գիշեր հանկարծակի կգանք»՝ Ռ. Թ. Էրդողանի հայտնի արտահայտության տրամաբանության շրջանակում): Թուրքիայի նման գործելաոճի դրսևորումները պարբերաբար, մեկը մյուսին հաջորդելով, ապակայունացրել են հակամարտությունների տարաբնույթ գոտիները:

Անկարան այս քաղաքականությունը վարում էր հստակ մարտավարությամբ: Թուրքիայի շահերի գոտի հանդիսացող որևէ տարածաշրջանային կամ ներպետական սառեցված, ակտիվացած կամ նոր ծագած հիմնախնդրում Թուրքիան իր միանշանակ, վճռորոշ և համակողմանի աջակցությունն էր առաջարկում հակամարտ կողմերից մեկին: Ստանալով գործելու հնարավորություն՝ առավելագույնս նպաստում էր իր հովանավորյալ դերակատարի դիրքերի բարելավմանը՝ զուգահեռաբար ապահովելով սեփական ռազմական, ռազմավարական, քաղաքական և տնտեսական ազդեցությունը հակամարտության տվյալ գոտում: Նշված սցենարների բնորոշող օրինակներ են Կատարի, սիրիական, լիբիական, պաղեստինահիսրայելական, ԼՂ հակամարտությունները, որոնցում Անկարայի ներգրավումն որակական փոփոխություն մտցրեց ինչպես հակամարտությունների բովանդակության, այնպես էլ այլ արտաքին դերակատարների միջամտության հնարավորությունների հարցում:

Հովանավորյալ դերակատարներին ցուցաբերվող աջակցությունը, կախված հակամարտության բնույթից, ենթադրում էր քայլերի հետևյալ հաջորդականությունը:

1.Ֆորմալ դերակատարների դեպքում (պետություն, կառավարություն) անհրաժեշտ երկկողմ իրավական բազայի ստեղծում՝ փոխօգնության պայմանագրի, աջակցության հայցի, ռազմական համագործակցության հուշագրի կամ այլ բնորոշ փաստաթղթի ստորագրման տեսքով և այլն: Ոչ ֆորմալների պարագայում՝ հակաահաբեկչական պայքարի կամ մարդասիրական իրավունքի նորմերի պաշտպանության հիմքով ռազմական միջամտության համար անհրաժեշտ միջավայրի արհեստականորեն ստեղծումը:

2. Թուրքական ԶՈՒ-ի, հատուկ ծառայությունների ներկայացուցիչներին, հետախուզության, ռազմական ոլորտի մասնագետներին անհրաժեշտության դեպքում նաև ռազմաբազայի ստեղծման պայմանավորվածության հիմքով ԶՈՒ ստորաբաժանումներ գործուղելու, սպառազինության մատակարարման և դրանց՝ զինված գործողություններին տարբեր հարթություններում ներգրավելու միջոցով:

3.Հատկապես Սիրիայի հյուսիսում հովանավորյալ մի շարք ընդդիմադիր խմբավորումների զինյալների, փախստականների ճամբարներից վարձկանների հավաքագրման և շուրջ 500-2000 դոլար ամսական աշխատավարձով տարբեր հակամարտությունների գոտիներում ներդրման եղանակով, որպես «թնդանոթի միս», կամ հատուկ հանձնարարությունների

իրականացման գործում կիրառելու նպատակով:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի նման գործելաոճը գագաթնակետին հասավ 2019 թ. հոկտեմբերից 2020 թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում, երբ Անկարան հաջորդաբար նախաձեռնեց կամ մասնակցեց հիմնախնդրի ակտիվացման գործընթացների, ռազմական գործողությունների Սիրիայում, Լիբիայում, Արևելյան Միջերկրականում, Իրաքում, Արցախում՝ ձգտելով և, ըստ էության, նաև հնարավոր առավելագույն ձեռքբերումների հասնելով գրեթե բոլոր հակամարտությունների գոտիներում, իհարկե նաև ապակայունացնելով տարբեր տարածաշրջաններ, վտանգելով միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, հանգեցնելով նաև մարդասիրական աղետի և, մեծ հաշվով, մնալով անպատիժ:

Թուրքիայի գործողությունները Սիրիայում

Թուրքական իշխանություններին հաջողվեց լրջագույն ռազմավարական և անվտանգային խնդիրներ լուծել Սիրիայի հյուսիսում: 2019 թ. հոկտեմբերի 9-ին Թուրքիայի ԶՈՒ-ը, հովանավորյալ սիրիական ընդդիմադիր խմբավորումների ներգրավմամբ, Սիրիայի հյուսիս-արևելքում քրդական ինքնավար կազմավորման դեմ սանձազերծեց «Խաղաղության ակունք» կոդային անվանումը ստացած ռազմագործողությունը, որով փաստացի, «անվտանգության գոտու» քողի ներքո, սեփական ռազմական ներկայությունն ապահովեց նաև Եփրատ գետից արևելք ընկած հատվածում: Այս գործողությունը, որոշ առումով, շարունակությունն էր 2016 թ. օգոստոսից 2017 թ. մարտ ամիսներին Սիրիայի հյուսիսում, Ազազ-Ջարաբլուս գոտում, «Եփրատի վահան», ինչպես նաև 2018 թ. հունվար-մարտ ամիսներին Աֆրինի շրջանում իրականացված «Ձիթենու ճյուղ» ռազմագործողությունների, որոնց նպատակն էր դեռևս 2014 թ. Սիրիայի քրդերի կողմից երկրի հյուսիսում, Թուրքիային սահմանակից շրջաններում, հռչակված 3 ինքնավար կանտոնների (շրջաններ)՝ Աֆրինի, Քոբանիի և Ալ-Ջազիրայի միջև ուղիղ ցամաքային կապի խափանումը:

Հոկտեմբերի 17-ին Անկարայում ամերիկա-թուրքական, ապա հոկտեմբերի 22-ին Սոչիում ռուս-թուրքական համաձայնություններից հետո, որոնց արդյունքում փաստացի դադարեցվեց «Խաղաղության

ակունք» գործողությունը, թեկուզ մասնակիորեն, բայց Անկարային հաջողվեց իրականացնել առնվազն իր ունեցած պլան մինիմումը. փաստացի տապալվեց առնվազն քրդական լայն ինքնավարության ձևավորման տեսլականը, ինչպես նաև երաշխավորվեց թուրքական ԶՈՒ-ի ազդեցությունն արդեն նաև Սիրիայի այդ հատվածում: Ինչ խոսք, անհավանական էր Անկարայի առաջ քաշած թուրք-սիրիական սահմանի, Եփրատից արևելք ընկած, ընդհանուր շուրջ 450 կմ երկայնքով տարածքում 32 կմ խորությամբ լիովին սեփական վերահսկողությամբ անվտանգության գոտու ձևավորման նախագիծը, որտեղից պետք է դուրս բերվեին քրդական «ահաբեկչական» խմբավորումները, և որտեղ ծրագրվում էր բնակեցնել Թուրքիայի տարածքում ապաստանած, ըստ իրենց տվյալների, ավելի քան 3,5 մլն սիրիացի փախստականներին՝ դրանով նաև բնական պատնեշ ձևավորելով քուրդ ժողովրդի երկու՝ Սիրիայի և Թուրքիայի հատվածների միջև: Բայց և այնպես, սեփական ռազմագործողությամբ Անկարան մերժեց նաև քրդերի առանցքային դաշնակցի՝ ԱՄՆ-ի կողմից իրեն պարտադրվող անվտանգության գոտու տարբերակը՝ 10-15 կմ խորությամբ, համատեղ վերահսկողությամբ: Իսկ ԱՄՆ-ի ներկայությունն այդ տարածաշրջանում միանշանակորեն ենթադրում էր քրդական կառույցների հանդեպ սկզբունքային հովանավորություն՝ քրդերի համար նախընտրելի կարգավիճակով: Արդյունքում, թեպետ Թուրքիային հաջողվեց հասնել իր ծրագրած անվտանգության գոտու ձևավորմանը՝ շուրջ 450-ից ընդամենը 120 կմ երկայնքով, բայց՝ զուգահեռաբար կարողացավ լուծել մի շարք ռազմավարական խնդիրներ: Ընդհատվեց Սիրիայում քրդական երեք կանտոններից երկուսի՝ Եփրատ գետից արևելք գտնվող Քոբանիի և Ալ-Ջազիրայի միջև (առաջինը՝ Աֆրինը 2018 թ. մարտից անցել է Անկարայի փաստացի վերահսկողության ներքո) ուղիղ կապը՝ միջանկյալ շրջաններում ստվարաթիվ սիրիացի փախստականներ բնակեցնելու հնարավորությամբ: Բացի այդ՝ սիրիական բանակի և Ռուսաստանի դերակատարման մեծացմամբ, գոնե առժամանակ, նվազագույնի հասցվեց «Ռոժավայի»՝ Սիրիական Քրդստանի ստեղծման հնարավորությունը, որը սիրիական հակամարտությանը Թուրքիայի միջամտելու առանցքային դրդապատճառներից մեկն էր:

Հաջորդը 2020 թ. փետրվարի 27-ից մարտի 6-ը Սիրիայի հյուսիս-արևմտյան Իդլիբ նահանգում Թուրքիայի նախաձեռնած արդեն չորրորդ՝ «Գարնանային վահան» կոդային անվանումով ռազմագործողությունն էր: Դրա նպատակը 2020 թ.սկզբից սիրիական կառավարական ուժերի և նրանց դաշնակիցների կողմից կրկին ակտիվացած, 2017 թ. մայիսին սիրիական հակամարտության կարգավորմանը միտված, «Աստանայի ձևաչափով» նախատեսված 4 դեէսկալացիոն գոտիներից վերջինի՝ Իդլիբ նահանգի և հարակից որոշ շրջանների վերջնական ազատագրման ռազմագործողության կասեցումն էր: Այս գործողությունը դադարեցվել էր դեռևս 2018 թ. սեպտեմբերի 17-ին Սոչիում Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների

Թուրքական զորքը Սիրիայում

հանդիպման ժամանակ ստորագրված հուշագրի արդյունքում հաստատված հրադադարի ռեժիմով: Ըստ այդմ՝ Թուրքիան պարտավորվում էր զատել շրջանում գործող ահաբեկչական և չափավոր ընդդիմադիր խմբավորումներին, իսկ ռուս և թուրք զինվորականները համատեղ դիտարկելու էին ապառազմականացված գոտում հաստատված հրադադարի ռեժիմը: Մինչդեռ հուշագրին հաջորդած շուրջ 1,5 տարվա ընթացքում Անկարան այդպես էլ չէր կարողացել իրականացնել ստանձնած պարտավորությունները: Ընդ որում, հարկ է նշել, որ Անկարայի կողմից հերթական ռազմական սրացման հետևանքով արձանագրվեց աննախադեպ լարվածություն սիրիական հակամարտության ողջ ընթացքում թուրք-սիրիական երկկողմ հարաբերություններում, որն ուղղակիորեն անդրադաձավ նաև Թուրքիա-Ռուսաստան, Թուրքիա-Իրան հարաբերությունների վրա՝ հանգեցնելով խորքային հակասությունների և դրանց դրսևորումների՝ հատկապես քաղաքական և հոետորաբանական հարթություններում: Թուրքիայի ռազմագործողությունը դադարեցվեց մարտի 5-ին Մոսկվայում տեղի ունեցած ռուս-թուրքական բարձր մակարդակի բավականին բարդ, շուրջ 6 ժամ տևողությամբ, բանակցություններից հետո ստորագրված արձանագրությամբ: Դրա արդյունքում, ըստ էության, Թուրքիային հաջողվեց հասնել Իդլիբի ազատագրման ռազմագործողության կասեցմանը և սեփական դիրքերի պահպանմանը՝ առժամանակ ընդհատելով սիրիական հիմնախնդրի՝ վերջին ռազմական թնջուկի հանգուցալուծման գործընթացը, որից հետո միայն հնարավոր կլինի անցում կատարել խաղաղ կարգավորման շրջափուլ:

Թուրքիայի ներգրավումը լիբիական հակամարտության մեջ

2019-2020 թթ. լիբիական հակամարտությունն որակապես նոր փուլ թևակոխեց մասնավորապես մի շարք արտաքին դերակատարների առավել ակտիվ դերակատարման հետևանքով: Երկու հիմնական հակամարտ կողմերից մեկին՝ մայրաքաղաք Տրիպոլիում գործող, ՄԱԿ-ի կողմից ճանաչված, Լիբիայի ազգային համաձայնության կառավարությանը (ԱՀԿ), աջակցում են Թուրքիան, Կատարը, իսկ երկրի արևելյան շրջանները վերահսկող Լիբիական ազգային բանակին (ԼԱԲ)՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, ԱՄԷ-ն, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան և այլն:

2019 թ. ապրիլի սկզբին ԼԱԲ-ը Խալիֆա Հաֆթարի հրամանատարությամբ հարձակում նախաձեռնեց մայրաքաղաք Տրիպոլիի դեմ, որը Թուրքիայի միջամտության հետևանքով փաստացի ձախողվեց: ԱՀԿ-ն, ըստ էության, Անկարայի ապօրինի՝ ՄԱԿ-ի կողմից հայտարարված բեռնարգելքի խախտմամբ զանգվածային ռազմական մատակարարումների, սիրիացի վարձկանների ներգրավման շնորհիվ կարողացավ ոչ միայն տապալել ռազմագործողությունը, այլև հետագայում բարելավել սեփական դիրքերը: Ռազմական հարթությունում Թուրքիայի և ԱՀԿ-ի գործողությունները համակարգվում էին հիմնականում Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (MIT) կողմից: Թուրքիայի իշխանություններն իրենց ցուցաբերած վճռորոշ աջակցությունն ԱՀԿ-ին ավելի ուշ «վաճառեցին» բավականաչափ թանկ գնով՝ ստանալով ռազմավարական, քաղաքական, ֆինանսատնտեսական, էներգետիկ ոլորտներում էական ձեռքբերումներ:

Արդեն 2019 թ. նոյեմբերի վերջին Թուրքիայի ու Լիբիայի (ԱՀԿ) կառավարությունների միջև ստորագրվեցին Ծովային սահմանների հստակեցման և Անվտանգության ու ռազմական համագործակցության մասին համաձայնագրերը: Ծովային համաձայնագիրը վերաբերում էր Միջերկրական ծովում երկու երկրների միջև ծովային գոտիների սահմանազծման խնդրին, ինչպես նաև միջերկրածովյան ափերի միջակայքում բացառիկ տնտեսական գոտու (ԲՏԳ) ստեղծմանը: Այս փաստաթղթով, ըստ էության, Անկարան հավակնություններ դրսևորեց Միջերկրական ծովի տվյալ հատվածում գտնվող Հունաստանի ԲՏԳ-ի դեմ: Նման քայլով Թուրքիան նպատակ էր հետապնդում, ինչպես միջերկրածովյան տարածաշրջանում գերակայություն ապահովելուն միտված «Կապույտ հայրենիքի» (Mavi Vatan) ռազմավարության առարկայացմանը, Միջերկրական ծովում սեփական ԲՏԳ-ի միակողմանի ընդլայնման եղանակով, այնպես էլ Իսրայելի, Հունաստանի ու Կիպրոսի կողմից նախաձեռնված EastMed գազատարի կառուցման ծրագրի տապալմանը, որով նախատեսվում է այդ երկրներից արդյունահանվելիք գազը հասցնել Եվրոպայի հարավ (Իտալիա)՝ Թուրքիայի տարածքը շրջանցելով: EastMed-ի կառուցումը մեծ հարված է թե՛ գազային խոշոր հանգույց դառնալու, թե՛ գազի մատակարարման սեփական աղբյուրները դիվերսիֆիկացնելու Անկարայի ծրագրերին:

Լիբիայի ԱՀԿ կառավարության ղեկավար Ֆայիզ Սարաջը և Էրդողանը

Ռազմական համագործակցության մասին պայմանագիրն ենթադրում էր ՀՈՒ և ոստիկանական առանձին ստորաբաժանումների ուսուցում ու նախապատրաստում, երկու երկրների զինվորականների փոխհարաբերությունների ամրապնդում և այլն: Իսկ արդեն 2020 թ. հունվարի 2-ին, համաձայն Ֆայիզ ալ-Սարաջի գլխավորած ԱՀԿ-ի կողմից ռազմական աջակցության վերաբերյալ պաշտոնական խնդրանքի, Թուրքիայի խորհրդարանն ընդունեց Լիբիա ՀՈՒ ուղարկելու մասին օրինագիծը՝ համաձայն երկրի Սահմանադրության 92-րդ հոդվածի:

Իրավական անհրաժեշտ ընթացակարգերի ապահովումից հետո, ըստ էության, Ռ. Թ. Էրդողանի վարչակարգի ձեռքերն ավելի ազատվեցին Լիբիայում: Թուրքիայի ներգրավվածությունն արաբական այդ երկրում դրսևորվեց ինչպես թուրք զինծառայողների, ռազմական խորհրդատուների գործուղմամբ, ռազմական մատակարարումների ընդլայնմամբ, այնպես էլ ռազմաբազաների ստեղծման հնարավորությամբ (Ալ-Ուաթիյա ավիաբազան, Միսուրատա ծովային բազան): Թուրքական ՌՕՈ-ի, ՌԾՈ-ի, ՀՕՊ համակարգերի, ինչպես նաև, տարբեր տվյալներով, Սիրիայից հավաքագրված շուրջ 16000 զինյալների (օրինակ՝ Օմար ալ-Մուխթար խմբավորման շարքերում) ներգրավվածությունը սկզբունքային ազդեցություն ունեցավ ներլիբիական հակամարտության իրավիճակի վրա՝ զգալիորեն բարելավելով ԱՀԿ-ի բավականաչափ խոցելի դիրքերը: Այս ուղղությամբ Անկարայի համար անգամ զսպող նշանակություն չունեցավ 2020 թ. հունվարի 19-ին Բեռլինում կայացած Լիբիայի հարցով միջազգային գագաթնաժողովը, որի արդյունքում մասնակից երկրները (ՌԴ, ԱՄՆ, ՄԲ, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Թուրքիա, Եգիպտոս, ԱՄԷ) կազմել էին 55 կետից բաղկացած համաձայնագիր: Փաստաթղթի համաձայն՝ Լիբիայում պետք է հաստատվեր հրադադար, արգելվեր հակամարտությանն արտաքին միջամտությունը, բացի այդ՝ մասնակից երկրները պարտավորվում էին զերծ մնալ հակամարտ կողմերից որևէ մեկին աջակցելուց և սպառազինություն մատակարարելուց:

Ըստ էության, Լիբիայում Թուրքիայի ռազմական միջամտությունը, դրա արդյունքում արձանագրված ձեռքբերումները նպաստեցին Սարաջի կառավարության դիրքերի բարելավմանը: Զուգահեռաբար՝ Անկարայի քայլերը հավելյալ կերպով ապակայունացրեցին իրավիճակն ինչպես ներլիբիական հակամարտ կողմերի միջև, այնպես էլ սրեցին Թուրքիայի և հակամարտությունում ներգրավված մյուս արտաքին դերակատարների՝ Ռուսաստանի, արաբական երկրների, Ֆրանսիայի հետ հարաբերությունները:

Թուրքիայի սադրիչ գործողություններն Արևելյան Միջերկրականում

Լիբիական հակամարտությանը Թուրքիայի ներգրավվածությունից և հատկապես ԱՀԿ-ի հետ ծովային սահմանների սահմանազատման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումից հետո իրավիճակը սրվեց նաև Արևելյան Միջերկրածովյան տարածաշրջանում: Տարածաշրջանի երկրների և Թուրքիայի միջև լարվածությունն աճեց հատկապես 2020-թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին, երբ, Հունաստանի գլխավորությամբ, մի շարք երկրներ (Կիպրոս, Ֆրանսիա, Իտալիա, Եգիպտոս, ԱՄԷ) տարաբնույթ քայլեր նախաձեռնեցին՝ զսպելու համար Անկարայի հավակնությունները, իսկ Թուրքիան հունական ԲԳՏ-ում հետազոտական աշխատանքներ իրականացնելով էլ ավելի ապակայունացրեց իրավիճակը Արևելյան Միջերկրականում:

ԵՄ անդամ երկրների և Թուրքիայի միջև լարվածությունն ուղեկցվել է կտրուկ հռետորաբանությամբ, ռազմական մանևրներով, զորավարժություններով՝ բավականաչափ պայթյունավտանգ իրավիճակ ստեղծելով նաև այս տարածաշրջանում: Որպես օրինակ՝ հուլիս-սեպտեմբեր ամիսներին թուրքական «Օրուչ Ռեիս» նավը ռազմական նավերի ուղեկցությամբ որոշակի պարբերականությամբ սեյսմիկ հետազոտական աշխատանքներ է իրականացրել հունական կղզիների մերձակայքում:

Թուրքիայի գործողությունների քննադատությամբ պարբերաբար հանդես են եկել ինչպես ԵՄ, այնպես էլ այդ կառույցի անդամ առանձին երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ: Բացի այդ՝ օգոստոսի 6-ին Հունաստանի և Եգիպտոսի արտգործնախարարներ Նիկոս Դենդիասը և Սամեհ Շուքրին ստորագրել են Միջերկրական ծովում բացառիկ տնտեսական գոտու վերաբերյալ համաձայնագիրը, որի առնչությամբ հույն նախարարը շեշտել է, որ համաձայնագիրն օրինական է և արտացոլում է տարածաշրջանում մարտահրավերների դեմ պայքարի հարցում երկու երկրների համագործակցությունը: Ի պատասխան համաձայնագրի ստորագրմանը՝ թուրքական կողմը քննադատել է այն, նշելով, որ չի ճանաչում այդ համաձայնագիրը, և այն որևէ իրավական ուժ չունի: Ի դեպ, հունիսի 9-ին նմանատիպ համաձայնագիր էր կնքվել Հունաստանի ու Իտալիայի միջև՝ Հոնիական ծովի սահմանազատման վերաբերյալ: Հարկ է շեշտել, որ այս պետությունները նման քայլերի են դիմել՝ Միջերկրականում Թուրքիայի գործունեությանը և բնական պաշարներին տիրանալու ձգտումներին հակազդելու համար: Նույն նպատակով Արևելյան Միջերկրականում Հունաստանի, Ֆրանսիայի, Կիպրոսի Հանրապետության, Իտալիայի, ԱՄՆ-ի, ԱՄԷ-ի մասնակցությամբ տարբեր ձևաչափով անցկացվել են զորավարժություններ: Իրավիճակի լիցքաթափման օգտին են հանդես եկել ՄԱԿ-ը, ՆԱՏՕ-ն, ԵՄ-ն:

Թուրքական զորքը Ադրբեջանում

Թուրքիայի սադրիչ գործելաոճը, որպես առանցքային թեմա, ներառվել է ԵՄ անդամ երկրների ղեկավարների՝ հոկտեմբերի 1-2-ի և դեկտեմբերի 10-11-ի գագաթնաժողովների օրակարգերում: Վերջինի ընթացքում որոշվել է ընդլայնել Թուրքիայի դեմ պատժամիջոցները Միջերկրական ծովի արևելյան հատվածում այդ երկրի ապօրինի գործողությունների պատճառով: Ամփոփիչ հայտարարությունում մասնավորապես նշվել է. «ԵՄ-ն շարունակում է հավատարիմ մնալ միության և դրա անդամ պետությունների շահերի պաշտպանությանը, ինչպես նաև տարածաշրջանային կայունության պահպանմանը: Այս կապակցությամբ գագաթնաժողովը հանձնարարում է ԵՄ Խորհրդին լրացուցիչ սև ցուցակ հաստատել՝ հիմնվելով Միջերկրական ծովում Թուրքիայի ապօրինի գործունեության պատճառով սահմանափակող միջոցների մասին 2019 թ. նոյեմբերի 11-ի որոշման վրա»: Նշվել է, որ այդ պատժամիջոցի տակ կընկնեն այն անհատները և կազմակերպությունները, որոնք մասնակցել են Արևելյան Միջերկրականում Թուրքիայի հորատման աշխատանքներին: ԵՄ ղեկավարները ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ժ. Բորելին և Եվրահանձնաժողովին հանձնարարել են Անկարայի դեմ պատժամիջոցների ընդլայնման այլ տարբերակներ ներկայացնել 2021 թ. մարտին կայանալիք գագաթնաժողովին: Թուրքիայի սադրիչ գործողություններին ի պատասխան՝ ԵՄ-ի ոչ վճռական քայլերը կարելի է մի կողմից՝ պայմանավորել ԱՄՆ-ի նոր վարչակազմի՝ թուրքական քաղաքականությանը ծանոթանալու սպասումով, մյուս կողմից՝ տարածաշրջանում Անկարայի քաղաքականության զգալի մեղմացման հանգամանքով, որը ևս կարճաժամկետ մարտավարական նպատակ ունի (այդ մասին խոսվում է հոդվածի վերջաբանում):

Թուրքիայի ռազմագործողություններն Իրաքում

Օգտվելով Իրաքում ստեղծված ներքաղաքական անկայուն իրավիճակից՝ 2020 թ. հունիսի 15-ի կեսգիշերին Թուրքիայի ՋՈՒ-ն այդ երկրի հյուսիսային Հաֆթանին շրջանում «Քրդստանի աշխատավորական կուսակցության» (PKK) դեմ նախաձեռնեց նախ՝ «Արծվի ճանկ» մեկօրյա ռազմագործողությունը, ապա՝ հունիսի 17-ին՝ «Վագրի ճանկ» կոդային անվանումն ստացած գործողությունը: Հատուկ նշանակության ուժերի, ՌՕՈՒ-ի և ՀՌԿ համակարգերի լայն ներգրավմամբ, ըստ թուրքական կողմի, խոցվել են քրդերի հարյուրավոր թիրախներ:

Ի պատասխան՝ հունիսի 16-ին Իրաքի ԱԳՆ է կանչվել այդ երկրում Թուրքիայի դեսպանը, ում հանձնվել է բողոք-հուշագիր, որով դատապարտվել են Թուրքիայի

կողմից Իրաքի ինքնիշխանության և տարածքային անձեռնմխելիության խախտումները: Բացի այդ՝ հուլիսի 5-ին Իրաքի ԱԳՆ խոսնակ Ահմադ ալ-Սահաֆը հայտարարել է, որ Բաղդադը կարող է դիմել ՄԱԿ ԱԽ-ին, Արաբական պետությունների լիգային, Իսլամական համագործակցության կազմակերպությանը և այլ միջազգային կառույցների՝ Իրաքի տարածքում Թուրքիայի ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով: ԱԳՆ խոսնակը նաև շեշտել է, որ Իրաքի իշխանությունները Թուրքիայի դեմ կարող են կիրառել նաև այլ լծակներ, այդ թվում՝ տնտեսական. Իրաքում գործում են տասնյակ թուրքական տնտեսական և ներդրումային ընկերություններ: Երկու երկրների միջև ռազմական իրավիճակը սրվեց հատկապես օգոստոսի 11-ին, երբ Իրաքի հյուսիսային Էրբիլ նահանգում Թուրքիայի ՋՈՒ-ին պատկանող ԱԹՍ-ի հարվածների հետևանքով սպանվեցին Իրաքի ՋՈՒ-ի սահմանապահ ծառայության 2 բարձրաստիճան սպա՝ Սահմանային անվտանգության ուժերի 2-րդ բրիգադի հրամանատար, գեներալ Մոհամմեդ Ռուշդին և 3-րդ բրիգադի հրամանատար, գեներալ Ջուբաիր Հալին: Սպանվել էր նաև զինվորականներին տեղափոխող մեքենայի վարորդը: Մի քանի իրաքցի զինվորականներ էլ վիրավորվել էին: Ըստ որոշ տեղեկությունների՝ հարձակումը տեղի էր ունեցել այն ժամանակ, երբ զինվորականները հանդիպել են PKK-ի զինյալների հետ՝ Իրաքի տարածքից գրոհներն ու բախումները դադարեցնելու նպատակով: Այս միջադեպից անմիջապես հետո պաշտոնական Բաղդադը չեղարկեց ԹՀ ՊՆ Հ. Աքարի այցն Իրաք, որը նախատեսված էր օգոստոսի 13-ին: Նույն օրը Թուրքիայի ԱԳՆ-ն հայտարարություն տարածեց PKK-ի դեմ Թուրքիայի ռազմագործողությունների վերաբերյալ, որում շեշտվում էր, թե Իրաքի որոշ շրջաններում հաստատված զինյալները Թուրքիայի դեմ իրականացրած հարձակումներով սպառնում են նաև Իրաքի ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը, անվտանգությանն ու կայունությանը: Ըստ հայտարարության՝ PKK-ի դեմ միջոցառումներ ձեռնարկելն առաջին հերթին Իրաքի պատասխանատվության ներքո գտնվող հարց է, և այդ հարցով Թուրքիան պատրաստ է համագործակցության Իրաքի հետ:

Մինչդեռ Իրաքում ստեղծված ներքաղաքական բարդ իրադրության պայմաններում այդ երկրի իշխանություններն այդպես էլ չդիմեցին վճռական գործողությունների՝ Թուրքիայի ապօրինի գործողությունները կասեցնելու համար: Ավելին, Իրաքում առարկայական է դարձել այն մտավախությունը, որ Թուրքիան ծրագրում է Սիրիայի օրինակով անվտանգության գոտի ձևավորել «Վագրի ճանկ» ռազմագործողության թատերաբեմում: Թուրքիայի այդ ծրագիրը կարող է իրականացվել տարածաշրջանում PKK-ի զինյալներից ազատված տարածքներում ժամանակավոր բազաներ հիմնելու տրամաբանությամբ: Այս առումով՝ արդեն իսկ առկա են ավելի քան տասը ժամանակավոր բազաներ: Կարող են ստեղծվել նաև նորերը:

Ավելին, վերոնշյալի համատեքստում իրավիճակից կրկին լավագույնս փորձեց օգտվել Թուրքիան: 2021 թ. հունվարի 19-ին Բաղդադում Իրաքի վարչապետ Մուստաֆա ալ-Քազիմիի հետ տեղի ունեցած բանակցությունների ընթացքում ԹՀ ՊՆ պատվիրակությունը, նախարար Հուլուսի Աքարի գլխավորությամբ, շահարկելով Իրաքի համար այնքան կարևոր Տիգրիս գետի ջրային ռեսուրսների շուրջ մշտական համաձայնության հարցը և կապելով այն ահաբեկչության դեմ Թուրքիայի և Իրաքի համատեղ պայքարի անհրաժեշտության հետ, պատեհ սակարկության օրակարգ է ստեղծել՝ լեգիտիմացնելու նպատակով այդ երկրում սեփական ռազմական ներկայությունը:

Թուրքիայի իշխանությունների նման գործելաոճը ևս հավաստում է, որ Իրաքում կանխատեսվող հետագա անկայունության պայմաններում Անկարան ձգտելու է հնարավորինս առաջ մղել սեփական շահերը՝ հավելյալ կերպով ապակայունացնելով իրավիճակն արաբական այդ երկրում ևս:

Թուրքիայի ներգրավվածությունը արցախյան պատերազմում

Հարավային Կովկասը ևս զերծ չմնաց Թուրքիայի հավակնոտ և ապակայունացնող քաղաքականության դրսևորումներից ու հետևանքներից: Անկարայի ծրագրերում մշտապես եղել է, քաղաքական, տնտեսական ազդեցությանը զուգահեռ, առնվազն օրինական ռազմական ներկայության ապահովումն այս տարածաշրջանում ևս: Դրա համար իրական հնարավորություն կարող էին ընձեռել ԼՂ հակամարտության ակտիվացումը և դրա կարգավորման գործընթացում Թուրքիայի ներգրավման երաշխավորումը, կամ գոնե Թուրքիայի մասնակցությամբ որևէ նոր ձևաչափի նախաձեռնումը՝ այս տարածաշրջանի առանցքային արտաքին դերակատար Ռուսաստանի հետ համագործակցությամբ: Հետևաբար, եթե 2020 թ. հուլիսին ադրբեջանա-հայկական սահմանի տավուշյան հատվածում Բաքվի կողմից հրահրված ռազմական էսկալացիայի ողջ ընթացքում Թուրքիայի իշխանությունները սահմանափակվեցին հնարավոր ամենաբարձր մակարդակով Ադրբեջանին քաղաքական հոետորաբանության և քարոզչական առումներով աջակցության ցուցաբերմամբ, ապա սեպտեմբերի 27-ին Բաքվի կողմից Արցախի դեմ նոր լայնամասշտաբ պատերազմի և սանձազերծման գործում, և՛ ողջ ընթացքում ունեցան ուղիղ մասնակցություն: Այն իրականացվեց գործընթացների ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքական, դիվանագիտական հարթություններում՝ ուղղակիորեն ազդելով պատերազմի ընթացքի և հետևանքների վրա: Անկարայի համակողմանի աջակցությունը Բաքվին դրսևորվեց պատերազմի նախապատրաստման փուլում, ինչպես նաև ողջ ընթացքում՝ հուլիս-օգոստոս ամիսներին աննախադեպ մասշտաբով զորավարժությունների անցկացմամբ, երկկողմ

բարձրաստիճան շփումների ընթացքում ընդհանուր քաղաքական, քարոզչական մարտավարության մշակմամբ, Սիրիայի հյուսիսում թուրքահպատակ մի շարք խմբավորումների շարքերից, Թուրքիայում սիրիացի փախստականների ճամբարներից հազարավոր վարձկանների հավաքագրմամբ և ռազմագործողությունների թատերաբեմ գործուղմամբ, ահռելի ծավալով տարաբնույթ զինատեսակների շարունակական մատակարարումներով, ռազմական հրահանգիչների, տարբեր աստիճանի զինվորականների, հատուկջոկատայինների տրամադրմամբ և այլն: Նաև Թուրքիայից անդադար ստացվող մարդուժի, գերժամանակակից ԱԹՍ-ների, հեռահար հրթիռների միջոցով Ադրբեջանին հաջողվեց ռեսուրսային առավելություն ստանալ հայկական կողմի նկատմամբ, ինչը վճռորոշ ազդեցություն ունեցավ պատերազմի ընթացքի վրա: Վերոնշյալից բացի՝ թուրք բարձրաստիճան սպաների, հատուկջոկատայինների կողմից համակարգված առանձին գործողություններն ապահովեցին ադրբեջանական կողմի համեմատաբար արագ հաջողություններն առանձին կարևոր ռազմական սցենարների մասով:

Զուգահեռաբար՝ Անկարայի կողմից հետևողականորեն ցուցաբերված քաղաքական և դիվանագիտական աջակցության շնորհիվ Բաքուն կարողացավ հաջողությամբ դիմակայել միջազգային ահռելի ճնշումներին՝ հնարավորինս պահպանելով անզիջում կեցվածք: Իսկ ԵԱՀԿ ՄԽ երեք համանախագահ երկրների նախագահների մակարդակով հումանիտար հրադադարի վերաբերյալ նախաձեռնություններն այդպես էլ չպահպանվեցին՝ բացառապես գործընթացում Անկարային չներգրավելու պատճառով, քանի որ Թուրքիայի նախագահին անհրաժեշտ էր սեփական հանրությանը ցույց տալ հերթական հաղթանակի հաջողված օրինակ:

Սրահետևանքը եղավ այն, որ ադրբեջանաթուրքական ԶՈւ-ի կողմից տևական քարոզչության արդյունքում թյուրքական աշխարհի համար որոշակի նշանակություն ունեցող Շուշի քաղաքի գրավումից (որը ներկայացվում է որպես հաղթանակի խորհրդանիշ) և Ռուսաստանի հետ պայմանավորվածության ձեռքբերումից հետո թյուրքական տանդեմը համաձայնեց դադարեցնել պատերազմական գործողությունները: Իսկ նոյեմբերի 9-ին ստորագրված հրադադարի վերաբերյալ եռակողմ հայտարարության 5-րդ, 9-րդ կետերն ուղղակիորեն առնչվում են Անկարայի շահերին: Առաջին դեպքում հրադադարի ռեժիմը վերահսկելու նպատակով ռուս-թուրքական խաղաղապահ կենտրոնի ստեղծմամբ (չնայած Թուրքիայի մասին տեքստում նշված չէ, բայց գործառույթը վերապահված է հենց Անկարային) երաշխավորվում է Թուրքիայի ԶՈւ-ի օրինական ներկայությունն Ադրբեջանում: Հայտարարության վերջին կետով նախատեսվող տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակման դեպքում ապահովվում է ինչպես Թուրքիայի ավելի նպաստավոր ուղիղ կապը նաև մայրցամաքային Ադրբեջանի, այնպես էլ Կենտրոնական Ասիայի թյուրքախոս երկրների հետ: Ուստի պատահական չէ, որ թուրք բարձրաստիճան պաշտոնյաները, պատերազմի հաղթական ավարտից ոչ պակաս, կարևորում են հենց հայտարարության այս կետի դրույթները: Բացի նշված հիմնախնդիրներից՝ Թուրքիան բավականաչափ ճկուն կերպով փորձեց օգտագործել նոր կորոնավիրուսի համավարակի պատճառով առաջացած միջազգային ճգնաժամը՝ տարբեր երկրներին մարդասիրական աջակցության ցուցաբերման միջոցով ընդգծելով սեփական հեղինակությունը: Նույն կերպ Անկարան գործեց նաև 2020 թ. օգոստոսի 4-ին Բեյրութի նավահանգստում տեղի ունեցած պայթյունների հետևանքով Լիբանանում սրված ճգնաժամի դեպքում: Փոխնախագահ Ֆուատ Օքթայի և Մևլութ Չավուշօղլուի գլխավորությամբ օպերատիվ կերպով բարձրաստիճան պատվիրակություն գործուղվեց և համակողմանի աջակցություն ցուցաբերվեց Լիբանանի իշխանություններին: Միաժամանակ, հաշվի առնելով Լիբանանում բախվող միջազգային շահերի բազմազանությունը, Անկարային դեռևս չի հաջողվում մեծացնել ազդեցությունն արաբական այդ կարևոր երկրում:

Մինչդեռ, հարկ է նաև նշել, որ ԱՄՆ-ի նախագահի ընտրությունների նախնական արդյունքների ամփոփումից անմիջապես հետո, երբ ակնհայտ էր Սպիտակ տանը նոր վարչակազմի հաստատման հանգամանքը, Թուրքիայի իշխանությունները կարծես կտրուկ նոր արտաքին քաղաքական մարտավարություն որդեգրեցին՝ ձգտելով հնարավորինս մեղմել նախկին ապակայունացնող և հավակնոտ գործելաոճը նաև վերոնշյալ տարածաշրջանների հակամարտության գոտիներում կամ խնդրահարույց հարաբերություններում: Նախկին սադրիչ քաղաքականությանը գոնե առայժմ փոխարինելու է եկել համգործակցային միջավայր ձևավորելուն միտված հոետորաբանությունը, որը, թերևս, ունի խորքային վերլուծությունների և հաշվարկների արդյունքում ձևավորված մարտավարական հիմքեր:

Դեռևս անցյալ տարեվերջին, Ջ. Բայդենի հաղթանակի վերաբերյալ տեղեկատվության տարածումից անմիջապես հետո, թուրքական իշխանությունները պատվիրել էին երկրի առանցքային ուղեղային կենտրոններին՝ ներկայացնել մարտավարական գործողությունների ծրագրային առաջարկներ՝ ամերիկյան նոր վարչակազմի հետ հնարավորինս արդյունավետ աշխատելու վերաբերյալ: Ուստի Անկարայի արտաքին քաղաքականության մեջ նկատվող փոփոխությունները կամ դրանց իմիտացիան, հնարավոր է, հենց նման դիրքավորման անհրաժեշտության տրամաբանության շրջանակներում են և գոնե կարճաժամկետ հեռանկարում հետախուզական բնույթ են կրում, որի նպատակը Ջ. Բայդենի վարչակազմի կողմից համարժեք վերաբերմունքի արժանանալն է՝ առնվազն Դ.Թրամփի պաշտոնավարման շրջանին հատուկ «ամենաթողության մթնոլորտում» արձանագրած մի շարք շոշափելի ձեռքբերումները «մարսելու» և համակողմանի բազմաշերտ պատժամիջոցների տեսքով հետևանքներից խուսափելու նպատակով:

Արդիականացումը որպես քաղաքական ճգնաժամի հաղթահարման գրավական: Դաշնակցության դերը

Գևորգ Ղուկասյան
Քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ, «Երկիր» ռազմավարական ծրագրավորման հիմնադրամի տնօրեն

1974 թվականին Պորտուգալիայում «Մեխակների» հեղափոխության արդյունքում տապալվեց բռնապետ Ա. Սալազարի վարչակարգը: Պորտուգալիայում սկսված ժողովրդավարական գործընթացները տարածվեցին Հարավային Եվրոպայում, Հունաստանում, անցան Լատինական Ամերիկա, Հարավարևելյան Ասիա, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո զարգացան հետխորհրդային տարածքում: Քաղաքական գիտության մեջ այդ ընթացքն անվանվեց Ժողովրդավարացման երրորդ ալիք: Այն ուներ և ունի ինչպես իր ջերմեռանդ պաշտպանները և համոզված քննադատները, այնպես էլ առարկայորեն գնահատող հետազոտողները: Վերջիններս նկատում են, որ ժողովրդավարացման երրորդ ալիքի երկրներին պատմաքաղաքական որոշակի ժամանակահատվածում հատուկ է քաղաքական զարգացման խոր ճգնաժամը, որն ունի ինչպես իր առարկայական, այնպես էլ ենթակայական պատճառները: Օբյեկտիվ պատճառ է դիտվում հատկապես այն հանգամանքը, որ Արևմուտքից ուղղորդվող քաղաքական զարգացման նոր տրամաբանությունը ժողովրդավարական արժեքների համատեքստում հաճախ հանգեցնում էր քաղաքական զարգացման ճգնաժամի այն առումով, որ հասարակական կացութաձևը և պետական ինստիտուտներն ի զորու չէին ամբողջությամբ յուրացնելու «նոր արժեքները»: Հաճախ արևմտյան փորձի տեղայնացումը սահուն չէր ընթանում, ունենում էր մասնակի արդյունք, հետևաբար քաղաքական զարգացման ամբողջ պարադիգման խախտվում էր:

Քաղաքական գործընթացի որակի համար լրացուցիչ հարված էր երկրևեռ աշխարհից անցումը բազմաբևեռ աշխարհին: Այդ անցման մի որոշակի ժամանակահատվածում ամերիկյան քաղաքագիտական մտքի ներկայացուցիչները համոզված էին, որ ԱՄՆ-ի գլխավորությամբ միաբևեռ աշխարհին անցումը հնարավոր է: Միաբևեռ աշխարհի հայեցակարգի ակադեմիական և պրակտիկ քաղաքական անհնարինության ընդունումը, սակայն, չթուլացրեց տարբեր երկրներում և հատկապես Հարավային Կովկասում ազդեցության գոտիների նվաճման/պահպանման համար աշխարհի հզոր տերությունների պայքարը, ինչն էլ հաճախ ուղեկցվելով միջէթնիկ հակամարտություններով, խորացնում էր քաղաքական զարգացման ճգնաժամը:

Ընդհանրապես քաղաքական զարգացումը սահմանվում է որպես քաղաքական որակական փոփոխությունների կուտակման գործընթաց, որը կարող է ներառել քաղաքական գործընթացի փուլերը, ինստիտուտները կամ համակարգերը: Համաշխարհային քաղաքագիտական մտքի երախտավորներն աստիճանաբար հասկացան, որ 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի առաջին քառորդի քաղաքական զարգացումը ժողովրդավարացման երրորդ, ոմանց կարծիքով՝ արդեն նաև չորրորդ ալիքի երկրներում չի հանգեցնում որակական փոփոխությունների: Պատճառներից մեկն այն է, որ պարտադրվող փոփոխությունները հաճախ հասարակությունների

ներսում հասունացած չեն լինում:

Քաղաքական զարգացման ճգնաժամն ուղղակիորեն հանգեցնում է քաղաքական գործընթացի լճացման, ինստիտուտների և համակարգերի ճգնաժամի: Այս դեպքում քաղաքական գործընթացի ճգնաժամն արտահայտվում է քաղաքական դերակատարների և ինստիտուտների փոխհարաբերությունների ու փոխազդեցության էական կաշկանդմամբ կամ դրանց քաղաքական բաղադրիչի երկրորդմամբ, ինչն էլ բացասական մեծ ազդեցություն է ունենում քաղաքականության հասարակական ընկալման, ինստիտուտների, համակարգերի, այդ թվում կուսակցությունների քաղաքական իմիջի վրա:

Կարևոր է հասկանալ, որ քաղաքական զարգացման ճգնաժամը, Հայաստանից բացի, բնորոշ է քաղաքական կերպափոխման մեջ գտնվող կամ այդ ճանապարհին անցած գրեթե բոլոր պետություններին ու ժողովուրդներին: Հրամայականն իրավիճակի գրագետ հաղթահարումն է:

Քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարման միակ ելքը թերևս քաղաքական արդիականացումն է:

Քաղաքական արդիականացումը բազմաշերտ գործընթաց է, որն ապահովում է քաղաքական համակարգի հաստատությունների ժողովրդավարական կառավարման որակական զարգացումը: Այդ առումով քաղաքական արդիականացման գլխավոր ուղղություններն են ճկուն քաղաքական համակարգի ձևավորումը, վարչական մեքենայի արդյունավետ գործառումը, պետականաշինական մշակույթի զարգացումը և ազգային անվտանգության համակարգային ապահովումը: Սակայն ժողովրդավարացման ալիքների շրջանակներում բոլոր պետությունները՝ Սոմալիից մինչև Շվեյցարիա, արդիականացել են այն տարբերությամբ, որ ժամանակի և տարածության մեջ տեղի ունեցող փոփոխությունների որակական բնույթն ու արդյունքները նրանց քաղաքական համակարգերի համար եղել են խիստ տարբեր: Հենց այդ նկատառումներով էլ փաստված է, որ քաղաքական արդիականացումն ունի սոցիո և էթնոմշակութային արժեքային կողմնորոշիչներ[1]:

Պրոֆեսոր Մ. Մարգարյանի կարծիքով՝ նոր

աշխարհակարգի կայացման պայմաններում ինքնիշխանության բազմաչափության հիմնախնդիրը չափազանց կարևոր է: Ազգպետության հզորացման դիտանկյունից չափազանց կարևոր է պատմականությունը՝ որպես պետության ինքնիշխանության բնականոն արդիականացման բաղադրիչ: Պատմականությունը, ներառելով պատմական հիշողությունը, միաժամանակ և անցյալի վերլուծման, ընտրության կառուցողական ակտիվ գործընթաց է: Բացի դրանից՝ այն նաև տեղեկատվական հոսքերի վերականգնման գործընթաց է, որի տիրույթներում էլ քաղաքական ժամանակն ապահովում է առավելագույն կենսունակություն և մրցունակություն: Պատմականության համատեքստում արդիականացման համար առաջարկվում է «անցյալի ընտրություն» եզրույթը, որը հնարավորություն է տալիս ռացիոնալ մակարդակում պատմական հիշողությունից վերակենդանացնելու այն հատվածը, որի հետագա գեներացումը կապահովի և՛ կենսունակություն, և՛ մրցունակություն՝ միևնույն ժամանակ ֆիլտրելով տեղեկատվական աղմուկը[2]:

Ակադեմիական այս պնդումներից մեկնելով՝ կարող ենք դիտել Հայ Յեղափոխական Դաշնակցության՝ պատմական առաքելության ստանձնման իրական հնարավորությունը երկու մակարդակներում. 1) Անվիճելի են Դաշնակցության՝ իբրև կուսակցության, հետևաբար քաղաքական համակարգի իրական բաղադրիչի ինստիտուցիոնալ կայացվածությունը, պատմական փորձը, գաղափարաբանական ամուր հենքը: 2) Ինչպես վերը նշվեց, քաղաքական արդիականացման արդյունավետության համար նախապայման է արդիականացման պատմական համատեքստը (պատմական արդիականացում):

Պատմականության համատեքստում արդիականացման քաղաքական շեշտադրման իրական դրոշակակիրը լինելու մեծագույն առաքելությունը կարող է և պիտի ստանձնի հենց Դաշնակցությունը:

Պատմականության համատեքստում արդիականացումը պետք է ենթադրի մեր ժողովրդի ազգային արժեհամակարգի, պատմության հրամայականների, ազգային ինքնության պահպանման ու արժևորման համատեքստում՝ պետության և ժողովրդի հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական համալիր զարգացման ապահովումը:

Պետության շարունակական արդիականացումը կնպաստի քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարմանը, թույլ կտա խուսափել հասարակության մարգինալ շրջանակների և օտարերկրյա ուժերի կողմից պետությունը տևական ցնցումների ու ճգնաժամերի մատնելուց, կբարձրացնի պետության սուվերենության մակարդակը, կամրապնդի ներհասարակական համերաշխությունը, կնպաստի ազգային նպատակների հետևողական իրականացմանը, ռազմավարական կառավարմանն ու էլիտաների արդյունավետության բարձրացմանը:

Պետության համալիր արդիականացման շրջանակում անհրաժեշտ է ուշիուշով հետևել չորրորդ հետարդյունաբերական հեղափոխության հետևանքով մարդկային կացութաձի փոփոխություններին, առաջին հերթին՝ արհեստական ինտելեկտի կիրառման տրամաբանությանը և զարգացման վեկտորների դինամիկային:

Դաշնակցությունը կարող է և պիտի դառնա ապագա Հայաստանի, նրա տեսլականի, հանրային կացութաձևի քննարկումների առաջամարտիկը: Կուսակցության համաշխարհային ցանցը և մտավոր ներուժը լիովին թույլ են տալիս անել դա: Սակայն մինչ այդ Դաշնակցությունը, իբրև քաղաքական ինստիտուտ և համաձայն քաղաքական զարգացման տրամաբանության, պիտի նախ և առաջ ինքը շարունակի արդիականանալ: Արդիականացումը քաղաքական զարգացման անխախտ տրամաբանություն է, որի ընդունումը երաշխավորում է հարատև գործունեություն: Մեր կուսակցության 130-ամյա գոյությունը նաև կուսակցության պարբերական արդիականացմամբ, խորքը և բովանդակությունը պահելով միշտ ժամանակին համաքայլ ընթանալով է պայմանավորված:

Անկասկած է, որ Դաշնակցությունը իր կառույցի բնույթով, ուղեկից կառույցներով և Հայ դատի գրասենյակներով շոշափում է Հայաստանի քաղաքական համակարգի և հայության արտաքին համալիր շահերի բոլոր ոլորտները: Այսօր ամբողջ աշխարհում նկատվում է էթնիկ լոբբինգի ինստիտուտի նոր դերակատարություն, արդի միջազգային հարաբերություններում սփյուռքների քաղաքական դերակատարումը գնալով մեծանում է, էթնիկ լոբբիստական խմբերն աստիճանաբար դառնում են արևմտյան երկրների քաղաքական համակարգերի անբաժան մասը:

Դաշնակցության պատմական փորձն ու արդի հնարավորությունները, միջազգային հարաբերությունների ներկա զարգացումները կուսակցությանը շարունակում են պահել որպես Հայաստանի ու հայության համար ռազմավարական կարևորության բացառիկ դերակատար, որին վիճակված է պատմական առաքելություն: Սակայն ներկա քաղաքական զարգացումները որքան էլ մեզ համար հնարավորություններ են ստեղծում, նույնքան էլ մարտահրավերներ են առաջադրում, որոնց հաղթահարումը թույլ կտա պատվով իրականացնել մեր կազմակերպությանը վիճակված պատմական առաքելությունը:

Մարտահրավերներից կարևորագույնը նախ և առաջ կուսակցության շարունակական արդիականացումն է, որը թույլ կտա առաջնորդել Հայաստանի արդիականացումը:

Իհարկե, հրապարակախոսական բնույթի այս-պիսի հոդվածով հնարավոր չէ ամբողջական պատկերացում տալ արծարծված հարցերի վերաբերյալ: Սույն հոդվածն ընդամենը ներհայկական և ներկուսակցական հարաբերություններում պատմականության համատեքստում Հայաստանի և Դաշնակցության շարունակական արդիականացման մասին երկխոսությունը խթանելու փորձ է:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- Մարիամ Մարգարյան, Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, https://mmmargaryan.wordpress.com/2018/03/30/քաղաքական-արդիականացման-քաղաքակրթակ/ (մուտք՝):

2- Մարգարյան Մ., Պատմականությունը՝ որպես պետության ինքնիշխանության արդիականացման բաղադրիչ, https://mmmargaryan.wordpress.com/2018/09/05/պատմականությունը՝-որպես-պետության-ի/ (մուտք՝):

Թուրքական ապրանքների փոխարինման այլընտրանքային հնարավորությունները

Սուրեն Պարսյան
ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի պատասխանատու

ՀՀ կառավարության՝ 2020 թ. հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին» №1708-Ն որոշմամբ արգելվում է Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագման **վերջնական սպառման** ապրանքների ներմուծումը: Թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման արգելքով պայմանավորված բացասական ազդեցությունը հնարավորինս մեղմելու նպատակով որոշման ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանվել է 2020 թ. դեկտեմբերի 31-ը:

2019 թ.պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծվել է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ տասանիշ դասակարգմամբ թուրքական ծագման 2908 ապրանքատեսակ, որից **2285**-ը վերջնական սպառման ապրանքներ են՝ նարինջ, հագուստ, յուղեր և այլն, իսկ **623**-ը՝ միջանկյալ սպառման ապրանքներ (վերամշակման ենթակա)՝ կտոր, շինանյութ և այլն:

Թուրքական ծագման ապրանքների ներմուծման արգելքով ոչ միայն տնտեսական բնույթի սանկցիա է կիրառվում Թուրքիայի նկատմամբ, այլև անվտանգության տեսանկյունից դադարեցվում է հայկական աղբյուրներից Թուրքիայի պետական գանձարանի ֆինանսական սնուցումը: Միաժամանակ կանխարգելվում է վերջնական սպառման ապրանքների ներմուծման միջոցով տարատեսակ վտանգների ներթափանցումը:

Ընդհանուր առմամբ Թուրքիայից ներմուծվող ապրանքների հիմնական մասն ունի համադրելի որակներով փոխարկելիություն, սակայն փոխարկելիության անցումը կպահանջի որոշակի ժամանակահատված, որպեսզի տնտեսվարողները կարողանան գտնել այլընտրանքային շուկաներից որակապես նույնատիպ ապրանքներ:

Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ ներմուծվող թուրքական ծագման **209.0** մլն ԱՄՆ դոլարի պատրաստի արտադրանքի մոտ **30%**-ը կազմում են առավելագույն մաքսային արժեք ունեցող թվով **20** ապրանքատեսակներ, ուստի դիտարկվել են տվյալ ապրանքների՝ այլընտրանքային շուկաներից ներմուծման հնարավորությունները, ինչպես նաև որոշ ապրանքների տեղական արտադրություն հիմնելու նպատակահարմարության հարցը: Այդ 20 ապրանքների ցանկում տեղ են գտել ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ արդյունաբերական նշանակության ապրանքներ:

Գյուղատնտեսական ապրանքատեսակներն են **նարինջը, մանդարինը, կիտրոնը, նուռը, տանձը, խաղողը և լոլիկը**:

Ելնելով բնակլիմայական պայմաններից՝ Հայաստանում հնարավոր չէ կազմակերպել ցիտրուսային մրգերի արտադրություն, ուստի անհրաժեշտ է դիտարկել նշված ապրանքների ներմուծումը այլընտրանքային շուկաներից, մասնավորապես՝

նարնջի և մանդարինի համար՝ ***Իրանի Իսլամական Հանրապետությունը (ԻԻՀ), Վրաստանը, Եգիպտոսը, Հարավային Աֆրիկան, Պակիստանը, Միացյալ Նահանգները, Բրազիլիան, ՌԴ-ն,***

կիտրոնի համար՝ ***Վրաստանը, Եգիպտոսը, Հունաստանը, ԱՄԷ-ն, Հարավային Աֆրիկան, Արգենտինան, ՌԴ-ն:***

Վերոնշյալ ցանկում ներառված են նաև ***նուռը, տանձը, խաղողը*** *և* ***լոլիկը****, որոնց այլընտրանքային շուկաներն են՝*

նռան համար՝ ***ԻԻՀ-ն, Վրաստանը, Պերուն, Կոլումբիան, ՌԴ-ն,***

տանձի համար՝ ***ԻԻՀ-ն, Հարավային Աֆրիկան, Բելգիան, Նիդերլանդները, Չինաստանը, ՌԴ-ն,***

խաղողի համար՝ ***ԻԻՀ-ն,***

լոլիկի համար՝ ***ԻԻՀ-ն:***

Նշված ապրանքատեսակների ներմուծումը սեզոնային բնույթ ունի, և այս ուղղությամբ անհրաժեշտ է մշակել և իրականացնել համապատասխան ծրագրեր, որոնք կնպաստեն Հայաստանում ջերմոցային և սառնարանային տնտեսությունների զարգացմանը:

Վերոնշյալ ցանկում տեսակարար մեծ կշիռ ունի նաև Հայաստան թուրքական ծագման **տեքստիլե արտադրանքի** ներմուծումը: Նշված ապրանքների փոխարինելիությունը կարելի է ապահովել հետևյալ հիմնական այլընտրանքային շուկաներից՝ **Չինաստան, ԱՄԷ, ԵՄ երկրներ, Միացյալ Նահանգներ, ԻԻՀ, Վիետնամ, Բանգլադեշ, Ինդոնեզիա, Հնդկաստան, ՌԴ, Պերու, Թունիս:** Սակայն հաշվի առնելով, որ Հայաստանում

տեքստիլ արտադրության ոլորտում առկա է արտադրական մեծ ներուժ, կարելի է դիտարկել նաև տեղական արտադրության ընդլայնման հնարավորությունները, միաժամանակ աշխատանքներ տանել հայտնի բրենդների հետ նրանց արտադրությունը Հայաստանում հիմնելու ուղղությամբ: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև համապատասխան որակական հատկանիշներով հումքի ներկրմանը այլընտրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների հետ առևտրական կապերի ստեղծմանը և ամրապնդմանը:

Լվացող և մաքրող միջոցների այլընտրանքային շուկաներն են **ՌԴ-ն, ԻԻՀ-ն, ԵՄ երկրները, Սերբիան, Ուկրաինան:** Հարկ է նշել, որ այս ապրանքատեսակները հիմնականում ներկրվում են այն երկրներից, որոնց հետ Հայաստանն ունի առևտրային արտոնյալ ռեժիմի կիրառման հնարավորություն:

Էլեկտրական սարքավորումներին մարդատար ավտոմեքենաների այլընտրանքային հիմնական շուկաներն են ՌԴ-ն, ԵՄ երկրները, Չինաստանը, Կորեան, Թայլանդը, ԻԻՀ-ն, Մեքսիկան:Վերոնշյալ ապրանքատեսակների առումով անհրաժեշտ է աշխատանքներ տանել նոր շուկաների բացահայտման և առևտրական կապերի ձևավորման ուղղությամբ:

Խողովակների և փողակների ներմուծման այլընտրանքային շուկաներն են Չինաստանը, ԻԻՀ-ն, ՌԴ-ն, Թուրքմենստանը, ԵՄ երկրները, Միացյալ Նահանգները և Շվեյցարիան: Վերոնշյալ ապրանքատեսակների առումով հնարավոր է դիտարկել նաև օտարերկրյա ներդրումների միջոցով Հայաստանում արտադրություն հիմնելու նպատակահարմարության հարցը:

Մոնտաժային պոլիուրեթանային փրփուր արտադրատեսակը հիմնականում ներմուծվում է **Ռուսաստանի Դաշնությունից** և **Չինաստանից:** Նշված ապրանքատեսակի առումով նպատակահարմար է դիտարկել նաև այլընտրանքային շուկաներում նոր գործընկերների որոնման հնարավորությունը, որոնց արտադրանքը որակական հատկանիշներով կլինի համադրելի:

Հայաստանի ոչ միայն տնտեսական, այլ նաև ռազմական անվտանգությունից է բխում զարգացնել հյուսիս-հարավ առևտրատնտեսական հարաբերությունները: Եվ այս համատեքստում կարևոր ձեռքբերում պետք է համարել Եվրասիական տնտեսական միության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ ազատ առևտրի ժամանակավոր համաձայնագրի ստորագրումը: Ցավոք, այս համաձայնագրի հնարավորությունները կյանքի կոչելու ուղղությամբ տեսանելի ջանքեր չեն գործադրվում ոչ պետական և ոչ էլ մասնավոր հատվածների կողմից:

ԵՐԿԻՐ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆՌՈՒԹՅՈՒՆԸ (ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ)*									
	2016	2017	աճի տեմպ %	2018	աճի տեմպ %	2019	աճի տեմպ %	2019 հունվար-նոյեմբեր	2020 հունվար-նոյեմբեր	աճի տեմպ %
ՀՀ-Թուրքիա ընդհանուր առևտրաշրջանառությունը	*164.15*	*223.80*	*136.34*	*254.13*	*113.55*	*269.32*	*105.98*	*238.62*	*193.27*	*81.0*
ՀՀ Թուրքիայից ներմուծումը	*166.65*	*222.90*	*136.20*	*252.60*	*113.30*	*268.10*	*106.10*	*236.67*	*192.78*	*81.5*
ՀՀ-ից Թուրքիա արտահանումը	*0.5*	*0.9*	*180.0*	*2.53*	2,8անգ.	*2.22*	87.7	1.95	0.49	*25.1*

* Ցուցանիշները ներկայացված են ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալների

2018-2019թթ. Հայաստանի Հանրապետություն Թուրքիայից ներմուծված 10 առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքները (հազ.ԱՄՆ դոլար)								
ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	չ/մ	2018թ		2019թ			
			քանակ	մ.արժեք	քանակ	մ.արժեք	աճի տեմպ %	տեսակարար կշիռ %
	Ընդամենը՝այդ թվում			251529.0		266856.3	106.1	
2710	Նավթ եւ նավթամթերք՝ ոչ հում	տոննա	252.5	617.7	30904.2	24298.0	39,3անգ	9.1
6114	Հագուստի առարկաներ այլ, տրիկոտաժե	տոննա	1318.6	11441.1	2524.5	21634.4	189.1	8.1
0805	Ցիտրուսային պտուղ թարմ կամ չորացրած	տոննա	15676.9	10563.3	16936.6	10281.4	97.3	3.9
6006	Այլ տրիկոտաժե պաստառներ	տոննա	1817.8	6845.0	1748.7	8216.3	120.0	3.1
5208	Գործվածք բամբակի, >= 85 զանգ.% բամբակի պարունակությամբ, <=200 գ/քմ մակերեսային խտությամբ	հազ.քմ	9516.6	5915.3	11818.5	5809.2	98.2	2.2
8516	Էլեկտրական ջեռուցիչ; էլեկտրասարք տարածքի եւ քնահողի տաքացման; այլ կենցաղային էլեկտրատաքացնող սարքեր	հազ.հատ	107.2	5313.2	78.5	5637.8	106.1	2.1
3402	Լվացող եւ մաքրող միջոցներ	տոննա	4168.9	6415.0	4277.7	5419.1	84.5	2.0
7604	Ցող եւ արամատ ալյումինե	տոննա	1459.4	5364.7	1392.4	5115.1	95.3	1.9
4411	Փայտանրբաթելային սալիկներ եւ նման սալիկներ փայտանյութից կամ այլ փայտացած նյութերից	հազ.քմ	606.7	4042.1	751.2	4852.5	120.0	1.8
6402	Այլ տեսակներ կոշիկի կոշկատակով եւ կոշկերեսը ռետինից կամ պլաստմասայից	հազ.զույգ	1877.6	8502.4	861.3	4009.3	47.2	1.5

* Ցուցանիշները ներկայացված են ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակված տվյալների

Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի կերպարը ներկա պահի հրամայական պահանջ (մահվան 102-րդ տարելիցի առիթով)

Արմեն Ասրյան
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Հունվարի 29-ին լրանում է հայոց պատմության մեծերից մեկի՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի մահվան 102-րդ տարելիցը: Ներկայումս, երբ հայ ժողովուրդն ապրում է իր հինգհազարամյա պատմության դժնդակ ժամանակաշրջաններից մեկը, երբ կեղծ արժեքներ դավանող, ավելի ճիշտ՝ ազգային արժեքները բացարձակապես մերժող ոչ բարով «վարչապետի» ու նրա արբանյակների ապաշնորհության, անգործունակության, գաղտնի և նույնիսկ բացահայտ դավաճանության պատճառով ռազմաքաղաքական ծանր հարվածներ, մարդկային ու տարածքային կորուստներ կրած Հայաստանի երրորդ հանրապետությունը կանգնած է անկման եզրին, երբ Արցախի Հանրապետության մեծ մասը զավթվել է Ադրբեջանի կողմից, մենք թերևս պարտավոր ենք անդրադառնալ Արամ Մանուկյանի ստեղծարար, օգտակար գործողության մեծ գործակից պարունակող, հույս ու հավատ ներշնչող, տարողունակ ու լուսավոր, հավերժ կենդանի և ուսուցանող կերպարին: Չէ՞ որ մեծապես հենց Արամի շնորհիվ անհետացման սպառնալիքին դեմ հանդիման գտնվող պատմական Հայաստանի մի փոքրիկ հատվածում անձն քառսից ու ավերակներից չնչին հնարավորություններով հնարավոր եղավ կերտել անկախ Հայաստան և ապահովել հայ ժողովրդի վերածնունդը:

Համոզված ենք՝ նույնիսկ ներկայիս ծանրագույն պայմաններում ամեն ինչ դեռ առջևում է, պարզապես պետք է արժևորել մեր մեծերին, վերակենդանացնել նրանց վառ կերպարները, հաղթանակ բերող մտածողությունն ու գործելակերպը, հետևել նրանց օրինակին:

Արցախ-Ղարաբաղում ծնված Արամ Մանուկյանը (ծննդյան անվամբ՝ Սարգիս Հարությունի Հովհաննիսյան), 19-րդ դարի 90-ական թվականներին անդամագրվելով հայոց ազատամարտին, իր ողջ գիտակից կյանքը նվիրեց թուրքական բռնապետությունից հայ ժողովրդի ազատագրությանը, անկախ և արժանապատիվ ապագայի կերտմանը, երբեք չհոգնեց ու չընկճվեց պայքարելուց, երբեք չերկնչեց թշնամու ուժից և տեղի չտվեց նրա առաջ: Որքան էլ որ ծանր ու հուսահատական եղավ հայ ժողովրդի դրությունը, պարտությունները, զրկանքներն ու կորուստները՝ ծանր ու տևական, նա մշտապես մնաց ազատագրական պայքարի առաջին, ամենածանր, վտանգավոր ու պատասխանատու դիրքերում: Նա միշտ եղավ լավատես, պայքարող, ոգի տվող և արարող:

Արամ Մանուկյանի մտահոգությունների առանցքում մշտապես և ամենուր՝ թե՛ Կարսում (1903-1904 թթ.), թե՛ Վանում (1905-1915 թթ.), թե՛ Երևանում (1917-1919 թթ.),

հայ ժողովուրդն էր, նրա ձգտումների իրականացումը, նրա անվտանգության և արժանապատվության պաշտպանությունը:

Արամը ազգային և պետական գործչի կատարյալ մարմնավորում էր: Նա ամենից առաջ նպատակասլաց, ջերմեռանդ, շրջահայաց, հեռատես ու հավասարակշռված գործիչ էր: Դա ակնհայտ է դառնում Արևմտյան Հայաստան մուտք գործելու առաջին օրերից՝ 1905 թ. փետրվարից, երբ, ելնելով թե՛ իր անձնական համոզմունքներից, թե՛ ՀՅԴ-ի կողմից որդեգրվող նոր մարտավարությունից, նա համբերատարորեն ծավալեց մեղվաջան աշխատանք ազատագրական պայքարի նեղ, մասնակի գործողություններից համընդհանուր, համաժողովրդական ապստամբության նախապատրաստման ուղղությամբ: Արամը գտնում էր, որ միայն համազգային հուժկու պայքարի միջոցով կարելի է հասնել ազգային նպատակների իրականացմանը: Եվ նա ամենուր ու ամեն ժամ ամեն ինչ արեց իր ժողովրդին համախմբելու, հայության ուժերը կենտրոնացնելու և հաղթանակի ժամը մոտեցնելու համար: Դա նրա հաջողության, բազում հաղթանակների կարևոր գրավականներից էր:

Արամի այս որակներն էին, որ հնարավոր դարձրին հայ ժողովրդի բախտորոշ հաղթանակները թուրք ոտնի դեմ 1915 թ. Վանում և 1918 թ. Երևանում: Այս որակներն էին, որ նրան հնարավորություն տվեցին 1917 թ. դեկտեմբերին առաջադրելու և կենսագործելու հայ ժողովրդի համար միակ նպատակահարմար ու խոստումնալից քաղաքական ուղեգիծը, որը, ինչպես ցույց տվեց պատմությունը, ոչ այլ ինչ էր, քան հայ ժողովրդի փրկության և անկախ պետականության վերականգնման տանող ծրագիր:

Արամին հատուկ որակներն էին աշխատասիրությունը, նպատակասլացությունն ու վճռականությունը: Որակներ, որոնք պարտադիր են ցանկացած նպատակ կամ ծրագիր իրագործելու համար: Արամը երբեք չհոգնեց, մշտապես մնաց գործի գլուխ, գործի և պայքարի ամենածանր,

աշխատատար ու վտանգավոր բնագծերում:

Արամին հատուկ էին ռազմավարական մտածողությունը, կանխատես միտքը, իրադարձություններին ընթացք տալու, նույնիսկ դրանցից առաջ անցնելու կարողությունները, և, ընդհակառակը, խորթ՝ սպասողականությունը, հարմարվողականությունը: Այս առումով թերևս առավել բնութագրականն այն է, որ 1917 թ. վերջին, երբ հայոց երկնակամարում տիրում էր համընդհանուր անորոշության, փոքր ժողովուրդներին ազատագրության խոստումներ տված երկրներից օգնության ակնկալիքի մթնոլորտ, երբ արդեն արևելահայության և 1915-1916 թթ. Հայոց մեծ եղեռնից հետո նրա օջախներում ապաստանած արևմտահայ բեկորների գլխին կախվել էր թուրքերի կողմից կրկին ցեղասպանության ենթարկվելու վտանգը, Արամը հայտարարեց, որ հայ ժողովրդի փրկության, նրան հուզող բոլոր խնդիրների հանգուցալուծման համար պետք է հույսը դնել բացառապես սեփական ուժերի վրա: Նա նշում էր. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա լոկ խօսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրւում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք և պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[1]:

Կարճ ժամանակ անց Արամի համար հստակ դարձավ հույսը սեփական ուժերի վրա դնելու գաղափարի վերջնանպատակը, այն էր՝ Ազատ և անկախ Հայաստանի ստեղծումը:

Արամի գաղափարական համոզումների արդյունքն էր պատմական մայիսից ամիսներ առաջ հայոց պետականության վերականգնման համար անհրաժեշտ նախադրյալների՝ կանոնավոր զորքի և իշխանության գործուն մարմինների ստեղծման ուղղությամբ գործադրված ջանքերը, ինչպես և գալիք վճռական իրադարձությունների ժամանակտեսակ անակնկալներից խուսափելու և հայոց թիկունքն ապահովելու նպատակով թաթարական հակապետական հանցագործ որջերի չեզոքացումը:

Սեփական ուժերի վրա հենվելու գաղափարի ջատագով Արամն ինքնամեկուսացման կողմնակից չէր: Նրա համար հայրենիքի փրկության ճանապարհին չկար որևէ, այդ թվում և գաղափարական-քաղաքական խոչընդոտ: Ելնելով այն հանգամանքից, որ հայերի ու թուրքերի ուժերի հարաբերակցությունը հայերի օգտին չէր, թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար, նա, այլ գործիչների հետ, հանգեց Խորհրդային Ռուսաստանի հետ համագործակցելու մտքին: Դա այն դեպքում, երբ այնտեղ իշխող բոլշևիկյան կուսակցությունը ՀՅ Դաշնակցության գաղափարա-քաղաքական հակառակորդն էր: Այս մոտեցման հիման վրա 1918 թ. հունիս-սեպտեմբերին գործողության

Արամ Մանուկյան

մեջ դրվեց Թուրքիայի հերթական ցեղասպանական նպատակները ձախողած նորանկախ Հայաստանի և Բաքվի հերոսամարտի առաջնորդների քողարկված համագործակցությունը:

Նրա կանխատես մտքի դրսևորում էր և այն, որ Արամը նախաձեռնեց հետագայում հայկական զորքին այնքան պետք եկած զենք զինամթերքի փոխադրումը ռազմաճակատի խորքից թիկունք՝ Երևան:

Արամի ազգային-պետական կատարյալ գործիչ լինելու իրողությունը փաստող թերևս գլխավոր որակն իշխանության նրա պատկերացումն է, նրա կողմից իշխանության իրացումը: Նրա համար իշխանությունը ոչ թե առավելություն էր, փառքի հասնելու միջոց կամ արտոնություն, այլ ժողովրդի վերքերն ամոքելու, նրան ծառայելու, վերջինիս ազգային ձգտումների և հեռանկարային նպատակների իրականացման հնարավորություն: Այսպես, 1918 թ. մարտի 24-ին Երևանի բնակչության, զորքի և Հայոց ազգային խորհրդի կողմից ընտրվելով Երևանի նահանգի «դիկտատոր և օժտվելով անսահմանափակ իշխանությամբ՝ Արամը շարունակեց մնալ ժողովրդի մարդ, ժողովրդի շահերի արտահայտիչը»[2]: Պատմության մեջ թերևս եզակի դեպքերից է, երբ դիկտատորն իր անսահմանափակ իշխանությունը մինչև վերջ օգտագործեց բացառապես հօգուտ համազգային շահերի, երբեք չփորձեց իրեն վեր դասել ազգային ու զինվորական կառույցներից: 1918 թ. ամռանը նշանակվելով նորանկախ ՀՀ ներքին գործերի նախարար՝ նա դարձյալ մնաց նույն համեստ և ազնիվ անհատը:

Արամն իրատես, ազգային-պետական գործերում սառնասիրտ, սթափ դատող գործիչ էր: Ամբողջ կյանքում թուրքական լծի դեմ պայքարած, հայ ժողովրդի ազատագրությանը անվերապահորեն նվիրված գործիչը, 1918 թ. հերոսամարտերի կազմակերպիչը, մայիսյան օրերին թուրքերին այլևս ոչինչ չզիջելու

առաջամարտիկը հունիսի սկզբներին, երբ հայության մեջ տիրում էր ոգևորության հիասքանչ մթնոլորտ, անտեսելով հարցի զգացական կողմը և, իր անձի նկատմամբ հնարավոր բացասական վերաբերմունքը, ելնելով միայն ու միայն հայ ժողովրդի անվտանգության հեռահար նպատակից, սթափ գնահատելով հայկական և թուրքական ուժերի հարաբերակցությունը, համակերպվեց Բաթումի հաշտության պայմանագրին[3]: Նա քաջ գիտակցում էր, որ, ցավոք, շատ առումներով անցանկալի և չափազանց ծանր այդ պայմանագիրը տվյալ ժամանակաշրջանում այն առավելագույնն է, որին կարելի է հասնել, հատկապես որ ամենակարևոր խնդիրը՝ հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը և հայոց պետականության ստեղծումը, այլևս կատարված փաստ էր:

Նույն հավասարակշռությունը, իրատեսությունն ու սթափությունը նա դրսևորեց նաև հետագայում՝ 1918 թ. օգոստոսի վերջին տեղի ունեցած հայ-թուրքական բանակցությունների ընթացքում: Թեև տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի պարտությունը կասկած չէր հարուցում, այնուամենայնիվ, Արամը, ելնելով այն բանից, որ Թուրքիան դեռևս իրենից մեծ ուժ է ներկայացնում և կարող է վնասել մեր երկրին, առերևույթ բարեկամական վերաբերմունք ցուցաբերեց այդ պետության նկատմամբ: Արամի այդ կեցվածքը նկատել և հատուկ կերպով շեշտել է Վրաստանում գերմանական առաքելության ղեկավար գեներալ Կրեսը, ով Խալիլի հետ ժամանել էր Երևան: Նա Արամին դասել է Թուրքիայի նկատմամբ սպասողական, ձգձգումների քաղաքականության կողմնակիցների թվին[4]: Դա էր պահանջում հայոց շահը, ինչը լիովին գիտակցում էր Արամը: Մշտապես թուրքական բռնապետության դեմ պայքարի առաջին գծում գտնվող, այդ պահին նրա կողմից հրահրվող թաթարական (ներկայիս ադրբեջանցիների) խռովությունները հետևողականորեն ճնշող Արամը ձեռնպահ մնաց Թուրքիայի հանցագործ կեցվածքը դատապարտող՝ տվյալ պահին ժամանակավրեպ դրսևորումներից, և բարձր մակարդակով ընդունելություն կազմակերպեց 1918 թ. օգոստոսի 31-ին Երևան ժամանած թուրք զորավար, ոճրագործ Խալիլի համար: Ժամանակը չէր խրոխտ կեցվածքի, այն միայն կբարդացներ հայոց կացությունը: Արամի իրատեսության ու շրջահայացության շնորհիվ բանակցություններից կարճ ժամանակ անց, Խալիլի անմիջական և ակտիվ միջամտությամբ հայկական կողմը սանձահարեց հայոց աշխարհում մահ ու ավեր սփռող թաթար խռովարարներին:

Արամի իրատեսության, սթափ մտածելակերպի մասին է խոսում նաև 1918 թ. գարնանը Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների հետ կնքված համագործակցության համաձայնությունը, որով հանուն հայ ժողովրդի ֆիզիկական ապահովության, հանուն Արևմտյան Հայաստանի ազատագրության և անկախության նա և մի շարք այլ գործիչներ կողմ արտահայտվեցին Խորհրդային Ռուսաստանի հետ ամբողջ Կովկասը խորհրդայնացնելու ծրագրին[5]:

Արամի յուրաքանչյուր քայլն ուղղված էր հայ ժողովրդի շահերի պաշտպանության և հայոց պետականության կայացման գերնպատակին: Այդ ճանապարհին նրա համար չկային արգելքներ: Նա պահանջկոտ ու խիստ էր բոլորի, հատկապես պատասխանատու դիրք զբաղեցնող պաշտոնյաների, նույնիսկ կուսակիցների նկատմամբ: Արամը, հիրավի, պետական այր էր, ազնիվ և անաչառ գործիչ, որի համար անպատժելի արարքներ, անձեռնմխելիներ և արտոնյալներ չկային: Նա պետական պաշտոնյաներին զգուշացնում էր, որ եթե իրենց նկատմամբ լրագրերում հրապարակված մեղադրանքները կարճ ժամանակում չհերքեն, ապա կհեռացվեն աշխատանքից և դատի կտրվեն:

Ժողովրդի շահի գերակայություն ամեն ինչից և ցանկացած պարագայում, օրինակ՝ Վանի նահանգապետության գոյության ընթացքում ժողովրդի իրավունքների ամենօրյա պաշտպանություն ամեն տեսակի ապօրինություններից: Թաթարական հակապետական խռովությունների ճնշումը, հայ անիշխանական, հակապետական տարրերի ղեկավարների գնդակահարությունը 1918 թ. մայիսին[6] և այլն:

Երկաթյա կամք, հաստատակամություն, վճռականություն ու հետևողականություն՝ Արամի այս որակներն ապահովեցին առաջադրված բոլոր դժվարագույն խնդիրների հաջող լուծումը, այդ թվում՝ և Մայիսյան հերոսամարտերի կազմակերպումը:

1918 թ. մայիսին, երբ թուրքերը անհագ ախորժակով մոտենում էին Երևանին, հայոց զորքը և ժողովուրդը որոշ չափով մատնվել էին խուճապի և հուսալքության: Եվ եթե չլինեին Արամի այդ որակները, չլինեին նրա հավատն ու երկաթյա կամքը, չէր ձևավորվի միասնական, հուժկու, անխորտակելի բռունցքը, և Սարդարապատում, Ապարանում ու Ղարաքիլիսայում թշնամուն չէր հաջողվի ջախջախիչ հակահարված, և չէր ստեղծվի Հայաստանի առաջին հանրապետությունը[7]:

Արամը կազմակերպչական բացառիկ ձիրքի տեր էր ու միաժամանակ ազգային միասնության, ներքին ուժերի համախմբման համոզված կողմնակից: Այդ հատկանիշները նրան հնարավորություն էին տալիս մեկ նպատակի շուրջ համախմբելու հակոտնյա մոտեցումներ, գաղափարներ ունեցող, նույնիսկ իր անձի նկատմամբ բացասաբար տրամադրված գործիչներին և ուժերին: Ասվածի արտահայտությունն է Վանի հերոսամարտի և համանուն նահանգապետության կյանքի կազմակերպման, 1918 թ. հայկական զորքի և իշխանության գործող մարմինների ստեղծման, Մայիսյան հերոսամարտերի կազմակերպման, 1918 թ. նոյեմբերին ՀՀ կոալիցիոն կառավարության ձևավորման ժամանակ նրա կեցվածքը: Ի դեպ, վերջին դեպքում նա կողմ էր արտահայտվել կոալիցիայի ձևավորմանը քաղաքական մի այնպիսի ուժի («Հայ ժողովրդական կուսակցության») հետ, որը ՀՅԴ-ի հետ կոալիցիա կազմելու պայմանների թվում նշում էր Արամի հեռացումը կառավարությունից:

Արամը սակավապետ էր, քչով բավարարվող: Ունենալով ֆինանսական միջոցներից օգտվելու լայն հնարավորություններ՝ նա ապրեց համեստ կյանքով, հասարակ երևանցու նման: Նա երբեք իր հնարավորությունները չօգտագործեց նույնիսկ սեփական տարրական կարիքները բավարարելու

համար, փոխարենը, անտեսելով գործող կարգն ու օրենքը, աջակցեց այն մարդկանց, որոնք տառապում էին նյութական կարիքից, տարատեսակ զրկանքներից, բայց պահպանում էին հոգու կորովը, հայրենիքի նկատմամբ պատվի ու պարտականության զգացումները: Շատ է նշվել, բայց, կարծում ենք, արժե մեկ անգամ ևս հիշել, որ Արամն այնքան ազնիվ էր, ապրել ու գործել, որ նույնիսկ իր թաղման համար անհրաժեշտ գումարը, որն այն ժամանակների համար չնչին բան էր, մահվանից հետո նրա մոտ չէր գտնվել[8]:

Փառահեղ հաղթանակները, բարձրագույն պաշտոններն ու հասարակական դիրքը, անսահմանափակ լիազորություններն ու հնարավորությունները երբեք աննշան չափով իսկ չսասանեցին Արամի բարոյական վեհ նկարագիրը: Նրան միշտ խորթ մնացին նյութապաշտությունը, փառամոլությունն ու պաշտոնամոլությունը: Նա անզիջում էր անարդարության, ստորության, ընչաքաղցության ու դավաճանության հանդեպ և հակառակը՝ անհուն էին նրա սերը, հարգանքն ու նվիրվածությունը իր ժողովրդի, յուրաքանչյուր առաքինի հայ մարդու հանդեպ: Նրա նվիրվածությունն իր ժողովրդին հասնում էր անձնուրացության ու անձնազոհության, սեփական «ես»-ի անտեսման: Ավելի ստույգ՝ նրա մոտ չկար անձնական «ես», այն միահյուսված էր ժողովրդի մտահոգություններին, ապրումներին ու իղձերին: Մինչև կյանքի վերջին ակնթարթը նա մնաց սրտակից ընկեր հասարակ գյուղացու, զինվորականի, կնոջ, երեխայի ու ծերունու համար: Արամը, անկախ իր գործունեության վայրից, ժամանակից ու պայմաններից, մշտապես եղավ ժողովրդի մի մասնիկը, նրա սիրտը, հոգին ու կամքը: Անկասկած, այս ամենը չէր վրիպում ժողովրդի աչքից և, բնականաբար, մեծապես նպաստում էր նրա հեղինակության, ազդեցության, դրանով իսկ նաև պետության հեղինակության բարձրացմանը, հայոց պետության շուրջ ժողովրդի համախմբմանը:

Արամն անառարկելի հեղինակություն էր ժողովրդի համար ամենուր և իր գործունեության բոլոր ժամանակներում: Պետական միջոցների սղության, պետական լիարժեքորեն ձևավորված կառույցների բացակայության պայմաններում առաջնորդի անառարկելի հեղինակությունը ազգային խնդիրների հանգուցալուծման, անկախ պետականության ամրապնդման խիստ անհրաժեշտ պայման էր և, կարծում եմ, է բոլոր ժամանակներում, նաև մեր օրերում:

Անկեղծ և անմնացորդ նվիրում հայ ժողովրդին, ազնվություն, անշահախնդրություն, ռազմավարական մտածողություն, իրատեսություն, հետևողականություն, անկոտրում կամք, անդադրում աշխատանք, հաստատակամություն, հավատ սեփական ուժերի նկատմամբ, հավասարակշռվածություն, կենսակերպով ժողովրդից չտարբերվելու և նրանից չխորթանալու մեծ կամք՝ այս որակների կրողն էր Արամ Մանուկյանը, և այս որակների շնորհիվ էր, որ նա կարողացավ հայոց համար ծանրագույն ժամանակաշրջանում կազմակերպել Մայիսյան հերոսամարտերը, որոնց շնորհիվ ոչ միայն կանխվեցին հայոց նոր ցեղասպանությունը, Արևելյան Հայաստանի ամբողջական ավերումն ու զավթումը Թուրքիայի կողմից, այլև հնարավոր դարձավ հայոց անկախ պետականության վերականգնումը:

Արամին բնորոշ այս որակները մեր օրերում առավել քան արդիական ու պահանջված են: Միայն ու միայն Արամի այս որակներով օժտված ժողովուրդ և հասարակություն, առաջին հերթին՝ պետական իշխանության կրողներ, այդպիսի հավակնություններ ունեցող հասարակական-քաղաքական ուժեր, զինվորականություն ու մտավորականություն և, իհարկե, երիտասարդ սերունդ ունենալու դեպքում է հնարավոր հասնել հայոց պետականության հզորացմանը, Արցախի վերաազատագրմանն ու Արցախյան հիմնահարցի հայանպաստ լուծմանը, Միացյալ Հայաստանի ստեղծմանը, պարբերաբար հայոց առջև ծառացող և անխուսափելիորեն ծառանալիք սպառնալիքների չեզոքացմանը:

Առանց ազգային-պետական մտածողության, առանց երկրին ու ժողովրդին նվիրվածության՝ նույնիսկ նյութական ռեսուրսների և գիտելիքների անսպառ պաշարի դեպքում անհնար կլինի հասնել մեր ժողովրդի անգամ տարրական անվտանգության ապահովմանը:

Ընդգծենք՝ Արամն անկախ Հայաստանը ստեղծեց անհուսալի թվացող իրավիճակում, որովհետև առաջնորդվեց ազգային-պետական մտածողությամբ և ազգային շահերով, հույսը դրեց հայ ժողովրդի վրա և ամեն ինչ արեց նրա ու հայ քաղաքական բոլոր ուժերի գործակցությունն ու միասնությունն ապահովելու համար, մշտապես մնաց պայքարի ամենավտանգավոր ու պատասխանատու դիրքերում և թերևս, ինչը պակաս կարևոր չէ, անմնացորդ և անվերապահորեն հավատարիմ մնաց իր ժողովրդին ու ազգային նպատակադրումներին, սիրեց ժողովրդին ու սիրվեց նրա կողմից:

Յուրաքանչյուր հայի, առավել ևս պետական ու քաղաքական գործիչների համար պետք է հարատևորեն ուղենշային լինեն Նիկոլ Աղբալյանի կողմից Արամի հուղարկավորության ժամանակ հնչեցված հետևյալ խոսքերը. «Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենեակը և խօսեցէք ձեր խղճի հետ և ըսէք, արդեօք աշխատեր էք հայ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղեր էք այնքան անձնազոհ, որքան Արամը, տուեր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը….»[9]:

Օգտագործված աղբյուրներ

1. ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 7, թ. 5, «Լրատու» Երևանի Հայոց ազգային խորհրդի, Եր., 1918, հուլիսի 23, N 6:
2. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Եր., 2009, էջ 178, «Զանգ», Եր., 1918, մարտի 27, N 2:
3. Տե՛ս «Զանգ», 1918, հունիսի 7, N 40:
4. Տե՛ս Deutschland und Armenien 1914–1918, Sammlung diplomatischer Aktestücke,
Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 423:
5. Տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Եր., 1990, էջ 142-143:
6. Տե՛ս Շահխաթունի Ա., Սարդարապատի հերոսամարտը և մահափորձը Արամ փաշայի դէմ (Իմ յուշերից), «Հայրենիք», 1959, օգոստոս, N 8, էջ 27-30:
7. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 10:
8. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 16, թ. 14, 15:
9. «Աշխատանք», 1919, փետրվարի 1, N 4:

Արամ և Ռոստոմ

Անի Մելքոնյան.
Սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Այս տարվա հունվարին լրանում է հայոց նորագույն պատմության մեծագույն գործիչներից երկուսի՝ Արամ Մանուկյանի և Ռոստոմի մահվան 102-րդ տարելիցը, ինչը ևս մեկ առիթ է՝ մեկ անգամ ևս հետադարձ հայացք գցելու հայոց պատմության ոչ վաղ անցյալին, արժևորելու մեր ազգային-ազատագրական պայքարի և հայոց պետականության հիմնադիր հայրերի անցած ճանապարհն ու նրանց թողած դասերը:

Հայաստանի նորանկախ հանրապետության համար առանձնապես ծանր անցավ 1919թ. ձմեռը, երբ սովի ու համաճարակի ճիրաններում գալարվող երկրում մինչև գարուն մահացավ ավելի քան 180.000 մարդ: 1919թ. հունվարին հայոց պետականությունը մեծ հարված ստացավ. հունվարի 18-ի լույս 19-ի գիշերը Թիֆլիսում բծավոր տիֆից և թոքախտից մահացավ ՀՅԴ հիմնադիր, ականավոր քաղաքական և պետական գործիչ Ռոստոմը (Ստեփան Զորյան): Երկար և դաժան փորձություններով լի ճանապարհ էր անցել Ռոստոմը՝ սկսած 1890-ականներից, ղեկավարելով նաև հայոց եկեղեցու գույքը բռնագրավելու և հայկական դպրոցները փակելու քաղաքականություն վարող ցարական կառավարության դեմ պայքարն ու 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվներում հայության ինքնապաշտպանությունը, նվիրվելով և եռանդուն մասնակցելով 1914թ. հայկական կամավորական շարժմանը: Ռոստոմի մասին կարելի է անվերջ խոսել, անվերջ թվել նրա ազգանպաստ գործերը, սակայն կանդրադառնանք միայն հայ ժողովրդի համար ամենաճակատագրական օրերին, մասնավորապես՝ 1918թ., երբ Ռոստոմը Բաքվում էր և դարձել էր տեղի հայերի ինքնապաշտպանության ոգին. «Բագուում Ռոստոմը կամ Խորհրդի հետ էր, կամ հրամանատարութեան և կամ Կ. Կոմիտէի մօտ մասնակցում էր բոլոր կարևոր նիստերին և գործերին: Իրազեկ էր ամբողջ անցուդարձին: Զարմանալիօրէն շարժուն և եռանդուն էր Ռոստոմը: Յաճախ ոտքով էր գնում հրամանատարութեան մօտ, ոտքով էր վերադառնում: Ինքնաշարժ պահանջել ու սպասել չէր կարողանում. Այդքան համբերութիւն չուներ….»[1]: Բաքվում Ռոստոմը գլուխ էր բերում Դաշնակցություն-բոլշևիկ համագործակցությունը, ինչն այդ պահին բխում էր ոչ միայն Բաքվի հայության, այլ նաև Հայաստանի Հանրապետության շահերից, քանզի Ռոստոմը քաջ գիտակցում էր, որ «Վաղը հենց որ բացուեն Բագուի դռները Ազերբէյջանի բանակի առջև, և տաճիկները տեղաւորուեն Բագուում, Խան-Խոյսկու ամբոխը և տաճկական բանակը, ձեռք ձեռքի տուած, պիտի սրբեն նաև Գանձակի հայութիւնը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնեն Զանգեզուր և Երևանը ոտնատակ պիտի տան»[2]:

Այսպիսով՝ Բաքվի ինքնապաշտպանական ուժերի ղեկավար Ռոստոմն իրավացիորեն գտնում էր, որ



որքան երկար կարողանան թուրքերին գամված պահել Բաքվի շրջակայքում, այնքան Հայաստանի Հանրապետությունը հեռու կպահեն թուրքական վերահաս հարձակման վտանգից՝ ժամանակ շահելով մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ իրատեսական էր Ռոստոմի՝ «Արամի հետ «երկու ձեռքով» խաղալու մարտավարությունը»[3], իսկ այդ մարտավարության էությունն այն էր, որ «Երևանում գտնվող և առերևույթ Բաթումի պայմանագիրը հարգող Արամը և Բաքվում գտնվող, սակայն քաղաքից հայկական ուժերի դուրսբերման՝ Բաթումի պայմանագրով նախատեսված ՀՀ պարտավորության կատարումից հրաժարվող Ռոստոմը, ձևով հակադրվելով իրար, բովանդակությամբ նույն խաղն էին առաջ տանում: Նրանք գիտակցում էին, որ որքան ձգձգվի Բաքվի դիմադրությունը, այնքան կհետաձգվի Երևանի վրա թուրքական բանակի գրոհը»[4]:

Ռոստոմի գլխավորած Բաքվի ինքնապաշտպանության գլխավոր արդյունքը, հազարավոր հայերի ֆիզիկական փրկությունից զատ, նաև Հայաստանի՝ փոքրիկ և արտաքին աշխարհի հետ գրեթե կապ չունեցող հանրապետության գոյության պահպանումն էր, մի փաստ, որի համար, Բաքվի պաշտպաններից բացի, պետք է արժանին մատուցել ժամանակի երկու մեծագույն գործիչներին՝ Ռոստոմին և Արամին: Ռոստոմի գործունեությունը սակայն, ինչպես չէր սկսվել Բաքվում, այնպես էլ չավարտվեց Բաքվում: Բաքվի անկումից հետո Ռոստոմը հանձնեց Բաքվի իր դիրքն ու հեռացավ Թիֆլիս՝ այնտեղից Հայաստանի Հանրապետություն անցնելու նպատակով: Նա մինչ առողջական վիճակի վատթարացումը Թիֆլիսում բանակցում էր Վրաստանի կառավարության

ղեկավարների հետ՝ ձգտելով հարթելու հայ-վրացական հարաբերությունները: Ռոստոմը կենցաղում պարզ էր, հեռու ամեն պերճանքից, ցրտին, անձրևին ու ձյան ժամանակ շարունակ վազվզում էր ծակ կոշիկներով ու քրքրված վերարկուով: Շարունակական պայքարն ու դեգերումներն ի վերջո արեցին իրենց սև գործը: Ռոստոմը թոքախտով հիվանդ էր, ինչը երկար տարիներ հյուծում էր նրա մարմինը: Նա երազում էր վերջապես հանգրվան գտնել ու գործել նորանկախ Հայաստանում: Սակայն վրա հասավ պատուհասը՝ մոլեգնող բծավոր տիֆը, ինչն էլ նրան գամեց անկողնուն և խլեց նրա կյանքը: 1919 թ. հունվարի 18-ի լույս 19-ի գիշերը՝ իր ծննդյան 52-րդ տարեդարձի օրը, Ռոստոմը մահացավ:

Նրա կյանքի սկզբունքն ու հավատամքն էր. «Հեղափոխությունը նախ գործ է, հետո՝ գաղափար,- այս է ճշմարտությունը: Ավելի ճիշտ՝ հեղափոխությունը գործ է գաղափարի համար»: Եվ որքան լավ կլիներ, եթե այսօր իրենց հեղափոխական հռչակածներից շատերը ծանոթ լինեին Ռոստոմի այս սկզբունքին և մի փոքր էլ ուսումնասիրած լինեին Ռոստոմ հեղափոխականին, պետական, քաղաքական, ռազմական գործչին ու Ռոստոմ հային. չէ՞ որ պատահական չէ, որ ազգային-ազատագրական պայքարի օրերին Ռոստոմին համարում էին Դաշնակցության կամքը, իսկ հետագայում իր գործով նա վաստակեց նաև «Դաշնակցության հաստաբուն կաղնի» պատվանունը: Այսօր՝ Ռոստոմի մահվանից 102 տարի անց, նրա կյանքը, գործունեությունն ու գաղափարները մեզ համար ուսանելի դաս և օրինակ կարող են լինել. պարտավոր ենք և պետք է սովորենք Ռոստոմից:

Հայոց պետականության համար մեծագույն հարվածը, սակայն, Հայաստանի Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի մահն էր: Արամ Մանուկյանը հայոց նորագույն պատմության մեծագույն գործիչներից մեկն է, եթե ոչ մեծագույնը, քանի որ պատմության մեջ միշտ բացառիկ դեր են ունենում պետականության հիմնադիր գործիչները, հատկապես այնպիսի պայմաններում, որոնցում գտնվում էր հայ ժողովուրդը 1918թ.: Արամի ղեկավարած հերոսամարտերի մասին այս անգամ չենք խոսի, քանի որ դրանց մասին շատ է խոսվել, կխոսենք Արամ Մանուկյան անհատի մասին, որովհետև նրա անձը մեր հասարակությանը գրեթե անծանոթ է: Կանդրադառնանք Արամի ապրելակերպին ու կենցաղին, որոնց ներկայիս հանրապետության նախկին և օրվա ղեկավարները ցանկալի կլիներ, որ հետևեին: «Այն մարդը, որն ուներ անսահմանափակ իշխանություն, որի տնօրինության տակ էին վիթխարի միջոցներ, իր երկրի ու ժողովրդի համար բախտորոշ և ծանրագույն օրերին ապրեց պարզ ու համեստ կենցաղով՝ մինչև վերջ մնալով իր ժողովրդի մեջ, նրա կողքին՝ կիսելով նրան բաժին հասած փորձություններն ու աղետները: Հիրավի մեծ դաս երրորդ հանրապետության անցյալ, նորօրյա և ապագա պետական գործիչներին»[5]:

1917թ. դեկտեմբերի վերջերից սկսած՝ Արամն ի պաշտոնե տնօրինում էր երկրում առկա ու երկիր ուղարկված բոլոր միջոցները, բայց «գործ ունենալով հսկայական գումարների հետ և օժտված լինելով մեծ իշխանությամբ՝ նա երբեք դրանք չծառայեցրեց իր անձնական հարստացմանը»[6]: Արամի բնութագիրը լավագույնս տվել է Ս.Վրացյանը.«Ունենալով ամէն յարմարութիւն Կովկասին մէջ անձնական բարեկեցիկ վիճակ ստեղծելու՝ անիկա հրաժարեցաւ կեանքի բոլոր վայելքներէն և ինքզինքը նուիրեց ժողովրդի մը, որ, անսահմանօրէն հարստահարուած ըլլալով մէկտեղ, իր բոլոր ուժովը կըփափաքէր ազատ օր տեսնել և ազատ օդ շնչել հայրենի երկնքին տակ...»[7]:

Արամն անմնացորդ նվիրվեց իր ժողովրդի ազատագրման գործին ու հենց ժողովրդի կողմից էլ օժտվեց անսահմանափակ իշխանությամբ: Լիներ Վանի նահանգապետ թե Հայոց ազգային խորհրդի լիազոր ներկայացուցիչ, Երևանի դիկտատոր թե ՀՀ ներքին գործերի նախարար, Արամը, Ա. Աստվածատրյանի բնութագրմամբ, «....նոյն սովորական մարդն էր, մատչելի ամէնքին, գրեթէ ճգնաւորի իր կեանքի եղանակով, ոչ մի քայլ՝ իր դիրքը ընդգծելու, ուշադրութիւն գրաւելու, իրեն ցուցադրելու: Իր անձը գոյութիւն չունէր: Իր անձնական կեանքը զրկանքների անվերջ շարան կը լինէր, եթէ շրջապատողները հոգ չտանէին նրա մասին»[8]:

Կատարելով մեկ մարդու ուժից վեր հսկայական աշխատանք՝ Երևանի դիկտատոր ընտրված Արամը, Ա. Աստվածատրյանի վկայությամբ, «....իր մասին մտածել չգիտէր: Որտեղ ապրել, ինչ ուտել, ինչ հագնել, - հարցեր էին, որոնք քիչ էին զբաղեցնում նրան»[9]: **«Մի կերպ կ'ապրենք, չենք մեռնի»**[10]. այս էր նրա սովորական խոսքը:

Արամի ապրելակերպին ծանոթանալու առումով հետաքրքրական են նաև Ա. Աստվածատրյանի նկարագրած պայմանները, որոնցում ապրում էր ՀՀ հիմնադիրը. «Մինչև իր ընտանիքի՝ Երևան տեղափոխուելը նա ապրում էր Աբովեան և Դոկտորսկայա փողոցների անկիւնում՝ մի հասարակ տան մէջ. Յարմարութիւնների տեսակէտից սենեակը ողորմելի էր: Մի անշուք մահճակալ, երկու հասարակ սեղան և մի երեք-չորս նոյնպէս հասարակ աթոռ,- ահա սենեակի կահաւորութիւնը»[11]: Ժամանակակիցների

վկայությամբ՝ Արամի մասին հոգ էր տանում վանեցիների մի գաղթական ընտանիք, որի կյանքը նույնպես լի էր զրկանքներով:

Արամ Մանուկյան գործչի բնութագիրն ամբողջացնելու համար անդրադառնանք նրան տրված «փաշա» տիտղոսին.«Արամին մօտից ճանաչելուց յետոյ մարդ տարակուսում է, թէ ով է նրան **փաշա** տիտղոսը տուել: Մի կատարեալ թիւրիմացութիւն է գոնէ արևելահայերիս հասկացողութեամբ, որովհետև նրա բնաւորութեան մէջ փաշայական ոչինչ չկար: Եւ ինքը ինչպէ՞ս էր խորշում այդ տիտղոսից»[12]: Իսկ «փաշա» տիտղոսը նրան տվել է հայ ժողովուրդը՝ աչքի առաջ ունենալով մարդկանց վերևից չնայելու, իր դիրքը զգացնել չտալու, իշխանությունը միայն ու միայն ի շահ ժողովրդի ծառայեցնելու նրա հատկությունը: Արամը միգուցե այն օրերի համար տիպական փաշայի կերպարին չէր համապատասխանում, բայց վեց դար պետականությունից զուրկ և սեփական ղեկավարի մասին երազող ժողովուրդը, ի դեմս Արամի, գտավ իր իշխանին, իր ղեկավարին: Արամը շարունակ գաղթականների միջավայրում էր, ժողովրդի հետ սերտ շփումների մեջ և այս հարցում ևս կիսեց նրա ճակատագիրը:

1918 թ. դեկտեմբերի 28-ին Արամը վերջին անգամ մասնակցեց կառավարության նիստին, իսկ դեկտեմբերի 30-ին վերջին անգամ փաստաթուղթ ստորագրեց: Երկարատև հիվանդությունից հետո՝ 1919թ. հունվարի 29-ին՝ ժամը 14:30-ին, Արամ Մանուկյանը մահացավ: Նա մահացավ իր մեծ ուսուցչի՝ Ռոստոմի անունը շուրթերին. «….կյանքին հրաժեշտի խոսքերում համառորեն շորերն էր պահանջում, որպեսզի հագնվի Թիֆլիս հասած Ռոստոմին հանդիպելու համար»[13]: Ս. Վրացյանը վկայում է. «Վերջին օրերի զառանցանքների մէջ նա յաճախ յիշում էր Ռոստոմի անունը, որ արդէն հեռացել էր այս աշխարհից....»[14]: Ռոստոմը նրանից տասն օր առաջ՝ հունվարի 19-ին էր մահացել: Եթե Արամը կորցրել էր իր ուսուցչին, ապա «….Արամի մահով հայ ժողովուրդը և հայ հանրապետութիւնը կը կորսնցնէ իր եռանդուն և անձնուրաց գործիչը, իսկ Վասպուրականը, մասնաւորապէս, իր սիրելի ղեկավարը, իր առաջնորդը, իր վարպետը, իր «Արամ Փաշան»»[15]: Ս. Վրացյանն այսպես է նկարագրում Արամի մահվան լուրը ստանալու պահը. «….Դրոյի բնակարանում նստած էինք ճաշի: Յանկարծ դրան զանգը հնչեց, և Դրոյի կինը՝ Արփենիկը, ներս բերաւ սարսափահար աչքերով մի երիտասարդ: «Արամը մեռաւ», -ասաց նա: Դրոյի ձեռքից վար ընկաւ ապուրի գդալը: Առանց մի խօսք արտասանելու՝ նա դուրս թռաւ սենեակից»[16]:

Արամի մահը համազգային դժբախտություն էր, մեծ հարված հայ ժողովրդի և Հայաստանի մանուկ հանրապետության համար, որն այնքան ուներ Արամի խնամքի ու հոգատարության կարիքը: ՀՀ հիմնադրի՝ փետրվարի 1-ին տեղի ունեցած հուղարկավորությունը «համաժողովրդական սուգի օր էր»[17]: Արամ Մանուկյանն այնքան համեստ էր ապրում, որ անգամ

Ռուսրում

նրա «թաղման ծախսը...՝ ընդամենը յոթ հազար երեք հարյուր ութսուն ռուբլի վաթսուն կոպեկ, հոգաց պետությունը»[18]:

ՀՀ հիմնադրի՝ հայոց պետականության ջահակրի մարմինը հողին հանձնվեց Երևանի կենտրոնական գերեզմանատանը՝ ՀՅԴ պանթեոնի տարածքում: «Ամենայն Հայոց Կաթողիկոսը աղոթքով հրամայել է, որ ազգի մեծ որդու գերեզմանն անշարժ մնա»[19]: Բայց հետագայում օրվա տերեր դարձան ազգային դիմագծից ու պետականության գաղափարից զուրկ մարդիկ, որոնք քանդեցին ՀՅԴ հերոսների պանթեոնը: Նրանց հարկադրանքով Արամի մասունքները երկու անգամ տեղափոխվել են: 1930-ականների սկզբին, պայմանավորված Երևանի քաղաքային խորհրդի՝ կենտրոնական գերեզմանատունը զբոսայգու վերածելու որոշմամբ, Արամի աճյունը նրա կնոջ՝ Կատերինե Ջալյանի և աղջկա՝ Սեդա Մանուկյանի կողմից տեղափոխվեց «Կոզերն» կոչվող գերեզմանատուն: Մի քանի տարի անց այդ տարածքում ժամացույցի գործարան և դպրոցի շենք կառուցելու պատճառով Արամի աճյունը տեղափոխվեց «Թոխմախան լճի» գերեզմանատուն, որտեղ գտնվում է առ այսօր[20]:

Խորհրդային իշխանությունները ամեն ինչ արեցին Արամի շիրիմի տեղը մոռացության մատնելու, ժողովրդի աչքից հեռու պահելու համար: Բայց սեփական պատմությունը գնահատող և ազգային պետականության կարևորությունը գիտակցող մի խումբ հայրենասեր հայեր 1979 թ. ճշտել են Արամի թաղման վայրը, ապա՝ որոշել նրա գերեզմանին խաչքար կանգնեցնել: Խիստ գաղտնիության պայմաններում 1982թ. օգոստոսի 11-ին այդ խաչքարը հասցվել է Թոխմախի գերեզմանոց և առանց տեխնիկայի օգտագործման տեղադրվել Արամ Մանուկյանի գերեզմանին[21]:

Արամի մահը ծանր հարված էր ոչ միայն նրա կուսակցության, հայ ժողովրդի, այլ նաև հայոց պետականության համար: Հայաստանի ներկայիս հանրապետությունը ժառանգորդն է Հայաստանի առաջին հանրապետության: Քանի որ Հայաստանի Հանրապետության հիմնադրումը 1918 թվականից սկիզբ առած հայոց նորագույն պետականության

կենսագրության սկիզբն է, ուստի նրա հիմնադիրները ոչ միայն Առաջին հանրապետության, այլև հայոց նորագույն պետականության հիմնադիր հայրերն են, որոնց փաղանգը գլխավորում է առ այսօր արժանվույնս չգնահատված մեծերից ամենամեծը՝ Արամ Մանուկյանը, որին մոռացության մատնելու, նաև վարկաբեկելու համար տասնամյակներ շարունակ արվեց ամեն ինչ: Խորհրդային գաղափարախոսությունը, միջոցների մեջ խտրություն չդնելով, փորձեց սևացնել, նսեմացնել ՀՀ-ն, նրա հիմնադիր Արամ Մանուկյանին, Ռոստոմին և Դաշնակցությանն ընդհանրապես, բայց «Լեռներու հովին ու բարձրութեան չեն հասնիր ճահճուտի ցեխը, անախորժ բոյրը, շատերը եղան, որոնք ցանկացան ցեխ շպրտել այդ բարձրութեան, բայց ցեխը չէր հասներ բարձրութեան և կիյնար իրեն նետողներուն վրայ»[22]: Արամի մասին այս խոսքերը Ն. Աղբալյանինն են: Դրանց ճշմարտացիությունը փաստեց ամենազոր պատմությունը, որն արժանին մատուցեց յուրաքանչյուրին և անկաշառ վճռով շատ կուռքերի պատվանդաններից ցած գլորեց, իսկ Արամին, Ռոստոմին..., որոնց շուրջ մոռացության շղարշ էր հյուսվել, վերադարձրեց հայ ժողովրդին՝ փաստելով, որ վարչակարգերը, տարատեսակ բռնաճնշումներն ու քաղաքական շահերն անզոր են հայ ժողովրդի պատմական հիշողության դեմ, այն հիշողության, որի ծալքերում անգամ պետականության բացակայության պայմաններում մեր ժողովուրդը սրբորեն պահել է Հայկ Նահապետին, Տիգրան Մեծին, Մեսրոպ Մաշտոցին, որոնց կողքին դրեց Արամին, Ռոստոմին ու Հայաստանի Հանրապետությունը կերտած մյուս մեծերին... Իրենց կերպարով ու գործունեությամբ Արամն ու Ռոստոմը հայ ժողովրդի և նրա նորօրյա ղեկավարների համար օրինակ են՝ որպես իրատես, շրջահայաց, արդարամիտ, անշահախնդիր, համեստ, տաղանդավոր, անձնազոհ և իրենց ժողովրդի ճակատագրի նկատմամբ մեծագույն պատասխանատվություն ունեցող պետական գործիչների տիպար: Մեկդարյա հեռավորությունից նրանք նորօրյա Հայաստանի ղեկավարներին պատգամում են բոլոր միջոցներն ու հնարավորությունները ծառայեցնել մեկ նպատակի՝ հայոց պետականության ամրապնդմանը, հայ ժողովրդի ազատությանն ու բարեկեցությանը: Իսկ հայ ժողովրդին ավելի քան մեկդարյա հեռավորությունից Ռոստոմը պատգամում ու զգուշացնում էր լինել շրջահայաց, չընկնել ամբոխավարների ծուղակը: Կարծում ենք՝ մեր օրերի, ինչու չէ, նաև ապագայի համար ուսուցողական են Ռոստոմի խոսքերը. «Վնասակար են այդ սողունները, երբ փքուն խօսքեր փչելով ու փարիսեցիական ձևեր բանեցնելով՝ շահագործում են ամբոխի դիւրահաւատութիւնն ու տգիտութիւնը»: Իսկ հայոց պետականության հիմնադիր Արամը պատգամում էր.«....Մենակ ենք և պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»: Սա կրկնելու ենք այնքան, մինչև այն դառնա հայ ժողովրդի հավատամքը: ■

Արամ Մանուկյանը մահվան մահճում

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառահատոր շարք), հատ. Դ, 1918-1992, Եր., 1995, էջ 51-52:
Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (Հոդվածների ժողովածու), Եր., 2010, էջ 63:
Նույն տեղում, էջ 62:
Նույն տեղում, էջ 62-63:
Նույն տեղում, էջ 110:
Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2008, էջ 241:
«Աշխատանք» օրաթերթ, 12 փետրվարի 1919, N 4, էջ 7:
Արամը, մահուան յիսնամեակին առթիւ, Եր., 1991,էջ 87-88:
Նույն տեղում, էջ 99:
Նույն տեղում, էջ 96:
Նույն տեղում, էջ 99:
Նույն տեղում, էջ 88:
Արամ Մանուկյան.ազգային և պետական գործիչը, էջ 66:
Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան. 1890-1950, խմբ.՝ Վրացեան Ս., Բոստոն, 1950, էջ 467:
«Աշխատանք» օրաթերթ, 12 փետրվարի 1919, N 4, էջ 13-14:
Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատ. Ե, Պէյրութ, 1966, էջ 50:
Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն,Եր., 1993, էջ 252:
Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 241:
https://old.arfd.am/?=21143.
Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 245:
Տեսhttps://old.arfd.am/?=21143:
«Աշխատանք» օրաթերթ, 12 փետրվարի 1919, N4, էջ 13-14

ա) Աղբյուրներ

1. Արամը, մահուան յիսնամեակին առթիւ, Եր., 1991:
2.Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան(քառահատոր շարք. 1918-1992), հատ. Դ, 1995:

բ) Գրականություն

1.Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը(Հոդվածների ժողովածու), Եր., 2010:
2. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2008:
3. Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան. 1890-1950,խմբ.՝ Վրացեան Ս., Բոստոն,1950:
4.Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատ. Ե, Պէյրութ, 1966:
5.Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն,Եր., 1993:

գ) Մամուլ

1.«Աշխատանք» օրաթերթ, 12 փետրվարի 1919, N4:

դ) Համացանցային նյութեր

https://old.arfd.am/?=21143

ՀՅ Դաշնակցութիւնը եւ Պարսկաստանի Սահմանադրական շարժումը (2-րդ եւ վերջին մաս)

Դերենիկ Մելիքեան
«Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագիր, պատմական գիտութիւնների թեկնածու

Քեռու խումբը Թաւրիզում մնաց մօտ 7 ամիս (1908թ.-ի հոկտեմբերից մինչև 1909 թ. մայիս), երբ կուսակցութեան կարգադրութեամբ՝ Ռոստոմը թողնում է Պարսկաստանը, իսկ Քեռին իր խմբերով անցնում է Սալմաստ: Դա այն օրերին, երբ ռուսները պատրաստւում էին ներխուժել Թաւրիզ (1909 թ., ապրիլ-մայիս): Այստեղ պէտք է մատնանշել, որ երբ յեղափոխական խմբերը հերոսական պայքար էին մղում Թաւրիզը պաշարող հակայեղափոխական ուժերի դէմ, լուր են առնում, որ Թեհրանից նոր զօրախմբեր են պատրաստւում ուղղուել դէպի քաղաք: Անմիջապէս Ռոստոմի հրահանգով՝ նամակ է ուղարկւում Գիլանի կոմիտէին, յատկապէս Եփրեմին,[1] որ միջոցների դիմեն՝ յեղափոխական-մարտական ուժերով դիմագրաւելու Էյն օլ Դոլէի գլխաւորած զօրքին, որպէսզի սրանք Թաւրիզ չհասնեն և պաշարման օղակը աւելի չսեղմեն. չէ՞ որ առանց այդ էլ յեղափոխական Թաւրիզը տառապում էր սնունդի և զինամթերքի պակասից:

«Վրէժ»-ի Կենտրոնական կոմիտէի այդ գրութիւնը մեծ խթան է հանդիսանում, որով Եփրեմը լծւում է բուռն աշխատանքի, որի արդիւնքում Ռաշտի յեղափոխականների շարժումը և հետագայում Ղազւինի գրաւումը՝ Եփրեմի միջոցով, ռազմագիտական խոշոր նշանակութիւն է ունենում, քանի որ Թաւրիզից Թեհրանի կտրելով ձախողւում է այնտեղի հակայեղափոխական ուժերին օժանդակելու հնարաւորութիւնը, որով էլ պէտք է բացատրել նաև ցարական զօրամասի մուտքը Ատրպատական:

***

Ռուսական կառավարութիւնը հետևում էր թաւրիզեան զարգացումներին և յարմար առիթի էր սպասում ռազմական ուժով միջամտելու ընթացող իրադարձութիւններին, նպատակ ունենալով հաստատել հիւսիսային Պարսկաստանում[2]: *«Պետերբուրգի կառավարութիւնը,- գրում է Է. Ակնունին (Խաչատուր Մալումեան),-իրաւունք համարեց զօրք մտցնել Սալմաստ, Թաւրիզ և Ռաշտ, գործակալներ Թեհրան, բաց պահելու իր արշաւանքի ճամբան դէպի Ատրպատական, որու վրայ 100 տարուց ի վեր աչք ունի Մոսկովի միապետութիւնը, և դրա հետ միասին սանձ դնելու Սահմանադրական շարժման պարագլուխների բերանին ու կոչերին, որոնց արձագանգները հրճւանքով էին ընդունւում Կովկասեան լեռնաշղթաների շրջավայրերում...»:*[3] Իսկ այդ ճամբին *«Պատրուակներ չէին պակսեր դաւադիր թշնամին: Ատենէ մը ի վեր ան կը գանգատէր Թեհրանի մէջ ճամբաները գոցելու առթիւ, ապա և սկսաւ մտահոգիլ՝ իբրև թէ կոիւներն ու անիշխանութիւնը կը վտանգէին եւրոպացիներու, մասնաւորապէս՝ ռուսներու կեանքը: Թաւրիզի ռուս հիւպատոսը՝ Միլլեր, օր մը այդ առթիւ իր սրբազան ցաւումը կը յայտնէր մեր Ռոստոմին, որ և կը գրեր հետևեալ նամակը՝ Արևմտեան Բիւրոյին.«Ռուսների ներս գալը այն րոպէին, երբ Սպահանը, Ղազւինը, Ռաշտը սկսել էին սպառնալ և Թաւրիզը ուժ էր զգում դիմադրելու, հակառակ սովին, մեզ շատ կոտրեց: Ասել, թէ անակնկալ էր, ճիշտ չէր լինի: Դրա մասին յաճախ խօսւում էր... մի օր ... գտնում եմ թեմակալ առաջնորդին մօտ ռուսաց հիւպատոսին, որը յուզած՝ պատմում էր, թէ ինքը հաստատ տեղեկութիւն ունի, որ իրենց և առհասարակ եւրոպացիներին լուրջ վտանգ է սպառնում պարսիկների կողմից... Ես շտապեցի կատեգորիկ կերպով յայտնել, որ իր ստացած տեղեկութիւնները հիմնովին սխալ են... ասացի, որ մենք ամէն կերպ արգելք կը հանդիսանանք այդ տեսակ մի յարձակման... Յամենայն դէպս՝ յանձն առայ գնալ Սաթթար խանի մօտ և նրա կողմից էլ վստահեցնել, որ բոլորովին հանգիստ մնան: Հետևեալ օրը Շամ Գազանի կուին էր. նկատեցինք, որ հիւպատոսարանի տանիքին վրայ պատերը բարձրացնում են և դիրքեր շինում...Այս կատարելապէս անտեղի պատրաստութիւնները լուրջ մտատանջութեան մէջ ձգեցին բոլորիս: Անջոմանի հաւաստիացումները նոյնպէս ապարդիւն անցան: Պատրուակ բռնելով ճանապարհների բացման առթիւ Շահին խուսափողական ընթացքը՝ անհրաժեշտ գտան ռուսաց զօրք մտցնել նախ 3-400 զինուոր, ապա եկան 3-4 հազար ևս՝ քանի մը տասնեակ թնդանօթներով... մնացածը ձեզի յայտնի կը լինի: Ռուսները հիմա իրենց կատարեալ տէր են զգում (Ատրպատականում): Մեզ մնում է միսիթարւել նրանով, որ, այնուամենայնիւ, Սահմանադրութիւնը ձեռք բերուեց, որից անպայման կօգտուեն Ատրպատականից դուրս վայրերը, գուցէ հեռաւոր ապագայում նաև՝ Ատրպատականը: Քիչ նշանակութիւն չունի նաև այն, որ հնար եղաւ առաջն առնել սպառնացող կոտորածներին՝ ոչ միայն Թաւրիզում, այլև՝ Սալմաստում, Խոյում, Ուրմիայում:*

Ռուս զօրքի հրամանատար Մնարսկի աջ ու ձախ

ամենուն կը յայտարարէր, թէ եկեր է ժամանակաւոր կերպով՝ իբրև «խաղաղարար»: Նոյն գեղեցիկ առաքելութիւնը ստանձնած էր Թեհրանի մէջ Լիախով՝ իր կոզակներով, որ սկիզբէն ի վեր դաւ կը նիւթէր երկրի սահմանադրութեան դէմ՝ սատարելով Մեհմետ Ալիի բոնապետական ձգտումներուն... Բնականաբար, ոչ Սաթթար խանը, ոչ ալ դաշնակցականները տրամադիր էին՝ պատերազմելու ցարի բանակին դէմ»[4]:

Միապետականների դէմ գնալու Եփրեմի ձեռնարկած նախապատրաստութիւնները համահունչ էին իր կուսակցութեան՝ ՀՅ Դաշնակցութեան որդեգրած քաղաքականութեանը: Ինչպէս նշեցինք, Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր ժողովը 1907 թ. գարնանն ընդունել էր Պարսկաստանի Սահմանադրական շարժմանը կուսակցութեան գործուն մասնակցութեան առաջադրանքը: Եւ ահա, այժմ, երկու տարի չորս ամիս յետոյ, 1909 թ. սեպտեմբերին, Վառնայում (*Բուլղարիա*) տեղի ունեցող ՀՅԴ հերթական՝ Հինգերորդ Ընդհանուր ժողովը ևս հանգամանօրէն քննութեան առաւ Պարսկաստանի յեղափոխութեան խնդիրը և գտաւ, որ նախորդ ժողովի այդ երկրի իրադարձութիւնների վերլուծութիւնը միանգամայն ճիշտ է եղել և որ կուսակցութեան որդեգրած ընթացքը պէտք է շարունակել[5]:

Ռէակցիայի հետևանքով ստեղծուած ծանրակշիռ պահերի մասին Եփրեմի մտատանջութիւններն արտացոլուել են իր անբաժան զինակից Խաչատուր Մինասեանին գրած նամակներում՝ 1910 թ.-ի դեկտեմբերին.-*«.... Մթնոլորտը լի է անակնկալներով. մարդ չգիտէ՝ վաղը ինչ է լինելու: Ամէն բան անկայուն է: Կառավարութեան քաղաքականութիւնը հոգևորականների ձեռքն է ընկել, նրանք են տոն տուողները: Ռէակցիան գործում է իր բոլոր թափով... Խօսւում է Մահմեդ Ալի Միրզայի (Շահի) գալու մասին. Եւ ժողովուրդը գոհ է, որ այդպէս լինի: Ահա այդպիսի մի ժամանակ ես հրաժարւում եմ, որը դառնում է զանազան ենթադրութիւնների պատճառ ... Որպէսզի դուք զանազան մեկնութիւններ չտաք, լսեցէք հետևեալը.- Արտաքին խաղերը, ներքին ինտրիգաները, կուսակցութիւնների ապիկարութիւնը երկիրը հասցրել են ներկայ վիճակին, մինչև իմ Ղարադաղից վերադառնալը: Երբ հասայ Թեհրան, բոլոր թայֆաները աչքերը ինձ վրայ տնկած՝ մի ճար էին սպասում: Գրեթէ մէկ ու կէս ամիս ես անվճռական դրութեան մէջ էի, երբ Սաթթարի ու Բաղերի և շատ ուրիշների ստեղծած անարխիային[6] ռուսները գլխաւորապէս, և նաև միւս դեսպանները ռլտիմատում ներկայացրին... Այդ դրութիւնը ինձ ստիպեց՝ նորից գործին խառնուելու: Ես արդէն խրտում եմ և տեսնում եմ, որ երկիրը ձեռքից գնում է, բայց ոչ կարողանում եմ գործից հեռանալ և ոչ օգտակար լինել: Ներքին գործոց նախարարի գործն էլ ծանրանում է ինձ վրայ: Դեմոկրատ կոչուածները սկսում են իրենց ոտնձգութիւնները՝ բոլոր հիմնարկութիւնների մէջ, նոյնիսկ արտաքին քաղաքականութեան մէջ*

Էյն-օլ-Դոլէ, Պարսկաստանի ռեակցիայի պարագլուխը

(որն փոքր-ինչ մեղմացել էր) և այդպիսով՝ նորից ռլտիմատում՝ ռլտիմատումի վրայ թափում բոլոր դեսպաններից...:

Այդ ժամանակ է, որ կաբինէն երերում է: Յեւրադիմական Էյն օլ Դոլէն, Ֆարման-Ֆարման և Մոհթաշամ օլ սալթանէն մտնում են կաբինէի մէջ: Այլևս իմ ժամանակը հասել էր: Ես չէի կարող գործակցել վերոյիշեալների հետ, որով և հրաժարւում եմ վերջնականապէս: Թէև չի կարելի գրելով բացատրել և մի գաղափար տալ, բայց և այնպէս՝ կարծում եմ, թէ մի որոշ գաղափար տուի ընկերներին: Վճռել եմ այլևս ոչ մի պաշտօն չընդունել, եթէ զանազան անակնկալներ նորից չգան և չիսախտեն վճիռս: Մտածում եմ՝ գարնանը հեռանալ...»[7]:

Երկրի ընդհանուր ռէակցիայի մթնոլորտից ազդուած էին նաև Եփրեմի մի շարք կուսակիցներ, որոնք ևս դժգոհելով անիշխանական վիճակից, աւելորդ էին համարում այլևս կուսակցութեան ուղղակի մասնակցութիւնը կառավարական գործերին, որոնք համարւում էին հեռու՝ սահմանադրական նպատակներից: Նրանք յատկապէս Եփրեմին յորդորում էին հրաժարուել ոստիկանապետութիւնից՝ դա բնութագրելով որպէս կուսակցութեան սկզբունքներին անյարիր երևոյթ: Դժգոհ ընկերները պահանջում էին նաև, որ Եփրեմը հրաժարի կառավարութեան գործերին մասնակցելուց, քանի որ Պարսկաստանը անգլոռուս խնամակալութեան տակ գտնուելով և մանաւանդ ռուսական պահանջները ընդունելուց յետոյ, կորցրել էր իր անկախութիւնը, իսկ ձևաւորուած դահլիճը ռէակցիայի մի դահլիճ էր, որը խեղդել էր բոլոր ազատութիւնները և զինուորական դրութիւն սահմանել: Դժգոհները նոյնպէս փաստում էին, որ Եփրեմի մղած կռիւները՝ յանուն Սահմանադրութեան և բոլոր հակայեղափոխական «Դոլէների» դէմ, այլևս իմաստ ու արժէք չունեն և միայն Դաշնակցութեանն են վարկաբեկում: Յատկանշելի է, որ Եփրեմի ոստիկանապետութեան հանգամանքից ևս խիստ դժգոհ էին պետայրերը, չէ որ նոյն Եփրեմն է կարգադրել որոշ շրջանների *(զորօրինակ, Լահրուդ գիւղաքաղաքը)* ազգաբնակչութեան հարկատուութիւնից զերծ պահելը, այն շրջանները, որոնք հէնց ռուս զինուորների յարձակմանը ենթարկուելով՝ կողոպտուել ու ծանր աղքատութեան

էին մատնել[8]: Իսկ իզուր չէր պետնախարար Իզվոլսկիի՝ *«Ռոյտեր»*-ի հետ զրոյցի ժամանակ արած այն յայտարարութիւնը, ըստ որի *«Կովկասցի յեղափոխականին նշանակել են ոստիկանապետ, իսկ մենք երբեւէ չենք քաջալերելու այդ քայլը...»*[9]:

Ռուսաստանի արտգործնախարարի կողմից Եփրեմի նշանակումը համարւում էր հետեւանք Իրանի խառնիճաղանճ վիճակի, որով էլ արդարացւում էր Ռուսաստանի զօրքի ներկայութիւնը Իրանում[10]:

Բացի այդ կար ևս մի այլ հանգամանք, որն ինքնին արդարացնում է ժամանակին Ռոստոմին և մասամբ Եփրեմին հակադրող մի շարք կուսակից ընկերների մտահոգութիւնը՝ նրա ոստիկանապետ նշանակելու բերումով: Ջորջինակ Ռուսաստանի լիազօր նախարար Պոկլովսկի – Կոզիլը, իր երկրի իշխանութիւններին յղած զեկոյցում նշել է, որ «*Աթաբէկ*» զբօսայգու միջադէպը ժողովրդին յուսալքութեան էր մատնել ու նրանց վատատես դարձրել բախտիարա-դեմոկրատական իշխանութիւններից[11]: Կամ ինչպէս անգլիացի Մարլինգն էր զեկուցել՝ այդ միջադէպը նոյնպէս ժողովրդի խիստ դժգոհանքն էր առաջացրել հայ փոքրամասնութեան նկատմամբ, խախտելով նախկին միասնականութիւնը, քանզի Եփրեմ խանը և իր զինակիցները առանցքային դեր էին ունեցել Սաթթարին և Բաղերին զինաթափ անելու գործում: Ըստ Մարլինգի *«Մուսուլմանների մէջ ընդգծուած էր այն դժգոհութիւնը, թէ ինչու ղեկավարման սանձը պէտք է քրիստոնեայ Եփրեմի ձեռքում լինի»*[12]:

Հակառակ վերոգրեալ համընդհանուր գնահատականի, «Իրանէ Նօ» (Նոր Իրան) թերթը որպէս Դեմոկրատ կուսակցութեան պաշտօնաթերթ պաշտպանել է զինաթափման գործընթացը, ընդգծելով. *«Ցաւալին այն է, որ մենք Սահմանադրական օրէնքների կիրառման գործում պարտաւորւում ենք նաև դէմ-յանդիման գտնւել մինչեւ Սահմանադրութեան հերոսներին, մինչև իսկ նրանց սասպելով: Ընդունելով, որ հերոսների բռնաճնշումը մեծ չարիք է, սակայն, աւելի մեծ և վտանգոյն չարիքը օրինականութեան դէմ դուրս գալն ու անձնական ամբիցիաներից ազդուած՝ օրէնքին չենթարկւելու հանգամանքն է »*[13]:

Եփրեմը և իր Թեհրանի ու Թաւրիզի համախոհ կուսակից ընկերները այս բոլորին պատասխանում էին նրանով թէ՝ դիկտատորական-զինւորական դրութիւնը ժամանակաւոր չարիքներ են և թէ՝ պէտք է նոր Մեջլիս գումարի և իր, Քեռու և միւս մարտիկների կոիւը, այնուամենայնիւ, ազատագրական կոիւ է և որ դաշնակցական խմբերի հրաժարումը աւելի ծանր կացութեան կը մատնի երկիրը և այնքան թանկագին զոհեր տալուց յետոյ, անկարելի է յետ քաշւել ճամբի կէսից:

«Դժգոհ ընկերների և Թեհրանի Կենտրոնական Կոմիտէի թէզը պաշտպանութիւն չգտաւ կուսակցութեան բարձր մարմիններում մէջ,-գրում է Վարանդեանը,- Երկու բիւրօները կը յորդորէին՝ ընդդիմադիրները համերաշխ ընթանան Եփրեմի հետ: Վէճը՝ Եփրեմեաններու և հակաեփրեմեաններու

Ռոստոմ

միջև տևեց ամբողջ ամիսներ (ինքը՝ ռազմական հրամանատարը ծանր հոգերով պաշարուած, չէր մասնակցեր ժողովներուն): Ի վերջոյ, Արևմտեան Բիւրօն հեռագրով հրահանգեց՝ պատասխանատու մարմին մը կազմել ձեռնահաս ընկերներէ և հաշտեցնել դժգոհ ընկերները՝ Եփրեմի հետ»[14]:

Յատկանշելի է, որ *«Եփրեմեաններու և հակաեփրեմեաններու»* միջև չարչրկուած *«.... Խնդրոյ առարկայ հակամարտութիւնը տեղի չի ունեցել այնպէս, ինչպէս Մ. Վարանդեանի ՀՅԴ պատմութեան մէջ է գրուած: Վարանդեանի ՀՅԴ պատմութեան Բ հատորը,-գրում է պատմագէտ Խաժակ Տ. Գրիգորեանը,- ինչպէս յայտնի է, տպագրւել է 1950 թւականին Գահիրէում: Նրա վրայ զգալի են ըստ ժամանակի ոգու և քաղաքական ուղղութեան խմբագրական միջամտութեան հետքերը»*[15]:

Մէջբերելով Գահիրէում տպագրուած հատորից հետևեալ հատուածները, ըստ որոնց՝ *«.... Դժգոհ ընկերները, «ձախ» տրամադրուած, կը պահանջէին բարձր ու անաղարտ պահել կուսակցութեան դրօշը, զերծ կոմպրոմիսներէ, իրաւախոհութենէ, և կարծես թէ կը մոռնային միջավայրը, որը կը գործէին: Ռուս յեղափոխութեան տակաւին թարմ տպաւորութեան տակ հակամէտ էին «ձախ» «արմատական» գործունէութեան և շատեր բերան առած էին ընկերվարական, աշխատաւորական, դասակարգային բառերը»*,- Խաժակ Տէր Գրիգորեանը առաջին հերթին փաստում է, որ *«....Վարանդեանը դժուար թէ այսպիսի մտքեր արտայայտէր, վկայ՝ գրական իր ամբողջ ժառանգութիւնը»* ապա յաւելում՝*«Ինչպէս տեսանք, դժգոհ տարրը,«ձախ»ը, «արմատական»ը մարմինն էր, ոչ թէ անհատ ընկերներ: Հէնց մարմնի տեսակէտներն էին, որ ընդունելութիւն գտան թէ՛ Պարսկաստանի Ռայոնական, թէ՛ Շահաստանի Շրջանային և թէ՛ ՀՅԴ 7-րդ Ընդհ. ժողովներում: Այստեղ «ձախ» կամ «աջ» տերմիններն իմաստ չունեն, որովհետև, ինչպէս տեսանք, երկու կողմերն էլ ելնում էին սոցիալիզմի սկզբունքներից»*[16]:

Միւս կողմից՝ ՀՅԴ Բիւրոյի հրահանգին զուգահեռ Թեհրանում որոշուեց, որ ՀՅԴ Կենտրոնական Կոմիտէն իր պատգամաւորների միջոցով կուսակցութեան պահանջները ներկայացնի պարսիկ կառավարութեանը: Ըստ այդ պահանջ-վերջնագրի՝ պէտք է վերահաստատել գործնապէս

սահմանադրական կարգը, յայտարարել մամուլի, խօսքի, ժողով-հաւաքոյթների ազատութիւն և անձի անձեռնմխելիութիւն ու Մեջլիսը վերանորոգել ժողովրդական ազատ ընտրութիւններով: Հակառակ դէպքում՝ Կենտր. կոմիտէն սպառնում էր դաշնակցական մարտական խմբերին յետ կանչել կուի դաշտերից:

Միայն կառավարութեան գրաւոր հաւաստիքներն ստանալուց յետոյ էր, որ Կենտր. կոմիտէն Քեռուն ու միւս ռազմիկներին հրահանգեց միանալ Եփրեմին և մէկտեղուած ուժերով դիմադրել արշաւող Սալար օլ Դոլէին:

Այս պայմաններում սահմանադրականները, այդ թւում նաև ֆինանսների կառավարիչ ամերիկացի փորձագէտ Շուստերը[17], որ Եփրեմին կոչել է «Պարսկաստանի Գարիբալդի», համոզուած էին, որ միայն նա կարող է Սահմանադրութիւնը փրկել վերահաս ահարկու վտանգից[18]:

***

Եզրակացութիւն անելով Պարսկաստանի սահմանադրական շարժման մէջ հայ քաղաքական կուսակցութիւնների դերակատարութեան մասին, պէտք է ընդգծել, որ Պարսկաստանի Սահմանադրական յեղափոխութեանը, ժողովրդավարական կարգ և ընկերվարական սկզբունքներ որդեգրած կուսակցութիւնները՝ ՀՅԴ-ն և ՍԴՀԿ-ն չէին կարող չմասնակցել, եթէ դա յատկապէս նպաստելու էր իրենց բուն հարցի՝ արևմտահայութեան ազատագրութեան դատին, որի յաղթանակով տառապող ժողովրդի ուսերից կը ընկներ դարաւոր լուծը, կը վերանար կամայականութիւնը և կը տիրէր արդար օրէնքը:

Այդ նկատառումով էր, որ ՍԴՀԿ-ն ու յատկապէս ՀՅ Դաշնակցութիւնը իրենց մասնակցութիւնը բերեցին այդ շարժմանը և ազդեցիկ դեր ունեցան կազմակերպչական, մարտական ուժերով ու ղեկավարներով: Միացած Իրանի յեղափոխական տարրերի հետ՝ նրանք յաջողեցին յաղթել բռնապետութեանը և հաստատել Սահմանադրական կարգեր, այդ ճանապարհին նուիրաբերելով ու զոհաբերելով ամենաթանկագիները: Սահմանադրութիւնը հաստատուելով հանդերձ՝ կառավարութեան համաձայնութեամբ չվերացան դրսի (Անգլիա-Ռուսաստան) միջամտութիւնները: Իսկ հիմնականում՝ վերջնիս ուլտիմատումը (1911թ.) և ուղղակի միջամտութիւնները քաղաքական ընդհանուր համակարգի փոփոխմանը հանգեցնելով, նսեմացրեց երկրի անկախութիւնն ու դրա արդիւնքում՝ սահմանադրական-առաջադիմական կարգեր հաստատելու շարժումը չարդիւնաւորուեց վերջնական յաղթանակով:

«Սահմանադրական կարգերի յաղթանակը,- գրում է Խ.Տ. Գրիգորեանը,- անկասկած, խոշոր իրադարձութիւն է Պարսկաստանի ժողովուրդների համար: Նաև այն մեծ նշանակութիւն ունէր Մերձաւոր Արևելքի բոլոր ժողովուրդների զարթօնքի գործում: Այն առաջադիմական գաղափարների կրողն էր մի իսաւար միջավայրում: Մի պահ առկայծեց և մարեց: Այս իրադարձութիւնը լաւ է բնութագրուած ՀՅ Դաշնակցութեան Թեհրանի կ.կոմիտէի 1913 թ. օգոստոսի 7 թւակիր շրջաբերականում, որտեղ մասնաւորապէս ասուած է.- « Արևելեան բռնակալ և դեսպոտ ինքնակալութիւնից յանկարծակի յեղաշրջմամբ, նա անցաւ ամենավերջին սիստեմի Սահմանադրութեան և բացարձակ ժողովրդապետութեան, որ յաճախադէպ ցնցումներից, սայթաքումներից և կարճատև հոգեվարքի ապրումներից յետոյ, եկաւ կանգ առաւ մի կէտի, ուր երկիրն արդէն կատարելապէս կորցրած իր անկախութիւնը, գլորուեց երկու հզօր հարևանների մի դարուց աւելի իր առաջ բացուած գիրկը»»[19]:

Դաշնակցական Խեչոն, Եփրեմ խանը և Քեռին

ՀՅԴ կուսակցութիւնը տեսնելով Սահմանադրութեան ձախողումը, նկատելով, որ Իրանը Անգլիայի և Ռուսաստանի խնամակալութեան տակ է և մանաւանդ ռուսական պահանջներն ընդունելուց յետոյ՝ երկիրը կորցրել է իր անկախութիւնը և միւս կողմից էլ խեղդուել էին բոլոր ազատութիւնները, անիմաստ էր տեսնում այլևս մասնակցելու այն շարժմանը, որն արդէն վերահսկւում էր այլասերուած ղեկավարութեամբ, որի հետ այնուամենայնիւ համընթաց չէին կարող լինել ՀՅԴ-ի մարտական ու ռազմական փաղանգի ներկայացուցիչներն իսկ, յանձինս Եփրեմների,[20] նոյնիսկ եթէ չնահատակուէին նրանք:

Ահաւասիկ, այդ պահերին էր, որ ՀՅ Դաշնակցութեան Շահստանի, որ միևնոյն է Թեհրանի, Կ.կոմիտէն 1912 թւականի մարտի 22-ին հրապարակում է մի յայտարարութիւն՝ ուղղուած պարսկական բանակի հայ զինուորներին: Այդ յայտարարութեան մէջ նախ պարզաբանւում է իրերի դրութիւնը, բնութագրւում է ստեղծուած նոր կացութիւնը, մատնանշւում են յանցաւորները և վեր հանելով դերակատարների տխուր խաղերը, յորդորում է հայ զինուորներին, որ հրաժարւեն հայ զինուորի համար աննպատակ կռվից: ***«Ոչ մէկ զինուոր այս կռվին, և ոչ մէկ գնդակ***,-ասուած է Կ.կոմիտէի յայտարարութեան մէջ,-***այս պէտք է լինի մեր նշանաբանը»***[21]:

Միւս կողմից, Ատրպատականի Կ.կոմիտէն էլ եկել էր Շահստանի Կ.կոմիտէի տեսակէտին և ընդունել

էր նրա կարծիքը: Բայց Եփրեմի նահատակութիւնը առժամապէս յետաձգեց խզման գործնականացումը: Երկուստեք քաշքշուկները շարունակեցին մինչև 1912 թ.-ի սեպտեմբեր ամիսը, երբ Շահստանի Կ.Կ.-ի հրաւէրով գումարուեց ՀՅ Դաշնակցութեան Պարսկաստանի Ռայոնական ժողովը, որին մասնակցում էին Վրէժի և Շահստանի Կ.Կ.-երի ներկայացուցիչները և Շահստանին ենթակայ շրջանների (Թեհրանի, Էնզելիի, Ռաշտի, Ն. Ջուղայի) պատգամաւորները:

Սեպտեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 6-ը ընկած եռամսեայ ժամանակա-հատուածում ժողովը լայն քննարկումների օրակարգ էր դարձրել՝ ներկա իրավիճակի գնահատումը և կազմակերպութեան վերաբերմունքը դէպի ներկայ պարսիկ կառավարութիւնը, կազմակերպութեան դիրքը դէպի բանակում եղած դաշնակցականները, կազմակերպութեան դիրքը դէպի կառավարական, վարչական պաշտօն ունեցող դաշնակցականները, կազմակերպութեան բոնելիք դիրքը և ապագայ գործունէութիւնը Պարսկաստանում...:

Ի վերջոյ Ռայոնական ժողովը հաստատում է, որ Իրանի անկախութիւնը փաստօրէն ի չիք է դարձել և որ կառավարութիւնը կորցրել է ինքնուրոյնութիւնը, ռէակցիան տեղ է գտել նրա շարքերում և նա դիմում է դէպի բոնապետութեան վերականգնումը, հակառակում է Խորհրդարանի գումարմանը, հալածում է կուսակցութիւններին և *«Մեր մասնակցութիւնը կառավարութեան մղած կռիւներին, որը նախկին ազատական կուսի բնոյթը միանգամայն կորցրած, ստանում է ցեղային-թայֆայական, իշխանատիրական և նոյնիսկ ռէակսիոն բնաւորութիւն ունեցած իրենց իշխանութեան հակառակորդների և մինչև իսկ օպոզիսիոն ու ազատական տարրերի դէմ,- դառնում է միանգամայն անհնարին և հակառակ մեր իդէալներին»*[22]:

Պարզ է այսպիսի եզրակացութեան արդիւնքը մի յեղափոխական կուսակցութեան համար: Այն պիտի լինէր արմատական: Ուստի ժողովը որոշում է *«Խզել իր յարաբերութիւնը և դադարեցնել իր զինուորական և բարոյական ամէն տեսակի աջակցութիւնը ներկայ ռէակսիոն կառավարութեան, իրեն վերապահելով ապագայ անելիքները և ջանքերը, ուժ տալով և աջակցելով երկրի ազատական-սահմանադրական տարրերին և այդպիսով զարկ տալու, վերականգնելու երկրի Սահմանադրական կարգերը, միևնոյն ժամանակ գործադրելով միջոցներ, որոնք վայել են մի յեղափոխական-Սոցիալիստական կուսակցութեան, ինչպիսին է մեր կազմակերպութիւնը»*[23]: Այս որոշումն ,- ընդգծում է Խ.Տ.Գ.-ն,- ունէր ռազմավարական նշանակութիւն, իսկ միւս բոլոր որոշումները մարտավարական լինելով, բխում էին նրանից [24]:

Հետագային՝ 1913 թ.-ի օգոստոսին գումարուեց ՀՅԴ 7-րդ Ընդհ. ժողովը, որտեղ մի շարք հարցերի թւում քննուեց Պարսկաստանի Սահմանադրական շարժմանը մասնակցութեան հարցը և որոշուեց.

«1. Վաւերացնել Թեհրանի և Ատրպատականի կեդր. կոմիտէներու բոլոր այն տնօրինութիւնները, որոնք կը վերաբերին դաշնակցական զօրախմբերու ցրումին Պարսկաստանի մէջ:

«2. Ի զօրու պահել Ջ Ընդհանուր ժողովին (1911թ., օգոստ.-սեպտ., Պոլիս) Պարսկաստանին վերաբերող որոշման 3 –րդ կէտը, որ էր « Շարունակել սերտ յարաբերութիւն պահպանել ռամկավար տարրերու հետ, գործակցելով անոնց այն բոլոր պարագաներու մէջ, երբ անհրաժեշտութիւն կը ներկայանայ պաշտպանել և ամրապնդել Սահմանադրական կարգերը...»[25]:

«.... ՀՅ Դաշնակցութեան ճշմարիտ և իրական կեցուածքը այս իրադարձութեան մէջ մնացել է գրեանի տակ և ժողովրդականութիւն է ստացել այն վարկածը, ըստ որում՝ Դաշնակցութեան յանձնառութիւնը պարսկական սահմանադրական շարժման նկատմամբ իբր թէ յաւիտենական է: Նաև այս կարծիքն է գոյացել, որ զինուորական համագործակցութիւնը ՀՅ Դաշնակցութեան և պարսիկ Սահմանադրականների միջև վերջ է գտել տարերայնօրէն, Եփրեմի եղերական մահուան իբրև հետևանք»[26]:

Շարունակելով իր միտքը, Խ. Տէր-Գրիգորեանը օրինակ է բերում պարսիկ ժամանակակից պատմաբան Էբրահիմ-է Սաֆայիի *«Սահմանադրութեան առաջնորդները» գրքից, որտեղ նա հանգամանօրէն պատմելով Եփրեմի կեանքի մասին, գրում է, որ Եփրեմի սպանութիւնից յետոյ, երբ հայ ֆիդայիները Սալար-էդ-Դովլէի դէմ մղած կռից վերադարձան,«Դաշնակցութիւնը խորտակուեց և Եփրեմի ուղեկիցներից շատերը ասպիճանաբար Իրանը թողեցին»*[27]:

Չկիսելով պարսիկ պատմաբանի տեսակէտը, Խ.Տ.Գ.-ն շեշտադրում և եզրակացնում է, որ *«Դաշնակցութեան և՛ մասնակցութիւնը Իրանի Սահմանադրական շարժման, և՛ իզումը նրանից, պատահական և տարերային բնոյթ չունէին, երկու պարագային էլ ՀՅ Դաշնակցութեան կամքը արտայայտուած ենք գտնում մարմինների և ժողովների որոշումներում, և պայմանաւորուած չեն անհատներով: Նրանք բխում էին ծրագրային անհրաժեշտութիւնից և ունէին գաղափարական հիմնաւորում»*[28]: ■



Խաժակ Տէր-Գրիգորեան

Օգտագործված աղբյուրներ

1- Եփրեմին ուղղված Ռոստոմի նամակը գրել է 1909 թ.-ի յուլիսի 26-ին, որտեղ մասնաւորապէս ասած է.- « Բոլոր այստեղի (Պոլիս, Դ.Մ.) ընկերների կողմից սրտանց շնորհաւորում ենք քո յաջողութիւնները: Միայն թէ անյարմար պաշտօն է քեզ վիճակել: Լաւ կը լինի, եթէ յեղափոխական խառը դրութիւնը անցնելու լինի և քիչ թէ շատ խաղաղ կեանք ստեղծելու լինի, հրաժարական տաս ոստիկանապետի պաշտօնից...(Եփրեմը միաժամանակ նշանակել էր որպէս ներքին նախարար 1909-ի յուլիսի սկզբներին-Դ.Մ.): (Տես «Ռոստոմ», հրատ. ՀՅԴ- ի, 1979 թ., Բէյրութ, էջ 169-170) :

2- Վարանդեան Մ., նշ. աշխ., էջ 281:

3- Ակնունի Է., «Բողոքի ձայն», 1978 թ., Բ. տպգր., Բէյրութ, էջ 63 :

4- Վարանդեան Մ., նշ. աշխ., էջ 281-282:

5- «Հայրենիք», նս. 3 (409), մարտ, 1960թ., էջ 86-87 :

6- Կառավարութեան կողմից նախկին մուշահիդների զինաթափման գործը ևս յանձնարարել էր ոստիկանապետ Եփրեմին: Բախտիար-դեմոկրատ կառավարութիւնից դժգոհ մուշահիդները Սաթթարի և Բաղերի գլխաւորութեամբ խոյս էին տալիս զինաթափումից: Մուշահիդները դժգոհութեան և ընդդիմութեան վայր էին ընտրել «Աթաբեկ» կոչւող զբօսայգին: 1910-ի օգոստոսի 4-ին իշխանութիւնները 48 ժամեայ վերջնագիր են ներկայացնում մուշահիդներին, որպէսզի զինաթափ լինեն, այլապէս մահաւ են դատապարտուելու: Սաթթար խանի և իշխանութիւնների ներկայացուցիչների միջև բանակցութիւնները անցնում են ապարդիւն. Գերմանիայի լիազօր նախարարի ինչպէսև թուրք դեսպանի միջնորդութիւնը Ռուսաստանի և Բրիտանիայի դեսպանատների կողմից դիտարկուեց որպէս թշնամական քայլ: 1910 –ի օգոստոսի 7-ին կառավարական ուժերը շրջափակեցին Սաթթարի գլխաւորած ուժերին, կրակ բացելով նրանց ուղղութեամբ: Ոստիկանապետ Եփրեմի և հայ ու բախտիարցի զինեալների յարձակման արդիւնքում զբոսայգում դիրքաւորուած 30 մուշահիդ սպանուեց, իսկ 300 հոգի ձերբակալուեց, ինքը Սաթթար խանը միջադէպի ընթացքում ոտքից վիրաւորուեց: →

7- Մինասեան Խ., նշ. աշխ., էջ 77:

8- ԱԳՆ փաստաթուղթ, հ. 6, քաղուած Ռեզա Ազարի Շահրիարի-ի «Փաստաթղթեր Եփրեմի մասին» յօդուածից,(Տես. «Պայման» եռամսեայ հանդէս, թիւ 36, էջ 52:)

9- ԱԳՆ արխիւ, արկղ հ. 12, գործ 1, փաստաթուղթ 171(Պետերբուրգում Իրանի դեսպանատան նամակը ԱԳՆ-ին):(Տես.նոյն տեղում, էջ 47):

10- Քազեմզադէ, «Ռուսաստանը և Բրիտանիան Իրանում», էջ 567:

11- Իւանով, «Իրանի Սահմանադրական յեղափոխութիւնը», էջ 89:

12- Անգլ. « Correspondence, no 160, August 11, 1910»:

→ Սաթթարին ցաւակից քաղաքի ժողովուրդը, սակայն, համարում էին, որ նա չկամութեամբ է մասնակցել զինեալ միջադէպին և միայն նպատակ է ունեցել պաշտպանել մուշահիդների իրաւունքը: Ըստ պատմաբաններ Քեասրաւիի և Մալէքզադէի՝ «Աթաբեկ» զբօսայգու իրադարձութիւնը իշխանութեան գլուխ եկած դեմոկրատական կուսակցութեան քաղաքական մեծագոյն սխալն էր: Նրանք ափսոսում էին առ այն, թէ ինչու Բախտիար- դեմոկրատ իշխանութիւնը մուշահիդներին կանոնաւոր բանակի մէջ չի ընդգրկել: (Աֆարի Ժ., նշ. աշխ., էջ 385-389):

13- «Իրանէ նօ» պարբերաթերթ, 27 հոկտ., 1910թ., հ. 1, էջ 1:

14- Վարանդեան Մ., նշ. աշխ., էջ 296 և 298:

15- Տէր-Գրիգորեան Խաժակ (Խ.Տ.Գ.), « ՀՅ Դաշնակցութեան և պարսկ. Սահմանադրութեան այլասերուած ղեկավարութեան միջև գործակցութեան խզումը», Աթենք, 2001 թ.,էջ 31 :

16- Նոյն տեղում, էջ 32 :

17- Ըստ Ժանետ Աֆարիի, 1910թ –ի աշնանը Վաշինգտոնում Իրանի հաւատարմատար Նաբի օլ Դոլէն խրախուսել է Շուստերին, որպէսզի նա ստանձնի Թեհրանում՝ երկրի ընդհանուր գանձապետի պաշտօն, իսկ Մեջլիսը 1911թ. փետրուարի 2-ին հաստատել է նրա նշանակումը: Հետագային, 1911թ. նոյեմբերի վերջերին Ռուսաստանի իշխանութիւնը Բրիտանիայի հետ համախոհուրդ 48 ժամեայ վերջնագիր են ներկայացնում Իրանի Մեջլիսին, որպէսզի ամերիկացի ֆինանսիստ Մորգան Շուստերին արտաքսի երկրից: Շուստերի ֆինանսական բարեկարգումները, որոնք վայելում էին շատ դեմոկրատների հովանաւորութիւնը, ինչպէսև նրա կողմից ռուսական իշխանութեան Իրանի ներքին հարցերին միջամտելուն ընդդիմանալը, ցարական կառավարութեան զայրոյթն էր առաջացրել. ուստիև ռուսները բրիտանացիների հովանաւորութեամբ պահանջեցին Շուստերի արտաքսումը և հարկադրեցին Մեջլիսին, որպէսզի նախքան նոր փորձագէտների ներգրաւելը խորհրդակցի երկու տիրապետող ուժերի հետ: Այս ճնշումների ներքոյ Շուստերը ի վերջոյ 1912թ.ի յունուարի 11- ին հեռանում է Թեհրանից:(Տես Ժ. Աֆարի, նշ. աշխ.,էջ 432):

18- Ամուրեան Ա., «ՀՅԴ Պարսկաստանում», էջ 161:

19- Տէր-Գրիգորեան Խ., նշ. աշխ., վաւերագիր թիւ 5 (ՀՅԴ Շահստանի կ. կոմիտէի թիւ 1 շրջաբերական), էջ 3:

20- Պատմագրական իր որոշակի դրւագներում ոչ այնքան հայամէտ իրանցի մտաւորական Քեասրաւին, այնուամենայնիւ Եփրեմի վերաբերեալ չի հրաժարւել հետևեալ բնութագրականից.-

« Եփրեմ խանը ազատութեան ընդվզման ամենանշանաւոր հրամանատարներից էր: Այդ մարդու մէջ միատեղուած էին բազում բարութիւններ, քաջութիւն, ձեռներէցութիւն, առաքինութիւն ու գորովանք: Սաթթար խանը, Բաղեր խանը, Եփրեմ խանը և այն քաջարի մարդկանց խումբը, որոնք ազատութեան համար բարձրացած ընդվզման ժամանակաշրջանում երևան եկան և ժողովրդական սէր ու հոչակ վայելեցին, արժանի են ամենաթանկագին մեծարանքների»:

21- Տէր-Գրիգորեան Խ., նշ. աշխ., վաւերագիր թիւ 1 (ՀՅ Դաշնակցութեան Շահստանի կ.կ.-ի կոչը հայ զինուորներին), էջ 16-17:

22- Նոյն տեղում, վաւերագիր թիւ 4 (ՀՅ Դաշնակցութեան Պարսկաստանի Ռայոնական ժողովի որոշումները), էջ 26:

23- Նոյն տեղում, վաւերագիր թիւ 4,էջ 27:

24- Նոյն տեղում, էջ 27:

25- «Դրօշակ», 1913 թ.,հ. 9-10, էջ 149:

26- Տ.Գրիգորեան Խ., նշ. աշխ., էջ 4:

27- Նոյն տեղում, էջ 4:

28- Նոյն տեղում, էջ 32 :

130-ամեայ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը

Կարօ Վ. Մանճիկեան

130-ամեակ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան: Այսինքն՝ մէկ դար և երեսուն տարիներ: 130 տարի առաջ հայութիւնը, իր արևելահայ թէ արևմտահայ հատուածներով, կեռար: Օսմանեան և ցարական կայսրութիւններուն լուծին տակ կքած հայութիւնը, որ 600 և աւելի տարիներէ ի վեր կորսնցուցած էր իր պետականութիւնը, կորսնցուցած էր նաև իր համրանքին աւելի քան կէսը: Կասեցած էր անոր քանակական թէ որակական աճը, և, աւելին, անոր պարտադրուած էր տարագրեալի կեանք վարել ի սփիւռս աշխարհի:

Հայութիւնը, մանաւանդ անոր մտաւորական ու երիտասարդ զանգուածն, ելքեր կ'որոնէին՝ իրենց այս օրհասական վիճակէն դուրս գալու:

Արժանապատուութիւնը տրորուած, քաղաքակիրթ ու պատմական հայ ազգի երիտասարդութիւնը, մշակներ թէ բանուորներ, ռանչպարներ թէ մտաւորականներ, քով քովի հաւաքուած, հնարքներ և ճանապարհներ կորոնէին՝ արիւնի, ամօթի, լացի մրուրը սրբելու հայութեան ճակատէն, փրկելու անոր ոչ միայն արժանապատուութիւնը, այլև անոր կեանքը, ներկան, գոյատևման իրաւունքը… Անոր ապագան:

Շարժած էր հայութեան առնական, քաջարի ու արժանապատիւ բնազդը:

Հայութեան մտաւոր, ապա և ռազմական զարթօնքի դոփիւնները կը լսուէին:

Եւ ահա Թիֆլիսի, Ս. Փեթերսպուրգի, Մոսկուայի և այլ վայրերու տարագիր հայութիւնը ու նաև Երկրի ռամիկ, ռանչպար թէ մտաւորական դասերէն երիտասարդներ, քով քովի գալով, կը կազմէին խայտաբղէտ գաղափարներով թէ վերացական տեսիլքներով, հայութեան կեանքը յեղափոխելու ձգտող խմբակներ՝ իրենց սրտերուն, թէ հոգիներուն մէջ ունենալով Արևմտյան Հայաստանի, օսմանեան լուծին տակ կքած իրենց քոյրերուն ու եղբայրներուն կեանքը յեղափոխելու, փրկելու թէ բարելավելու բորբ կրակը: Հայկական ինքնորոշման խարխափող՝ առաջին քայլերն էին:

Յիշենք անոնցմէ մի քանին. «Միութիւն և փրկութիւն», «Երիտասարդ Հայաստան» և շատ-շատ անանուն խմբակներ:

Եւ ահա մեսիաներու նման ասպարէզ եկաւ Դաշնակցութեան երիտասարդութիւնը: Քրիստափոր Միքայէլեանը, Սիմոն Զավարեանը, Ռոստոմը (Ստեփան Զօրեան), իրենց հետ ունենալով Յ. Արղութեանի, Ա. Դաստակեանի, Յ. Դավթեանի և երկտասնեակ մը բիւրեղեայ միտք ու մտահորիզոն ունեցող, գաղափարական մտաւորականներ, համախմբելով, միատեղելով այդ խմբակները, ծնունդ տուին հայոց պատմութեան գորշ հորիզոնին վրայ, որպէս շողացող արևին՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան:

Այդ ծնունդը մտացածին երկունքի մը արդիւնքը

չէր, այլ տառապեալ հայ ժողովուրդի կեանքէն, սրտէն ու հոգիէն հարազատօրէն բխած, արշալոյսի արևի պայծառ լոյսն էր: Այս հրաշափառ ծնունդին անմիջապէս յաջորդեց գործը: Դաշնակցութեան սուրբ գործը: Դաշնակցականներու սուրբ գործը: «Դեպի Երկիր»: Հայաստանի ու հայութեան ազատագրութեան սրբազան գործը: Ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ վտիտ մի քանի էջերու մէջ սեղմել, ամփոփել 130-ամեայ գործը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան: Դարաւոր պատմութիւն մը: Փառաւոր, լուսաւոր պատմութիւն, մեսիաներու, նահատակներու, մարտիրոսներու թէ հսկաներու սերունդներու պատմութիւն:

Տարիներ թաւալեցան: Զինատար խումբեր մեկնեցին դէպի Արևմտեան Հայաստան, «Դեպի Երկիր»: «Թռէք, հայեր, թռէք դէպի Հայաստան»: Պանդխտութենէն վերադարձած առյուծասիրտ երիտասարդներ, փոխան իրենց գոտիներուն դեղին ոսկիներ, կուրծքներուն խաչկապ կապած էին փամփուշտներով լի գոտիներ, ուսերէն կամ ձեռքերնուն, ուժեղ բազուկներուն՝ մոսին՝ «մարդասիրական» հրացաններ, կը փութային հայրենի տուն՝ Տարօն, Մուշ, Սասուն, Վան-Վասպուրական, Կարին, Խլաթ, Պիթլիս… Բուն Հայաստան:

«Եարիս փոխան զենքս եմ գրկել,
Գիշերն հանգիստ քուն չունեմ»:

Եւ ահա Վան-Վասպուրականի ինքնապաշտպանութեան մարտեր. Խանասոր, Պանք օթման, Խանի, Նեղուզի խումբեր, Սասնո Ա, Բ ապստամբութիւններ, Ռազիի կռիվ, Սերոբ Աղբիւրի, Գևորգ Չաուշի և միւսներուն վարած մարտեր, հայ-թաթարական կռիվներ, աքսոր Սիպիր,

նահատակներու բանակ… Ո՞ր մէկը թուել, ո՞ր մէկը չմոռանալ: Հարիւրաւորներ կը փութային «մատաղ Հայաստանին» ու հայութեան ազատագրութեան արդար դատին: «Ա՜խ, հայրենիք» կանչելով՝ գաղափարի արի զինուորներու արեան զոհաբերումը կը սարսռեցնէր թուրքը: Եւ ահա ան ծրագրեց ամենէ ահաւորը, Հայոց ցեղասպանութիւնը:

Եղան գոյամարտեր, հերոսամարտեր՝ Սասնո, Վասպուրականի, Շապին Գարահիսարի, Մուսա լեռան… Սկսուեց կամաւորական շարժում:

Եղեռնէն երեք տարիներ ետք՝ «Ու վեց դարերու խաւարի վրայ Դրօշ եռագոյն»: Պայծառ արշալոյս, մայիսի 28: Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսեի, Պաքուի ազատամարտերէն ետք՝ նորանկախ պետութիւն. Հայաստանի Հանրապետութիւն: Հողահաւաք ու հայահաւաք: Նորանկախ պետութեան կառուցում ու կազմավորում: Սակայն, ափսոս, հազիւ 3 տարիներ: Ասուպի նման անցան անոնք:

Սփիւռքի հայապահպանութեան գործ: Սպասում լոյսի, սպասում հոյսի...Եօթանասուն տարիներ սպասում անկախութեան լոյսին: Սփիւռքեան դժուարին տարիներ ու զինական պայքար՝ քանդելու արևմտեան թէ արևելեան բռնակալութիւններու բարձրացուցած լռութեան պատերը: Հայկական պահանջատիրութեան զինական պայքար: Ու դարձեալ «Իմացեալ մահու նահատակներ. Լոս Անճելըսէն Քանատա ու Լիզպոն՝ Լիզպոնի նահատակներ»: Աշխարհացրիւ հայութեան բնակած ոստաններուն մէջ ՀՅԴ Հայ դատի գրասենեակներ: Ցեղասպանութեան ճանաչումի երթի անդուլ աշխատանք:

Այս ամէնը ինչպէ՞ս չյիշել: Ու չյիշել 1988-ին սկսած Արցախի գոյապայքարը, որուն դրօշակակիրը, առաջամարտիկը եղաւ ՀՅ Դաշնակցութիւնն իր ֆիդայական խումբերով: Ու նաև Հայաստանի վերանկախացում 1991 թուին, անկախացած ու աղքատացած հայրենիք:

Սպիտակի, Գիւմրիի աւերիչ երկրաշարժը չկրցաւ կասեցնել Արցախի ազատագրական պայքարը: Հազիւ վերընձիւղուած Դաշնակցութիւնը կազմակերպուած իր գաղափարապաշտ երիտասարդներով Արցախ էր արդէն: Ու ան հոն նուիրեց Արցախի ու Հայաստանի «զոհասեղանին» իր ընտրեալները՝ Արթուր Մկրտիչեան, Շահէն Մեղրեան, Պետո, Կարօտ, Վիգէն Ջաքարեան, Միէր Ջուլհաճեան... Եւ նահատակներու փաղանգ մը գնաց հանգչելու Եռաբլուրի սառն հողին մէջ: Անոնք հանդիսացան հայոց նորագոյն պատմութեան նահատակ վկաներու նախակարապետները: Դաշնակցութեան գաղափարի ճամբուն վրայ ինկած նահատակները: Եւ այսօր մենք, 130 տարիներ ետք, հասած ու կանգնած ենք գաղափարական ժառանգութեան մը առջև՝ դիմակայելու հայ ժողովուրդին դէմ յանդիման բարձրացուցած մարտահրաւէրները:

Հայաստանի վերանկախացման առաջին պահէն սկսեալ՝ ցայսօր Դաշնակցութեան երթը միշտ բախեցաւ խորհրդային օրերէն մնացած և մինչև



ՀՅԴ հիմնադիրները

այժմ համենող ապազգայնացման նոր երանգնէրուն, գերազատականութիւն դաւանող խմբաւորումներուն, թէ իշխանաւորներուն: Ամէն ինչ ըրին անոնք՝ ներսէն քանդելու ազգապահպանման բերդի հայաստանեան կեդրոնական աշտարակը:

Վերանկախութեան մարտահրաւէրները բազմապիսի էին: Թուենք մի քանի հատ միայն:

Ա. Ամրապնդում մեր զոյգ հանրապետութիւններուն անկախութեան երթը՝ ապահով սահմաններով, ապահով տնտեսութեամբ, ապահով ժողովրդաընկերային թէ ուսումնական կրթական կեանքով, ամրակայուած բանակով՝ թշնամիներով շրջապատուած հայրենիքի պաշտպանութեան ի սէր:

Բ. Միջազգային ճանաչում հայոց անժամանցելի իրաւունքներուն՝ որպէս

Ճանաչում Հայոց ցեղասպանութեան, հատուցում հայ ժողովուրդին, հայոց խլուած հայրենիքին, պատմական հողին վրայ:

2016-ի Արցախեան քառօրեայ պատերազմին առաջին իսկ րոպեին Դաշնակցութիւնն այնտեղ՝ ճակատն էր՝ պատրաստ օգնելու հայկական բանակին ու զինուորին: Քիչ չէին դաշնակցական կամաւորներուն հայր ու որդի, նոյն խրամատին մէջ պայքարող մարտիկներուն օրինակները: Քառօրեայ պատերազմը աւարտեցաւ: Կորուստ հողի ու կորուստ կեանքերու: Թշնամին տենդագին կը պատրաստուէր պատերազմի:

2018-ի իշխանափոխութենէն առաջ, սակայն, մանաւանդ անկէ վերջ, Դաշնակցութիւնն իր ազգային բնազդով կը տեսնէր, կապրեր վտանգը: Նոր իշխանութիւնները, նոր գայթակղութիւններով, հետևողականօրէն կը քայքայէին հայրենիքին հիմնաքարերը: Բանակը լքուած էր իր ճակատագրին: Ներքին նորելուկ ցեցերուն թիրախը դարձած էր ամէնն, ինչ-որ ազգային էր. ազգային կրթական համակարգը, ազգային եկեղեցին, ազգային միասնականութիւնը, ազգային ընկերային համակարգը, ազգային բանակն ու ամէն ինչ:

Եւ ահա 2020-ի սեպտեմբերին սկսուեց պատերազմը: Դարձեալ Դաշնակցութիւնը առաջնագիծ էր առաջին րոպէէն: Վաշտ վաշտի ետևէ

կը փութային Արցախ: Դաշնակցութեան երեց ու մատղաշ կամաւորները հայրենի բանակին կողքին էին՝ պաշտպանելու Հայաստանի թէ Արցախի սահմանները, հայութեան գոյատևման իրաւունքը, պատիւը: Այս գոյապայքարին հայկական սփիւռքը, Դաշնակցութեան մարմնացումով, ունեցաւ իր ներդրումը: Դաշնակցական կամաւորներ սփիւռքեն միացած էին իրենց հայրենի ընկերներուն: Ու ահա փաղանգ մը նահատակներու: Դաշնակցական նահատակներու, որոնց արիւնը կը խառնուէր, կը միաձուլուէր հայկական բանակի աւելի քան 5000 նահատակներու արեան: Մարտիրոսներ, որոնք Դաշնակցութեան «պարարտ խոյերն» էին՝ Հայաստանի թէ Արցախի զոհասեղաններուն, բագիններուն վրայ մատաղ դարձած:

Սփիւռքն ալ կ'երթար: Ամենուրէք ցոյցեր, ճանապարհներու փակում, Փարիզ, Լոս Անճելըս թէ այլուր... Հայ դատի գրասենեակները գիշեր ու ցերեկ չ'ունէին: Հայկական «տեղեկատուական բանակն» ալ «ռազմի դաշտ»՝ իջած էր հակազդելու թշնամին ապատեղեկատուական փորձերուն: Սակայն հանկարծ... Անձնատուութիւն: Արցախի տարածքի ¾-ի կորուստ: 5000 նահատակներ, հաշմանդամներ... Արցախի բնակչութեան ¾-ը տեղահանուած... Անձնատուութիւն իշխող վարչախումբին և անոր գլխաւորին՝ պրն. վարչապետին ապիկար գործունեութեան որպէս հետևանք:

Այս տողերը, այս էջերը հազիվ թէ բաւեն Դաշնակցութեան 130 տարուայ պատմութեան գլխագիրներու մէկ կարևոր մասը թուելու: Սակայն այս պահուս, տողերուս շարադրման պահուն, Դաշնակցութիւնը և հայութիւնը կանգնած են անձնատուութեան և անոր անմիջական հետևանքներու հարթման հրամայական հանգրուանին: Անձնատուութեան հետևանքներու հաշուեհարդարին,

1965 թ. Ցեղասպանության օրվա առիթով ցույց

Շուշիի ՀՅԴ առանձնակի գումարտակի մարտիկները

թէ սրբագրման հոլի են գալիք տարիները: Դաշնակցութիւնն այս պահուս կանգնած է այդ մարտահրաւէրին առաջ: Դաշնակցութիւնն իր 130–ամեակին կանգնած է իր շալակին բարձած 130 տարուայ կեանքի մը ժառանգութիւնը: Ազատ, անկախ, միացեալ, բարգաւաճ Հայաստանի մը կերտման ժառանգութիւն մը: 130 տարուայ պատմութիւնն որքան ալ դափնեպսակներ դնէ Դաշնակցութեան գլխուն, սակայն անոր ուսերուն կը բառնայ պատմական պատասխանատուութիւն, գաղափարական պատասխանատուութիւն մը: Նախ՝ փրկիլ հայրենիքները, փրկիլ հայութիւնը, ամէն օր արձանագրող «անձնատուութիւններն» ու մանաւանդ վերականգնել ամբողջական հայութեամբ ամբողջական Հայաստանը:

Այս է 130 տարեկան Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: 130 տարուայ փորձով, աւանդով ու ժառանգութեամբ... Դեպի ապագայ: ■

Եթէ պիտի ըլլանք արժանի...

Վրէժ-Արմէն

Կը սկսինք այս 2021 տարին մեր ազգի ու մեր պետութեան առջև ծառացող մարտահրաւէրներով:

Անցնող 2020 թուականը ոչ միայն աշխարհի, այլև մեզի՛ համար եղաւ ահաւոր տարի մը: Չեմ ուզեր վերադառնալ ու խօսիլ կորուստներուն մասին՝ անգամ մը ևս հիասթափութեան և յուսահատութեան չմղելու համար ընթերցողներս: Պէտք է նայինք առաջ ու ջանանք դիմագրաւել այդ մարտահրաւէրները:

Իսկ ի՞նչ մարտահրաւէրներու մասին է խօսքս: Անոնք կը բանաձևեմ երկու գլխաւոր հարցումներով.

ա.- Ինչո՞ւ ենթարկուեցանք այդ կորուստներուն:

բ.- Ի՞նչ ընել իբրև արժանապատիւ ազգ ապրիլ կարենալու համար:

Առաջին անգամ չէ, որ սոյն մտորումները կ'ունենամ, և արդարօրէն այս յօդուածը, երբեմն՝ կրկնութեան գնով, կը վերահաստատէ որոշ համոզումներս: Այսպէս՝ վերևի թիւ մէկ հարցումը կ'ենթադրէ լայն ու խոր ինքնաքննութիւն մը: Այդ «ինքն»ին մէջ կ'իյնանք բոլորս: Չեմ ուզեր այդպէս անորոշ ձգել «բոլորս» ըսելով: Ան կ'ընդգրկէ համայն հայութիւնը՝ Հայրենիքի ու Սփիւռքի (գլխագիր Հայրենիքն ալ ներառելով հայապատկան թէ գրաւեալ բոլոր հայկական հողամասերը), հայութիւնը՝ իր բոլոր խաւերով՝ պետութիւն, կազմակերպութիւններ, եկեղեցի, այլև անոնց մէջ թէ անոնցմէ դուրս ժողովուրդը՝ իր մտաւորականներով, գիտնականներով, մշակոյթի գործիչներով թէ պարզ, հասարակ ազգայիններով, այսինքն՝ ինքզինք հայ դաւանող և իր ազգին ճակատագրով տագնապող իւրաքանչիւր հայորդիով:

Թէ ինչպէ՞ս կը կատարուի նման ինքնաքննութիւն, ինքնին քննարկման նիւթ է: Պէտք է որոնել լաւագոյն բեմը, հրապարակը, հաղորդակցութեան միջոցները՝ բանաւոր թէ գրաւոր, և առիթ տալ վիճելու, բանավիճելու, զիրար համոզելու: Կարևորը՝ կարենալ ի մի բերել ընդհանուրին մտքերը, մաղել, բիւրեղացնել ու եզրակացութիւններու յանգիլ:

Եւ ինչի՞ վրայ պիտի կեդրոնանայ այդ ինքնաքննութիւնը:

Ըստ իս՝ խնդիրը միայն վերջին ամիսներու իրադարձութիւնները չեն, ոչ ալ վերջին տարիներու: Քննութեան առարկայ ըլլալու է ոչ միայն 1991 էն ասդին մեր անցած ուղին, այլ 1915 էն, 1921 էն մինչ օրս երկարող աւելի քան հարիւրամեակը, որպէսզի կարենանք հասկնալ, թէ ի՞նչ ճիշտ բան ըրինք ու ի՞նչ սխալ, ի՞նչ կրնայինք ընել ու չըրինք, ի՞նչ կրնայինք չընել ու ըրինք, և ինչո՞ւ այդպէս եղաւ: Արտաքին ազդակնե՞ր էին միայն պատճառը, թէ՞ կային նաև ներքի՞ն ազդակներ, թերացումներ ու թերիներ, մեղքեր ու մեղանչումներ մեր կողմէ, մեր ղեկավարութիւններուն կողմէ, մեր հասարակութեան կողմէ, մեզմէ իւրաքանչիւրին կողմէ:

Այստեղ կ'ուզեմ փակագիծ մը բանալ ու դիմել կեանքիս

ընթացքին ունեցած բազմաթիւ հարցազրոյցներէս երկուքի զրուցակիցներուս, որ այնքան լաւ բանաձևեր են միայն այս վերջին շրջաններուն վերաբերեալ իրենց միտքերը:

Առաջին խօսողը Գրիգոր Աճէմեանն է՝ ծերունազարդ մտաւորական, որդին մեր մեծ գրողներէն Գուրգէն Մահարիի. «Անցած քառորդ դարում մենք կորցրինք արդիւնաբերութիւն ու գիտութիւն, մշակոյթ ու կրթութիւն: Կորցրինք Սփիւռքը, չկարողացանք դառնալ տարածաշրջանի Իսրայէլը և արատաւորեցինք անկախութեան գաղափարը: Կառուցեցինք շքեղ դղեակներ և հարցականի տակ դրինք մեր ազգային անվտանգութիւնը: Բաց սահմանները ծառայեցրինք մենաշնորհային ներկրմանը և անկանգ արտահոսքին: Քանի՞ լումայ արժէ խօսքի ազատութիւնը, եթէ խօսքն արժէքազրկուել է: Այլախոհներին հետապնդող ԽՍՀՄ-ում այն աւելի արժէք ունէր, քան դեմոկրատական կոչուած Հայաստանում: Կարճ՝ կորցրինք դրականը, որ կար համայնավար հասարակարգում և ժառանգեցինք համայնավար ու շուկայական հասարակարգերի միայն բացասականը» (Հարցազրոյց Գրիգոր Աճէմեանի հետ, 2017-01 /Յունուար-Մարտ/, «ԲԱԳԻՆ»):

Երկրորդը Էդմոնդ Աւետեանն է՝ նոյնպէս կարևոր այլախոհ մտաւորական, ափսո՜ս, արդէն հանգուցեալ, որ վերանկախացման սկզբնական օրերուն՝ 1992ին, Մոնթրէալ կը գտնուէր ու հետևեալը կ'ըսէր. «Թերևս մարդու ամենախոցելի կողմն այն է, որ մարդը միշտ ձգտում է հասարակութեան մէջ գրաւել ինչ-որ մի դիրք, նոյնիսկ աւելի բարձր դիրք, քան ինքն արժանի է: Ինձ թւում է, որ համեստութիւնը յանգում է այն բանի, որ մարդու գրաւած դիրքը միշտ լինում է աւելի ցածր իր իրական կարողութիւններից: Բայց մեծ մասը աշխատում է իր հնարաւորութեան սահմաններից աւելի բարձր դիրքի վրայ, իսկ կուսակցական լինելը շատ է նպաստում այդ բանին: Կարող է մարդը բոլորովին անգրագէտ լինել, բայց եթէ կուսակցական է, կարող է գրաւել բարձր պաշտօն: Երբ արդէն շատ է աճում թիւը յարմարուող մարդկանց, արդէն դառնում է սիստեմ, համակարգ, դառնում է նորմ [չափօրինակ] վարուելաձևի: Եւ սիստեմը, որ հէնց մարդիկ են ստեղծում, յետոյ սկսում է ճնշել մարդկանց: Սովոր ենք ասել, թէ մենք այսպէս ենք մեզ պահում, որովհետև

այսպէս է պահանջում սիստեմը, բայց մոռանում ենք, որ մե՛նք ենք այդ սիստեմը ստեղծել» (25 տարի ետք – Անմոռանալի ասուլիս մը Էդմոնդ Աւետեանին հետ, 2017-12-25 – 2018-01-01, «ՀՈՐԻԶՈՆ» / «Հորիզոն գրական»):

Ասոնք վերյիշեցի պարզապէս, որպէսզի հարցերուն նայելու մեր սովորական եղանակէն անդին անցնինք: Ոնէ մէկը չեմ մեղադրեր այստեղ, նպատակս այդ չէ, որովհետև եթէ մեղադրանքներու դիմեմ, կրնամ սկսիլ սեփական անձէս ու ես ինծի հարց տալ, թէ իբրև լոկ «զինուոր» կամ «հրամանատար»՝ իմ ղեկավարած աշխատանքներուս ընթացքին միշտ գտնուած եմ պահին անհրաժեշտ խստապահանջութեան ու հետևողականութեան վրայ:

Գանք հիմա երկրորդ մարտահրաւէրին, որ կը վերաբերի մեր ընելիքներուն:

Անմիջապէս ըսեմ, որ որևէ ճանապարհային քարտէս չէ, որ կը գծեմ: Նպատակս է արծարծել մեր գործելակերպը, որուն ճիշտ պատկերացումով միայն կրնանք հարթել խոչընդոտները, ճամբայ բանալ մեր գալիք երթին առջև:

Մեր հաւաքական կեանքի այն բոլոր մարզերուն մէջ ուր կարողացած եմ ներդրումս ունենալ, չեն պակսած պայծառ գաղափարները, նորարարական մօտեցումները, մեր բիւր կարիքներուն հասնելու ցանկութիւնը: Ինչ որ նկատած եմ, սակայն, և ինչ որ դժուարութիւն յարուցած է միշտ, կրնամ ամփոփել քանի մը կէտերու մէջ՝

- «Ծրագրէ գործդ, գործէ ծրագիրդ» կարգախօսին նկատմամբ թերահաւատութիւն մը կամ անտեսում մը.
- հետևողականութեան պակասը, այսինքն՝ միշտ կարճ վազքի համար ճամբայ ելլելը՝ փոխանակ երկար վազքի, որ երկար շունչ, համապատասխան գործիքներ ու հեռուն տեսնելու ունակութիւն կը պահանջէ, մանաւանդ դրօշարշաւին փայտիկը ճիշտ պահուն յաջորդ վազողին ձեռքը հասցնելու յանձնառութիւն.
- ճիշտ դերակատարը ճիշտ դերին մէջ դնելու անկարողութիւնը.
- գործէ մը հրաժարիլը՝ մարդուժի կամ նիւթուժի պակասը պատրուակելով՝ փոխանակ այդ մարդուժն ու նիւթուժը երկար ժամանակի վրայ պատրաստելու կամքը ցուցաբերելու.
- ուրիշներու փորձառութենէն օգտուելու և սորվելու տրամադրութեան բացակայութիւնը.
- փոքր ու անկատար արդիւնքներով խանդավառուիլն ու գոհանալը՝ փոխանակ միշտ լաւագոյնին ու կատարեալին ձգտելու.
- մեր լեզուին, մեր մշակոյթին և մեր պատմութեան հանդէպ անփութութիւնը, անոնց տիրապետելու, անոնցմով ապրելու անկամեցողութիւնը.
- քաղաքականացման չգոյութիւնը, նոյնիսկ քաղաքականանալու հանդէպ ընդդիմութիւնը.
- հաւատքի պակասը, հասարակութեան ծառայելը իբրև հաճոյք ու զբօս կատարելը՝փոխանակ իբրև նուիրում ու յանձնառութիւն կատարելու.
- յաճախ իբրև «ես» գործելը՝ փոխանակ իբրև «մենք»ի:

Այս ամենը կրնայ ոչ ամբողջական թւում մը ըլլալ այն մտահոգութիւններուն, որ ունիմ, ունինք, կ՚ունենանք ի տես մեր երկրի ու մեր գաղթօճախներու դժխեմ վիճակին:

Կրնանք սրբագրել, կրնանք բան մը փոխել՝ ազգ կոչուելու իրաւունքը ունենալու, արժանապատի՛ւ կեանք ապրող ազգ ըլլալու համար:

Շատեր չեն հաւատար, որ կրնանք: Ես չեմ ուզեր այդքան յոռետես երևիլ ու ձեռնթափ ըլլալ: Չեմ ուզեր, որ ըլլանք:

Աւարտեմ այս զրոյցս՝ անգամ մը ևս վերադառնալով Գրիգոր Աճէմեանի հետ ունեցած հարցազրոյցիս: Ան կը պատմէ դրուագ մը Գուրգէն Մահարիի կեանքէն, որ շատ խօսուն է, և որ վերևը մէջբերուած հատուածէն մէկ պարբերութիւն առաջ է: Պատասխանելով հետևեալ հարցումիս՝ «Ինչպէ՞ս կը բացատրէք ձեր հօր հանդէպ ցոյց տրուած անարդար կեցուածքները: Արդեօք վարչաձեւն էր մեղաւորը, անոր հլուհպատակ ծառաները, թէ՞ վարչաձևէն անկախ կային նաև ազգային ախտաւոր երևոյթներ, որոնց պատճառաւ այդքան զոհ տուինք: Ինչպէ՞ս կը դատէք 70 տարուան խորհրդային ժամանակաշրջանը», ան կը պատասխանէ. «Մահարու նկատմամբ այլ վերաբերմունք լինել չէր կարող, որովհետև, մեծ հաշուով, նա գրական այլ աշխարհի մարդ էր: Նա չէր տեղաւորուում սոցիալիստական ռէալիզմի սահմաններում և մնաց խորթ Ստալինից Բրեժնև տասնամեակներում: Նրա հակադաշնակցութիւնն անգամ ունէր ազգային արմատներ: ՀԳՄ վարչարարներին նա նոյնպէս «ձեռք չէր տալիս», քանի որ խախտում էր նրանց գոյատևմանն անհրաժեշտ մեռեալ ճահիճը: Գրողների ճնշող մեծամասնութիւնը սպասում էր յարմար պահի՝ իր քէնը Մահարուց հանելու համար՝ վերջինիս գրախօսականների ու յօդուածների, հումորիստական ու երգիծական կսմիթների համար: Դա բնորոշ էր խորհրդահայ գրական աշխարհին և կապ չունէր «ազգային ախտաւոր երևոյթների» հետ: Այդ ձևակերպման հետ համաձայն չէր լինի և Մահարին: «Այրուող այգեստանների» դատապարտման թէժ օրերին ողբերգական Կ. Պասմաճեանը հանգստացրել է նրան՝ «հոգ չէ, որ ձեր արժէքաւոր, մարդկային, հարուստ մատիտով ծառայում էք անարժան, անմարդկային և աղքատ ժողովրդին… Այո՛, իրողութիւն է սա...», և ստացել պատասխան. «Սիրելի՛ Կարիկ, հայ ժողովուրդը արժէքաւոր, մարդկային, հարուստ ժողովուրդ է, և ես ուրախ եմ, որ իմ գրչով ծառայում եմ նրան: Այն, ինչ կատարւում է իմ շուրջը, հայ ժողովրդի հետ ոչ մի կապ չունի: Այդ ամենը բխում է գրական անառողջ շրջանակների ցաւալի սադրանքների պղտոր ակունքներից»: Կարիք կա՞յ նշելու, որ ընդգծումը մերը չէ...»:

Հեռանա՛նք, ուրեմն, գրական թէ այլ շրջանակներու այդ պղտոր ակունքներէն, մենք մեզ մաքրե՛նք անոնց կեղտոտ ջուրերէն: Կրնանք: Կը հաւատամ, որ այո՛, կրնանք: Ա՛յս հաւատքով ալ դիմաւորենք Նոր տարին:

Ռուսում

Դիպլոմատ հրէշներ

Հասարակական կեանքի մէջ պատահում են այնպիսի անակնկալ դժբախտութիւններ, այնպիսի ահռելի չարիքներ, որ շշմեցնում են ամենամեծ յոռետեսին անգամ .... Դժբախտաբար, մենք տեսնում ենք, որ մեր ներկայ կեանքի մէջ յոռետեսի երևակայած սահմանն էլ ոչնչանում է, և չարիքը տարածում է իր թևերը աւելի հեռու ու հեռու...

Ամէն անգամ, երբ առիթ ենք ունեցել խօսելու եւրոպական դիպլոմատիայի մասին, որը պաշտօնապէս իր «հովանաւորութեան» տակ է առել Արևելքի քրիստոնեաներին, մենք, հեռու որևէ յոռետեսութիւնից, յենւած միմիայն պարզ իրականութեան վրայ, պնդել ենք միշտ, որ ոչ մի դիպլոմատի համար գոյութիւն չունին ո՛չ քրիստոնէական, ո՛չ մարդասիրական, ո՛չ քաղաքակրթական և ո՛չ այլ նոյնանման նպատակներ: Մենք ընդունում էինք, որ դիպլոմատիան կարող է ոչ թէ միայն չօգնել մեզ, անտարբեր մնալ, այլ մինչև իսկ վնասել մեզ, աշխատել կանգնեցնել ծնունդ առած շարժումը, եթէ այդ իր շահերին վնասակար նկատի: Բայց մենք և մեզ հետ նոյնիսկ ամենամեծ յոռետեսները դժուար թէ կարող էինք երևակայել, որ քաղաքակիրթ աշխարհի «քաղաքակիրթ» ներկայացուցիչները հասնէին անխղճութեան, տմարդութեան ու լրբութեան այն ծայրայեղ աստիճանին, որի վրայ նրանք կանգնած են այժմ, և ոչ թէ միայն մեր, այլև ամբողջ Արևելեան հարցի վերաբերմամբ:

Եւրոպական դիպլոմատները «գթութեան քոյրերի» նման շրջապատել են «հիւանդ մարդուն» և, ամենաաններելի միջոցներ գործի դնելով, աշխատում են պահպանել նրա նեխւած կեանքը.«I homme malade»-ը (հիւանդ մարդը) դարձել է «enfant gâté»(երես առած երեխայ), որին պահում, պահպանում, շոյում, փայփայում են ամէն կողմից: Հոգատար դիպլոմատները ամենայն յաջողութեամբ մրցում են իրար հետ այդ ասպարեզում: Մէկն իր արջի թաթի զօրութեամբ միջոց է տալիս նրան կոտորելու, ջարդելու տասնեակ հազարաւոր հայեր՝ երկրի «խաղաղութիւնը» վերականգնելու համար: Միւսը իր հաստ գրպանն է բաց անում և առաջարկում իր ոսկիները՝ տնտեսական բացարձակ քայքայումից ազատելու համար, երրորդի նախաձեռնութեամբ ընդհանուր ճնշում են գործ դնում ու սպառնալիքներ կարդում ապստամբ կրէտացիներին: Ճնշում են Յունաստանին, որ անուղղակի կերպով օգնում է իր արիւնակից եղբայրներին, ճնշում են Բոլգարիային, որ չի խանգարում մակեդոնական շարժմանը.... Բայց ոչ մի տեղ, ոչ մի պարագայում եւրոպական դիպլոմատը չարտայայտեց իր էութիւնը այնքան ստոր, զզւելի և կոպիտ կերպով, ոչ մի տեղ նա ցոյց չտուեց իր բարոյական այլանդակութիւնը այնքան շօշափելի փաստերով, որքան Վանի և ընդհանրապէս Վասպուրականի վերջին աղետալից դէպքերի ժամանակ:

Մուտք գործելով Տաճկահայաստան, շփւելով յաճախակի վայրագ կառավարութեան հետ՝ դրանք կարծես թէ մոռանում են իրենց ծագումը, մոռանում են այն միջավայրը, ուր ծնւել ու սնւել են, մոռանում են այն դարը, որի մէջ ապրում են: Առանց խղճահարութեան, առանց ամօթի, բացարձակ կերպով պաշտպան հանդիսանալով սուլթանի կառավարութեան՝ դրանք ամենանենգ ճանապարհներով ստիպում են յեղափոխական գնդերին հեռանալ քաղաքից: Դրանք մատնում են այդպիսով անզէն ժողովրդին վրէժխնդիր զինւորների ու վայրագ խուժանի կատաղութեան, իսկ յեղափոխական գնդերին՝ Պարսկաստանի ճանապարհի վրայ պատրաստւած զինւորների և համիդէականների անհամար բազմութեան:

Կոտորածի այդ սարսափներից յետոյ նրանք դեռ համարձակւում են ամբողջ յանցանքը բարդել հայերի վրայ, մեղմացնել կառավարութեան և բաշիբոզուկների վոհմակների գործած գազանութիւնները, ուրանալ քաղաքի ոմբակոծութիւնը, քաղաքի և շրջակաների աւերիլը, թալանիլը, հազարաւոր զոհերի թիւը... Եւ այդ դեռ բաւական չէ, նրանք յանդգնում են հանրագրութիւններ պատրաստել հայերի կողմից, ստիպում են ստորագրել անճարացած, ահաբեկւած ժողովրդին, իբր թէ նա ինքն է մեղաւոր, որ իրեն կոտորել են, թէ նա շնորհակալ է կառավարութիւնից, որ կոտորածը չի շարունակւում... Սա արդէն չափից դուրս է, այս դէպքում մարդ դժւարանում է հաւատալ, թէ դրանք մարդկային արարածներ են և ոչ թէ հրէշներ՝ մարդկային կերպարանքով...

Վասպուրականի կոտորածի ահռելիութիւնը անյայտ մնաց շատ շատերից. դիպլոմատները կարող են դրանով պարծենալ: Բայց ոմբակոծւած տները, արիւնաներկ փողոցները, անթաղ դիակները, մոխիր դարձած գիւղերը դեռ մնայուն վկաներ են սուլթանի գազանութիւնների և դիպլոմատիայի լկտիութեան: Անօթի, մերկ, բոբիկ մնացած բազմաթիւ կենդանի էակների խուլ հեծեծանքը, առևանգւածների, բռնաբարւածների ապարդիւն ճիչերը, հազարաւոր անմեղ զոհերի բարձրաձայն անէծքը... այս բոլորը դառը բողոք են Եւրոպայի հասարակական դատաստանի առաջ՝ իր ներկայացուցիչների տմարդութիւնների դէմ:

Վասպուրականն աւերւեց. սուլթանը, Շաքիրը, Սաադէտին և այլ փաշաներ հրճւում են: Հրճւում են և դիպլոմատները. նրանցից իւրաքանչիւրը հասաւ իր նպատակին: Իսկ մե՞նք...

Ճիշդ է, մենք կրեցինք սոսկալի հարւած, անհամեմատ աւելի զոհեր տւինք, քան մեր թշնամին, կորցրինք մեր լաւագոյն ընկերներից շատերին, բայց մեր ժամանակաւոր պարտութիւնը, մեր թշնամիների հրճւանքը մեզ չեն վհատեցնիլ: Տասնեակ հազարաւոր դժբախտների յուսահատական ճիչերը պահանջում են մեզանից արդար վրէժխնդրութիւն, մեր հարիւրաւոր նահատակւած ընկերների ստւերները կոչում են մեզ դէպի անձնազոհ գործունէութիւն:

«ԴՐՕՇԱԿ», 15 օգոստոս 1896
Թիւ 19
Հոդվածը հրապարակվում է փոքր կրճատումներով

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՏՈՒՆ
ԴՐՕՇԱԿ